

ՊՐՈՑ. Վ. Ն. ՎԵՐԽՈՎՍԿԻ

Ք Ի Մ Ի Ա

ԳԼՍԱԳԻՐԻՔ ԿՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԳՊՐՈՑԻ ՅՈՒՆԻՈՐԳ ԳԱՍՍՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ԶՈՐՐՈՐԳ ՀՐԾՏԱՐԸ ԿՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ
ՅԵՐԵՎԱՆ

ՀՐԾՏԱՐԸ ԿՈՒԹՅՈՒՆ
1 9 3 8

30 JAN 2010

ՊՐՈՑ. Վ. Ն. ՎԵՐԵՈՎՍԿԻ

Ք Ի Մ Ի Ա

ԴԱՍԱԳԻՐԲ ՎՈՋ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ԴՊՐՈՑԻ ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ

ՉՈՐՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԵՐԵՆԻ 5-ՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԻՑ

Ռեազիբը հաստատված է ՌեհմՍՀ Լուսնադիմաժի կողմից



Գ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ՅԵՐԵՎԱՆ 1938

Դասագիրքը կազմելիս հեղինակն առաջնորդվել է Համկոմկուսի (բ) կենտրոնի տարրական և միջնակարգ դպրոցի վերաբերյալ վարչապետի և աշխատել է ալ սխառեմատիզացիայի յենթարկված հանրակրթական գիտելիքները լրակատար շրջան (Դասագիրքը կազմված է Վ. Ա. Փեգալովայի |Յա. 9. Որդակալայի| և նկարիչ Յու. Դ Սկալդինինի մասնակցութայն):

Դասագիրքը յենթադրում է, վոր դասընթացը պետք է մշակել դասարան-լարրատորիայում արած փորձի հիման վրա՝ դասառվի անմիջական դեկալարութայնը: Դասագիրքը դիտավորապես պետք է ծառայի դասարան-լարրատորիայում ձեռք բերած գիտելիքները և ունակութայններն ամրադրնգելուն:

Դասագրքում համառոտ կերպով նկարագրված են նվագագույն աշխատանքները, վորոնք մատչելի յին ամենահամեստ լարրատորիա ունեցող յուրաքանչյուր դպրոցի:

Տեսական նյութի բացատրութայն մեջ հեղինակն ախատել է յուսափելի զորմատիզմից՝ բոլոր հիմնական որենյներին կոնկրետ նախագրայներ տալով: Նյութը զասավորված է այնպես, վոր աշակերտութայն գիտելիքները դարդանան և աստիճանաբար ել ավելի բարձր աստիճանի վրա դրվեն:

Տեսական նյութը գտնվում է արորատոր աշխատանքների և արտադրութայն հետ անմիջական կապակյութայն մեջ, բայց արտադրութայնը չի յենթարկված:

Այդ նյութը հնարավորութայն է տալիս աշակերտութայնը բնութայն մեջ կատարվող պրոցեսները մատերիալիստորեն բմբնելու:

Յենթադրվում է, վոր առանձն գեպքերում դասալանդումը կարող է տարվել հետազոտական մեթոդով և այդ դեպքերում նյութը զասավորվում է համապատասխան ձևով:

Դասագրքում արված են յերկու տեսակի հարցեր. տեքստում տրված են ախակիսի հարցեր, վորոնք ստիպում են սովորողներին ավելի խորթ թախանցել շարադրած նյութի մեջ (յերբեմն դետալորյալ կերպով տրված են գովարն հարցեր): Երկ պարագրաֆների ու գլուխների վերջում հարցերը արված են անցածը կրկնելու համար:



11-2833299

Բացի հարցերից, դատադրքում տրված են մի շարք վարժություններ, ֆորմուլներ և հավասարություններ՝ հաշվելու և կազմելու համար, այլև երգերի մեծաթիվը՝ կրող մի քանի ինդիքներ:

Դատադրքի բարեփոխման ժամանակ տեքստում՝ թվերի և սոցիալիստական շինարարության այլալիքների մեջ մի շարք մանր ուղղումներ և ճշտումներ են մտցված:

Անհնգրադ 1957 թ.

Պ Ր Ո Ց. Վ. Վ Ե Ր Խ Ո Վ Ս Կ Ի

I. ՆՅՈՒԹԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՓՈՒՍԱՐԿՈՒՄԸ

Մեզ շրջապատող աշխարհի բոլոր առարկաները բազկացած են զանազան նյութերից: Ցերկաթ, ապակի, ծառ, շուր, շաքար և այլն, սրանք բոլորն էլ նյութերի որինակներ են:

Քիմիան դրադվում է նյութերի և նրանց փոխարկման ու սուսմասերությունների: Ուստի և քիմիայի ուսումնասիրությունը սկսելիս նախ և առաջ մենք պետք է կանգ առնենք այն հարցի վրա, թե ինչպես են տարբերում ու ճանաչում նյութերը:

1. Նյութեր. Նյութերը տարբերում են իրարից իրենց հատկություններով — գույնով, հոտով, համով, տեսակարար կշռով, քիչ թե շատ պնդությունով, դժվարահալությամբ, ցնդելիությամբ և այլն: Որինակ՝ նկարագրելով շաքարի հատկությունները, մենք կարող ենք ասել, վոր նա կարծր, փխրուն, սպիտակ գույնի, քաղցրահամ, անհոտ, ջրում լավ լուծելի նյութ է, ջրից ծանր է, տեսակարար կշիռն է 1,58, տաքացնելիս գորշագույն և դառնում է այլն:


Վորպեսզի ծանոթանանք վորեւ նյութի հատկություններին, անհրաժեշտ է այդ նյութը վերցնել մաքուր վիճակում, վորովհետև կողմնակի նյութի ամենաչնչին խառնուրդն անգամ կարող է վորեւ կերպ փոխել նրա հատկությունները: Որինակ՝ մաքուր շուրը թափանցիկ, անհամ և անգույն է, բայց յիթե մի բաժակ ջրի մեջ մի կաթիլ կաթ ավելացնենք, շուրը կպրտորվի: Ցեթե ջրի մեջ մի կաթիլ թանաք կաթեցնենք, շուրը՝ կնեղվի: Խիսի նի (քիմաքիմա) շատ հնչին քանակությունից շուրը դառնում է ստանում: Այդ բոլորը կլինեն վոչ թե ջրի հատկությունները, այլ խառնուրդների:

Վորոչ զեղքերում մենք խսկույն նկատում ենք, վոր մեր

առջև յեւած նյութը մաքուր նյութ չի, այլ զանազան նյութերի խառնուրդ և ներկայացնում:

Վորպես որինակ վերցնենք գրանիտը: Նրա մեջ մենք նկատում ենք գաշտային սպառի վարդադույն մասնիկներ, կվարցի կիսաթափանցիկ բյուրեղիկներ և փայլարի մութ գույնի փայլուն թերթիկներ: Գրանիտն անհամասեռ է:

Վորոչ զեպքերում սակայն նյութի անհամասեռութունն իսկույն չի նկատվում, բայց կարելի չե յերևան հանել զանազան միջոցներով: Այսպես, որինակ, կաթի անհամասեռութունը կարելի չե յերևան հանել, յեթե այն վորոչ ժամանակ թողնենք հանգիստ վիճակում, այդ ժամանակ կաթի յերեսին սերի խիտ շերտ և հալաքլում: Ռըրենն կաթն անհամասեռ է: Կարելի չե սպառի նաև միկրոսկոպով: Միկրոսկոպի տակ շատ լավ յերևում է, վոր կաթը բազկացած և հեղուկից, վորի մեջ լողում են յուզի գնդիկներ (նկ. 1):



Նկ. 1. Կաթն մանրադիտակի տակ:

Վորեկ փոշու անհամասեռութունը կարելի չե յերևան հանել փոշին ջրի մեջ ածելով ու թափանարելով: Յեթե փոշու մեջ ջրից թեթև ու ծանր նյութեր լինեն, այդ դեպքում հեղուկը հանգիստ վիճակում յիզած ժամանակ ծանր նյութերը կնստեն հատակին, իսկ թեթևները կլողան հեղուկի յերեսին: Յեթե փոշու մեջ կան լուծվող և չլուծվող նյութեր, այն ժամանակ չլուծվող նյութերը ջրի հետ

թափանարելուց հետո պղտորութուն կառաջացնեն, իսկ լուծվող նյութերը՝ թափանցիկ լուծույթ: Որինակ պղնձաբջառու սալիս և կապույտ լուծույթ, կիրակրի ազր՝ անգույն լուծույթ: Վերջին զեպքում ջրում լուծված նյութերն անստասեռի չեն: Լուծված նյութը յերևան հայնելու համար, ջուրը փոշու հետ թափանարելուց հետո, անց են կացնում ճակրակին անասինձ¹⁾, այսպես կոչ-

¹⁾ Գրեյու և այլոքի տարական թուղթը իսթային և այլ սոսնձող նյութերով ստանձում են և թուղթը դանձում է ալկիլի խիտ և թանաք ու ներկ չի անցկացնում:

ված քամիչ թղթի միջով — Խառնում են (նկ. 2) և սաացված թափանցիկ հեղուկը — Ֆիլտրատը — յետացնում են, մինչև վոր նա ամբողջովին գաղտեխանա:

Յեթե այդ ժամանակ ամանի մեջ պինդ նյութ մնա, այդ նշանակում է, վոր նյութը լուծված և յեղել գոլորշիացրած հեղուկի մեջ:


Վերը թվածներից բացի, կան նաև մի շարք այլ միջոցներ՝ վորեն նյութի անհամասեռութունը յերևան հանելու համար:

Այն նյութերը, վորոնց մեջ վոր մի յիզանակով հնարավոր չի լինում առանձին մասնիկներ, փոքրիկ կաթիկներ և ընդհանրապես՝ վոր նույնատեսակ մասնիկներ նկատել, այդպիսի նյութերը կոչվում են համասեռ նյութեր:

Յեթե նյութը համասեռ է, այդ դեպ չի նշանակում, վոր նյութը գուտ (մաքուր) է: Չարք, վորի մեջ լուծված են շաքար կամ աղ, միանգամայն թափանցիկ և ու համասեռ բայց այդ գուտ ջուր չի, այլ խառնուրդ է: Չուս կար և միայն այն նյութը, վոր կողմնակի վոր մի խառնուրդ չի պարունակում: Չուտ նյութն ունի իր բնորոչ մեայուն (հասաստուն) հասկարյուններ, վորոնցով և կարելի չե այն ճանաչել ու տարբերել մյուս նյութերից:

Նյութը բնորոշող ամենակարևոր հասկարյունների թվին են պատկանում այն հատկութունները, վոր կարելի չե չափել, ինչպես անսահարար կշիռը, յիսման շերմաստիճանը և հալման շերմաստիճանը:


2. Նյութերը գեղու մի բանի յեղանակներ, վորոնք կիրառվում են օեթնիկայում: 1) Յիլարելը (քամելը), Լաբրատորիաներում պղտոր հեղուկները ֆիլտրում են, ինչպես արդեն ասված է, ծակոտկեն թղթի միջով: Արդյունաբերության մեջ ոգտվում են ալկիլի զեմացկուն նյութերով — զանազան տեսակի գործվածքներով: Գործարանային ֆիլտրը ցույց և արված 3-րդ նկարում:



Նկ. 2. Հեղուկի քածելու հեղուկն ամում են ձողիկի վրայով

2) Պարզելը. Յեթե պղտոր հեղուկը յերկար ժամանակ թողնենք հանգիստ վիճակում, այդ դեպքում պղտորութունն աստիճանաբար նստում է հատակին, իսկ հեղուկը վերևից բուրբուկին պարզվում է: Պարզածը կարելի չե ածել այլ ամանի մեջ: Այս յեղանակով հաճախ ողտվում են արաադրության մեջ:

3) Թափում. Հեղուկներն իրենց մեջ լուծված նյութերից բաժանելու համար բարձր են, այսինքն գոլորշիացնում են և սպա գոլորշին սառեցնում:




▲ Փորձ. Դասաովի պտարաստած պղտոր ու գունավորած ջրից մի փոքր մասը ֆիլարեցեք: Ֆիլտրը պահում է պղտորութունը, իսկ լուծված ներկն անց է կացնում:

Քամած ու գունավորած ջրից մի քեչ ածեցեք 4-րդ նկարում պատկերված սարքի կողմի մեջ: Կոլբն ամբարջեք շտատիլի վրա, իսկ կոլբն հետ միացված փորձանոթն ընկղմեցեք սառը ջրով լի բաժակի մեջ: Փորձանոթի ընկղմած կող լցանք կողքից անցք պետք է ունենա՝ ողջ գուրս դալու համար: Կոլբի մեջ յեղած գունավոր ջուրն այնքան տաքացրեք, վոր փորձանոթի մեջ քեչ

նկ. 3. (Կտրվածքը): Ֆիլարեք գործարանային մասշտաբով կտորի միջով, վոր դրված է ցանցաձև միջնորմի վրա: Ֆիլտրի միջով անցնող հեղուկը ստորաբար դուրս են հանում պոմպով: Այդ ժամանակ միջնորմի ճնշման տակ հեղուկը քամոցի միջով ավելի արագ է անցնում:

քանակությամբ մաքուր բուրած ջուր հավաքվի: Ներկը մնում է կոլբի մեջ: ▲




Նկ. 4. Ջրի թորելը:

Նկ. 5. Ջրի թորելը Լեբիեի սառնարանով:

5-րդ նկարում պատկերված է քիմիական լաբորատորիաներում ջուրը թորելու համար գործածվող գործիքը: Այդ գոր-

ծիքը բաղկացած է A կոլբից, վորի մեջ յեռացվում է հեղուկը, B սառնարանից, վորի մեջ սառեցվում են գոլորշիները, և D ընդունարանից, վորտեղ հավաքվում է թորած հեղուկը:

Սառնարանը բաղկացած է ներքին B խողովակից, վորի միջով անցնում են գոլորշիները, արտաքին B խողովակից, վորի միջով բաց է թողնվում ջրի հոսանք, վոր սառեցնում է ներքին



Նկ. 6. Թորման կուր (կտրվածքը). A—կաթսան է, տեղավորված կրակատեղում: X—ծխանցքեք. K—ջրաչափ խողովակ. Ե—ջուր ածելու անցքը. B—կաթսայի կափարիչը, վոր ամբարջվում է հեղուկներով (БОЛТАМИ), 3—պարուրակն է (ЗМЕЕВИК), վոր ընկղմված է B անոթի մեջ, վորի միջով անցնում է A խողովակով դուրս յեկող սառը ջուրը:

խողովակը: Ներքին խողովակի ծայրին հազցրած է Г կցորդ անոթը, վորը հեղուկն ուղղում է դեպի D ընդունարանը:

Մեծ քանակությամբ հեղուկ թորելու համար ողտվում են պղնձյա մեծ կաթսայով, կամ այսպես կոչվող բարձան կուրով (նկ. 6), վոր տաքացվում է կրակատեղում: Ցրտարանի դերն այստեղ կատարում է պարուրած ձուած, անագից շինված կամ ներսից անագով պատած (կլայեկած) խողովակը, այսպես կոչված գալարքը, վոր սառեցվում է ջրով:

Կ Ր Կ Ն Ո Ղ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչպես են տարբերվում նյութերը:
2. Ի՞նչ գույնի յե լուսամուտի աղակին:
3. Հողը համասեռ է, թե վոչ:
4. Ի՞նչպես են գտնում նյութերը:
5. Ի՞նչպես է կոչվում միանգամայն գուռ ջուրը և Ի՞նչպես են ստանում:

3. Նյութերի փոխարկումը: Նյութերի հետ կարող են տեղի ունենալ զանազան փոփոխություններ: Այդ փոփոխությունները կարելի չեն դիտել հետևյալ փորձերը կատարելով:

▲ Փորձեր: Կատարեցե՛ք ստորև բերված այն փորձերը, վորոնց համար գպրոցում համապատասխան նյութեր կան:

1) Սպիրտայրոցի բոցի վրա ուժեղ կերպով տաքացրե՛ք ապակյա խողովակի կամ ձողիկի հախճապակի կրի կտոր և ապա թողե՛ք, վոր պտղեն: Դրանցե՛ք անդի ունեցող յերևույթը և ուշադրություն դարձրե՛ք այն բանի վրա, վոր պտղելուց հետո նյութերն անփոփոխ մնացին:

2) Ունեկիով կամ պինդնետով՝ շիկացրե՛ք պղնձյա թիթեղը: Դանակով քերեցե՛ք պղնձի վրա առաջացած կորկը (окалина, налет) թղթի վրա և նորից շիկացրե՛ք ու դարձյալ քերեցե՛ք: Այդ դործողությունը կրկնեցե՛ք 2-3 անգամ: Յեթե այդպես շատ անգամ կրկնե՛ք, այն ժամանակ կարելի չե՛ մտադրյա ամբողջ թիթեղը փոխարկել մուգ գույնի փոշու: Այդ փոշին կամ կորկափշրանքը, ակներև ե՛, վոր նման չի պղնձին: Այդ նոր նյութ ե՛ Գլինձը փոխարկվեց կորկափշրանքի:

3) Ունեկիով բռնելով, տաքացրե՛ք մի կտոր անագաթուղթ (որինակ, այն անագաթղթից, վորով կանֆետ և թեյ են փաթեթում), մի կտոր մաղնիզիումի ժապավեն, շաքարի մի քանի շատ փոքրիկ կտորներ, դնելով այն յերկաթյա թիթեղիկի վրա (նկ. 7): Բոլոր դեպքերում դուք նկատում ե՛ք նոր նյութի առաջացում:



Նկ. 7 Շաքար տաքացնելը յերկաթյա թիթեղիկի վրա:

4) Փորձանոթով քիչ քանակությամբ պարզ կուշուր գերցրե՛ք և նրա մեջ, խողովակի միջով, արտաշնչած ող փչեցե՛ք (նկ. 8): Ինտղիտություն դասրթացից դուք դիտե՛ք, վոր արտաշնչած ողի մեջ ամփաթիւ. դադ կա՛: Կրաշուրը պղտորվում ե՛: Այդ պրտորումն առաջանում և այն պտաճառով, վոր ջրում լուծված կրից և ամփաթիւ. դադից նոր նյութ ե՛ առաջանում: Այդ ջրում չլուծվող, սպիտակ, կողճանման փոշի չե՛, վորը պրտորում ե՛ ջուրը:


5) Փորձանոթի մեջ լցրե՛ք դասառվի պատրաստած յերկու լուծույթ և դիտեցե՛ք նոր նյութի առաջացումը: ▲

2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ փորձերի ժամանակ վերցրած ոչութերի փոխարեն ստացվեցին նոր նյութեր, նոր հատկություններով, վորոնք նման չեն վերցրած նյութերին: Այդպիսի յերևույթները կոչվում են քիմիական յերեվույթներ կամ նյութերի քիմիական փոխարկումներ:

Քիմիական յերևույթների ժամանակ նյութերը կորցնում են իրենց նախկին հատկությունները, անհետանում և նախկին «վո-

րակը» և առաջ ե՛ դալիս նոր վորակի, նոր նյութեր՝ բոլորովին այլ հատկություններով:

Այլ դեպքերում յերևույթներն չի ուղեկցում նոր նյութերի առաջացում: Որինակ՝ ապակյա խողովակը տաքացնելու ժամանակ նա սկսում և կարմրել, փափկել, ձկվել, բայց ապակին մնում և անփոփոխ—վորպես ապակի: Խողովակը պտղելուց հետո նա նորից ստանում և իր նախկին հատկությունները: Տաքացումից նույնպես չեն փոխվում հախճապակին, կիրը: Այդպիսի յերևույթները քիզիկական յերեվույթներին են վերաբերում:




Իերեք ասորյա կյանքից և արաադրութունից ձեղ հայանի Ֆիզիկական յերևույթները որինակներ Բիմիական յերևույթներ են արդյոք՝ 1. Յերկաթի ժանդոսելը. 2. Ջրի թորումը. 3. Շաքարի կտորը հավանգի մեջ մտնրացնելով, փոշու փոխարկելը. 4. Ածխի և մոխրի առաջացումը՝ փայտի այրման ժամանակ. 5. Կապարի փոխարկումը կոտորակի:

Նկ. 8. Արաաշնչած ողն անց են կացնում կրաջրի մեջ:

Ավելի մանրամասն կանգ առնենք քիմիական զանազան փոխարկումների, քիմիական ռեակցիաների վրա:

4 Քայնայման ռեակցիա: Քայնայման ռեակցիային կարելի չե՛ ծանոթանալ հետևյալ փորձերի միջոցով:



Նկ. 9


▲ Փորձ 1. Փորձանոթի մեջ շատ քիչ քանակությամբ (նկ. 9) պղնձի ամլապրվական աղի փոշի տաքացրե՛ք (պտաճում և բնության մեջ մալաիս հանքի ձևով): Փորձանոթը պտեկեցե՛ք հորիզոնական դիրքով, ինչպես այդ ցույց և աված նստում, և դիտեցե՛ք անդի ունեցող յերևույթները: ▲

Մալաքիաի տաքացման ժամանակ ստացվում և սե դույնի նոր նյութ, վորն իր հատկություններով վոչ այլ ինչ ե՛, բայց յեթե նույն պղինձաքսիզը, վոր ստացվում և պղնձի շիկացման ժամանակ, Փորձանոթի ստաք պտաերին նստել են ջրի կաթիլը ներ: Վճրաեղից ստաջացան այդ յերկու նյութերը: Նրանք առաջացան այն մալաքիաից, վորն «անհետացավ»:

Քիմիական ռեակցիաների ժամանակ կարող են նյութեր

անջատվել գազային միճակում: Գազերը մենք կարող ենք նկատել միայն այն դեպքում, յերբ նրանք զուսավորված են լինում: Ռեակցիայի ժամանակ անջատվող անգույն գազերը մեր ուշադրութունից հեշտութամբ կարող են վրիպել: Այս հանգամանքի պատճառով գազերն սկսել են տարբերել և ուսումնասիրել միայն XVIII դարի վերջում, յերբ գովորեցին գազերը հավաքել ջրի վրա:

Մալաքիտի տաքացման փորձը կատարելով մենք չենք նկատում, վոր բացի պղինձօքսիդից ու ջրից, առաջանում և նաև անգույն գազ: Այդ գազը կարելի յն հավաքել:



Ն. 10:

▲ Փորձ 2՝ Սարքեցեք 10-րդ նկարում ցույց տված գործիքը a փորձանոթի մեջ այնքան մալաքիտ անձեցեք, վորքան ցույց է տված նկարում. փորձանոթի բերանը խցանեք պնպիսի խցանով, վորը միջով անց է կացրած աղատար խողովակ, և փորձանոթն ամրացեք շտատիսի սեղմիչի մեջ: Յերկրորդ 6 փորձանոթը մինչև բերանը լցրեք ջրով և մատը բերանին դնելով՝ գլխավայր շուտ տվեք ջրով լի բաժակի մեջ և մատը ջրի մեջ հեռացրեք բերանից: Այդ բոլորը պատրաստելուց հետո սկսեցեք տաքացնել մալաքիտը:

Սկզբում տարացրեք 10-րդ նկարում նտասուցույց տված տեղը և ապա աստիճանաբար բոլոր մոտեցրեք փորձանոթի հատակին: Յերբ գաղատար խողովակից սկսեն գալի պղպշտիներ դուրս գալ, քիչ սպասեցեք, վոր գազը դուրս մղի փորձանոթի մեջ յեղած ողը, և ապա գազը հավաքեցեք փորձանոթի մեջ ջրի վրա: ▲

Ի՞նչ գազ է այդ: Բնագիտութան դասընթացից հայտնի յեն մի քանի գազերի հատկութունները: Դուք գիտեք, վոր թթվածնի մեջ առկայծող մարխը բոցավառվում է, իսկ ածխածին գազի և ալյուսի մեջ վառվող մարխը հանգչում է: Ածխածին գազն ալյուսից կարելի յն տարբերել կրաջրի ոգնութամբ:

Մեր հավաքած գազը հանգչում է վառվող մարխը և պղղատորում կրաջուրը: Ուրեմն անխաբքու գազն է այդ:

▲ Փորձ 3՝ Փորձանոթի մեջ քիչ քանակութամբ սնդիկոսիդ տաքացրեք՝ փորձանոթը պահելով թեք դիրքով, ինչպես այդ ցույց է արված նկարում (Նկ. 11): Պեռք է ուժեղ ու յերկար տաքացնել բոցի ամենատաք մասում

(վերին մասում): Փորձանոթի մեջն իջեցրեք առկայծող մարխը: Դուք հասցվում եք, վոր փորձանոթի մեջ քրվածին է: Փորձանոթի սառը պատերի վրա դուք տեսնում եք սնդիկի կաթիլներ: ▲

Դիտած այս յերևույթների ժամանակ մեր վերցրած նյութերի փոխարեն ստացվեցին յերկու կամ մի քանի նոր նյութեր, նոր հատկութուններով: Գիմիական նման ռեակցիաներ շատ հաճախ են նկատվում և կոչվում են օքսիդուման ռեակցիաներ:

Մալաքիտի քայքայման ռեակցիան կարճութան համար կարելի յն պայմանորեն արտահայտել հավասարութան ձևով:

Մալաքիտ = պղինձօքսիդ + ջուր + անխաբքու գազ:

Խնդիր. Դրեցեք սնդիկօքսիդի տարրալուծման ռեակցիայի հավասարութունը:

Տարրալուծման ռեակցիան հաճախ են կիրառում տեխնիկայում: Այսպես, որինակ, կրաքարի (կրաքար, մարմար, կավիճ) այրելու ժամանակ տեղի յն ունենում տարրալուծման ռեակցիա: Ստացվում են յերկու նոր նյութեր — այրած կիր, վոր օգտաբործում են շինարարութան մեջ, և անխաբքու գազ:

Կրաքար = կիր + անխաբքու գազ:

12-րդ նկարում պատկերված է կրաքար այրելու ամենապարզ վառարանի կտրվածքը:

5. Միացման ռեակցիա: Գիմիական ռեակցիան կարող է տեղի ունենալ վոչ միայն մի նյութի հետ, ինչպես նախորդ փորձերի ժամանակ, այլ նաև այն դեպքերում, յերբ մենք վերցնում ենք յերկու կամ ավելի նյութեր: Յերկու նյութերի քիմիական փոխազդեցութան որինակը հեշտութամբ կարելի յն գիտել յերկաթի ու ծծմբի միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ: Յերկաթը և ծծումբը մենք կվերցնենք մանր փոշու վիճակում:

Յերկաթը փոշու վիճակում գորշազույն է և, ինչպես մյուս մետաղները, մանրացած վիճակում չունի մետաղի բնու-



Նկ. 11. Սնդիկօքսիդի տաքացնելը

բոր փայլը, բայց աւնի յերկաթի բոլոր հատկութիւնները՝ ձըգվում է մագնիսից, սուզվում է ջրի մեջ և այլն:

Ծծումբը դեղին գույնի փոշի յե, այրվում է կապույտ բացով, ջրում թափահարելիս բարձրանում է ջրի յերեսը (վրովհեռե ջրից չի թրջվում): Մագնիսը նրան չի ձգում:

▲ Փ ա ռ ձ 1. Գդայով կամ սովարաթղթի կտորով վերցրեք շաավորապես հավասար ծավալով ծծմբի և յերկաթի փոշիներ և հալանդի մեջ կամ թղթի կտորի վրա խառնեցեք՝ լավ արօրելով բոլոր գնդիկները: ▲

Ստացված փոշին արտաքին տեսքով կարելի յի ընդունել վորպես նոր նյութ, վորովհետև անանձին հատիկներ չենք տեսնում: Փոշին քվում է համասեռ:



Նկ. 12. Կրաքար այրելու ամենապարզ վտարանի կտրվածքը: Կրաքարը դարձում են փոփ մեջ, վոր շինված է տարարանից: Կրաքարից վտարան են կրակը:

Վորպեսզի համոզվենք, թե ստացած փոշին համասեռ է թե վոչ, փոշուց մի քիչ ամեցեք ջրի մեջ և ձողիկով կամ մարխով խառնեցեք: Դուք կհամոզվեք, վոր այդ նյութն անհամասեռ է:

Պարզ է, վոր ծծմբի և յերկաթի փոշիները խառնուրդի հատկութիւնները, վերցրած փոշիները քանակի համեմատ, կարող են փոխվել, այն է՝ յեթե շատ է ծծումբը, փոշին կլինի դեղնա-

գույն, քիչ լինելու դեպքում—մուգ գույն է ունենում:

Ծծմբի և յերկաթի փոշիներն իրար խառնելու ժամանակ քիմիական վոչ մի աեակցիա տեղի չի ունենում, և նոր նյութեր ել չեն ստացվում: Սակայն աեակցիա կարելի յի առաջացնել, յեթե այդ խառնուրդը տաքացնենք: Այս դեպքում ծծումբը և յերկաթը պետք է վերցնել վորոչ քանակներով, այն է՝ 7 կլոամաս յերկաթ և 4 կլոամաս ծծումբ:

▲ Փ ա ռ ձ 2. Կշեցեք 3,5 գրամ յերկաթ և 2 գրամ ծծումբ: Շտա խնամքով իրար խառնեցեք հալանդի մեջ կամ թղթի վրա: Դուք կհամոզվեք, վոր այդ դեպքում եռ անհամասեռ նյութ է ստացվում, և վոչ թե նոր նյութ: ▲


Խառնուրդից մի քիչ թողնելով թղթի վրա՝ մնացածն ամեցեք փորձանոթի մեջ: Փորձանոթն ամրացրեք շտատիվի վրա

(ինչպես այդ ցույց է արված 13-րդ նկարում) այնպես, վոր փորձանոթը շտատիվի յերկաթյա տախտակի վրա դառնալի (յեթե շտատիվը փայտից է, փորձանոթի տակը յերկաթի կամ թիթեղի մի կտոր դրեք): Զուշուրթյամբ տաքացրեք ամբողջ փորձանոթը և ապա ուժեղ կերպով ներքեից տաքացրեք այնքան, մինչև վոր աեակցիա սկսվի, այդ դուք իսկույն կնկատեք: Յերբ աեակցիան սկսվի, դադարեցրեք տաքացնելն ու դիտեցեք: Դուք նկատում եք, վոր խառնուրդն ինքն իրեն յիկամում է—տեղի յի ունենում ջերմության անշատում:

Թողեք, վոր ստացված նյութը պաղի, և ապա կտորելով փորձանոթը՝ հեռացրեք ազակու կտորտանքը: Ստացված նոր նյութը նման չի վոչ վերցրած փոշուն, վոչ յերկաթին և վոչ ել ծծմբին:

Ստացված այդ նյութը հավանդի մեջ արօրելով՝ փոշի դարձրեք: Այդ փոշու գույնը վերցրած փոշու գույնին նման չի: Ստացված փոշուց մի քիչ ամեցեք ջրի մեջ ու թափահարեցեք. ամբողջ փոշին սուզվում է: Արդյունքները բոլորովին այլ են, քան սկզբնական փոշու արդյունքները:

Խառնուրդը տաքացնելուց հետո ստացվեց նոր վորակ—նոր նյութ՝ նոր հատկութիւններով: Նոր նյութն առաջացավ ծծմբի և յերկաթի քիմիական իրար հետ միացմալի հետևանքով: Այդ յեղու նյութերն առաջացրին մի նոր նյութ, և իրենք մտան նրա բաղադրության մեջ: Ստացված նոր նյութը կոչվում է ծծմբիկաթ: Տեղի ունեցավ քիմիական աեակցիա՝ հակառակ տարբարութեան աեակցիային: Այդ աեակցիան կոչվում է միացման աեակցիա: Միացման աեակցիայի հետևանքով առաջացած նոր նյութը՝ ծծմբերկաթը, կարելի յի կոչել «ծծմբի և յերկաթի քիմիական միացութիւն» կամ պարզապես «ծծմբի և յերկաթի միացութիւն»: Ինչպես տեսնում եք, «միացութիւն» բառը կարելի յի



Նկ. 13. Ծծմբի և յերկաթի խառնուրդը տաքացնելու փորձանոթը:

գործածել թե յերևույթի նկատմամբ, այսինքն՝ ուսուցիչի վերաբերմամբ և թե ստացված նյութի վերաբերմամբ:

Ռեակցիան կարելի չէ պատկերել այսպես.

Օծոււթ + յերկաթ = ծծմբեք կաթ:

Դիտելով ծծմբի և յերկաթի միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ առաջացող յերևույթները, սովորողներին լուծմանը կարծում են, վոր այստեղ կյականն այն է, վոր ծծումբը և յերկաթը շարվում են: Նրանք մասամբ միայն իրավացի չեն: Յեկ իսկապես, խառնուրդի յերեսի ծծմբի մի չնչին մասը, վոր անմիջապես շփվում է սղի հետ, տաքացնելու ժամանակ վառվում է, և մենք նկատում ենք վառվող ծծմբի բոցը: Բայց այրվողը ծծմբի մի չնչին մասն է. ծծմբի գլխավոր դանդվածը չի այրվում, այլ միանում է յերկաթի հետ: Այդ միացման ժամանակ, ինչպես և այրման ժամանակ, տեղի չէ ունենում քառացում, և դանդվածը շրկանում է:

Օծմբի և յերկաթի միջև տեղի կունենա ռեակցիա և այն ժամանակ, յեթե 3,5 գրամից ավելի յերկաթ կամ 2 գրամից ավելի ծծումբ վերցնենք: Այդ դեպքում սակայն ծծմբի կամ յերկաթի ավելորդ մասը միացության մեջ չի մտնի:

Օծմբի հետ կարող են միանալ ուրիշ շատ մետաղներ՝ պղինձ, ցինկ, ալյումին և այլն:

Այս դեպքում նույնպես ռեակցիաներն ընթանում են վորոշ կշռային հարաբերությամբ: Որինակ՝ 4 գ պղինձի հետ միանում է 1 գ ծծումբ, 2 գ ցինկի հետ՝ 1 գ ծծումբ, 2,7 գ ալյումինի հետ՝ 4,8 գ ծծումբ:

Ռեակցիա առաջացնելու համար վերը գրեցած յերևույթների ժամանակ մենք ոգտվում էյինք տաքացնելով. բայց լինում են և այնպիսի դեպքեր, յերբ նյութերը միանում են իրար հետ՝ առանց նախապես տաքացնելու: Այդպիսի միացման որինակ կարող է ծառայել տեխնիկայում կիրառվող ռեակցիան, այն է՝ այրած կրի միացումը ջրի հետ կամ կրի ճմարումը: Կրի վրա ուղղակի ջուր են անում, առաջ է գալիս ուժեղ տաքություն, կիրը վեր է ածվում փոշու և ստացվում է նոր նյութ՝ նոր հատկություններով, այն է՝ հալկած կիր:

Այրած կիր + ջուր = հալկած կիր:

Հանդած կրի, ավազի ու ջրի խառնուրդը գործ են անում շինարարության մեջ:

Տաքացումը, կամ ինչպես ընդունված է ասել ջերմության անջատումը, քիմիական միացման շատ ռեակցիաների բնորոշ հատկանիշն է հանդիսանում: Յերբեմն ջերմության այդ անջատումը շատ մեծ է, ինչպես փայտի և այլ նյութերի այրման ժամանակ, ինչպես որինակ՝ ծծմբի և յերկաթի միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ: Յերբեմն էլ քիչ ջերմություն և անջատում, ինչպես որինակ՝ կիրը հանդցնելու ժամանակ: Ըստ ջերմության անջատման՝ մենք կարող ենք յեղրակացնել, վոր տեղի չէ ունեցել քիմիական ռեակցիա: Իսկ յեթե ջերմություն չի անջատվում, մենք կարող ենք յենթադրել, վոր վաշ մի նոր նյութ չի ստացվել, վոր ռեակցիա տեղի չի ունեցել, այլ միայն խառնուրդ է առաջացել: Բայց այդ միայն յենթադրություն կլինի, վորովհետև լինում են նաև միացման այնպիսի ռեակցիաներ, յերբ ջերմություն չի անջատվում: Խնդրի լուծման համար անհրաժեշտ է ավելի մանրամասն ուսումնասիրություն, վոր քաղցուցիկ ստացված խառնուրդի անհամասեռությունը կամ՝ նոր նյութի առաջացումը:

11-283329

6. Քիմիական փոխարկումները կյանքում, արտադրության յեկ բնության մեջ: Մենք ծանոթացանք քիմիական ռեակցիաների յերկու հիմնական տեսակներին: Մյուս բոլոր ամենաբազմապիսի ու բարդ ռեակցիաները մեծ մասամբ կարող են վերածվել այդ յերկու հիմնական ռեակցիաներին:

Ձեռք բերելով քիմիական վորոշ գիտելիքներ, այժմ ուշադրությամբ դիտենք մեզ շրջապատող կյանքը: Թե՛ առողջ կյանքում, թե՛ արտադրության և թե՛ բնության մեջ ամեն քայլափոխում մենք պատահում ենք նյութերի փոփոխությունների, քիմիական փոխարկումների: Փայտը վառարանում այրվելիս նրանից ստացվում են նոր նյութեր և անջատվում է ջերմություն: Մենդի պատրաստելն ուղեկցում է քիմիական մի շարք փոխարկումների հետ: Այլուրը, վորից հաց են թխում, մի շարք նոր հատկություններ է ձեռք բերում, միայն, ձուն՝ նույնպես: Կաթը թթվելիս մի շարք նոր նյութեր են ստացում, վոր թթու համ ունեն: Խմորին սոդա կամ արմավենի ավելացնելով, մենք ոգտվում ենք այդ նյութերի վախճանով, վաշի ընթացքում նրանցից զազեր են առաջանում՝ բարձրացնում են խմորը և այլն:

Մարդու և կենդանիների որդն հղմի մեջ, ինչպես այդ դե-



տենք բնագիտութեան դասընթացից, տեղի յե ունենում աննդա-
նյալ թերի անընդհատ փոխարկում, առաջ են գալիս նոր նյութեր,
վարձացից որդանիզմն իր մարմնի քղիջներն ու հյուսվածքներն և
կառուցում: Ծնչառութեան պրոցեսը նույնպես ուղեկցվում է քի-
միական փոխարկումներով, վորոնք տեղի յեն ունենում որդա-
նիզմների մեջ:

Քիմիական պրոցեսներ են տեղի ունենում նաև բույսերի
որդանիզմների մեջ: Ամեն մի կյանք կապված է քիմիական ան-
վերջ փոխարկումների հետ: Քիմիական փոխարկումներ են կա-
տարվում նաև անորգանական բնութեան մեջ. որինակ՝ զբանիաջ
քայքայվելով փոխարկվում է ավազի և կավի: Այլ լեռնային տե-
սակները նույնպես գանդաղ կերպով փոխարկվում են:

Արտադրութեան մեջ ել յուրաքանչյուր քայլափոխում մենք
քիմիական փոխարկումների յենք պատահում: Բնական հում
նյութերը, յենթարկվելով քիմիական մի շարք փոխարկումների,
արժեքավոր նոր նյութեր են տալիս. կրաքարից ստանում են
կիր, հողոտ ու քարոտ հանքաքարերից՝ արժեքավոր մետաղներ,
կավից՝ ձեռնապակի և հալոճապակի, կրաքարից, սոզայից և ավա-
զից՝ ապակի, ճարպից՝ սճառ, ստեարին, գլիցերին. կարտոֆիլից՝
սպիրտ: Քիմիական գործարաններում զանազան զույնի ու յե-
րանդի ներկող նյութեր են պատրաստում. պատրաստում են
նաև թթուներ, աղեր, պայթուցիկ և թունավոր նյութեր, զեզո-
բայք, արհեստական պարարտանյութեր և այլն և այլն:

Բացի քիմիական այն փոխարկումներից, վորոնց ընթաց-
քում արժեքավոր նոր պրոդուկտներ են ստացվում, մեր շրջա-
պատում տեղի յեն ունենում մեզ համար անցանկալի քիմիա-
կան պրոցեսներ. յերկաթը ժանդատում է, պղինձը սևանում ու
կանաչում է, փայլը փտում է, սննդանյութերը հոտում են և
այլն:

Անզանրապես մեր շուրջը տեղի յեն ունենում նյութի ան-
ընդհատ փոփոխութեաններ:

Մեր բնան ազդ փոփոխութեաններն աննշան են, և նրանց
հետևանքը նկատելի յե դառնում միայն շատ յերկար ժամանա-
կից հետո. փակ յերբեմն ել փոխարկումները մեր աչքի առաջ են
կատարվում: Մեզ շրջապատող ամբողջ բնութեանը հանդիսա վի-

ձակում չի գտնվում, այլ անընդհատ փոփոխվում, փոխարկվում,
անընդհատ փոփոխվում է:

Նյութի—մատերիայի այդ բնական և անընդհատ շարժման
մեջ շատ գործունյա մասնակցութեան ունի մարդը, վոր աշխա-
տում է տիրապետել բնական այդ պրոցեսներին, ուսումնասի-
րում է նրանց և ուսումնասիրելով՝ ստիպում է, վոր նրանք
իրեն հարկավոր ուղղութեամբ ընթանան: Ներգործելով բնու-
թեան վրա, իր գործարաններում, Փարրիկաներում, լաբորատո-
րիաներում, կոլտնտեսութեաններում ու խորհանտեսութեան-
ներում մարդն ստիպում է բնութեան՝ յենթարկվել իրեն և իր
նպատակներին ու կարիքներին ծառայել:

Անընդհատ պայքար մղելով բնական պրոցեսներին տիրա-
պետելու համար, մարդն ազատագրվում է բնութեանը լրիվ յեն-
թարկվելուց: Այդ ուղղութեամբ ձեռք բերած նվաճումները մար-
դուն բարձրացնում են ե՛լ ավելի վեր՝ բնութեանը տիրապետե-
լու ուղղութեամբ, և նա աստիճանաբար ազատագրվելով բնու-
թեան ճորտութեանից՝ գտնում է նրա տերը: Բայց այդ նվա-
ճումները մարդկութեանը միշտ ել լիարժեք չի սղաագործում:
Այստեղ ամեն ինչ կախված է նրանից, ում ձեռքում են գտնվում
այդ նվաճումները:

Կապիտալիստական յերկրներում զիտութեան ու տեխնիկայի
նվաճումները սղաագործում են այն նպատակով, վոր մի բուն
կապիտալիստներ համաշխարհային շուկայում հաջողութեամբ մրցեն
ու պայքարեն և անընդհատ ավելացնեն իրենց մասնավոր հսկա-
յական կապիտալները: Իսկ այդ փոչ միայն չի թեթևացնում աշ-
խատավոր մասսաների գրութեանը, այլ բնագիտական, անխու-
տափելիորեն ավելի ու ավելի աղքատութեան և գործազրկու-
թեան է ստեղծում:

Բացի այդ, կապիտալիստական յերկրներում զիտութեան
այն նվաճումներն են սղաագործում միայն, այն դյուտերն ու
հնարվածքները, վորոնք ձեռնառ յեն կապիտալիստներին: Իսկ
այն բոլորը, վոր կարող է փրստել նրանց մասնավոր շահերին,
արհեստական կերպով վերացնում են, թաղցնում, աբզելակում
ինչքան ել նրանք արժեքավոր լինեն բոլոր աշխատավորների
համար:

Իսկ սղաագրական յերկրում զիտական ամեն մի նվա-

ձուճ անմիջապէս ոգտագործվում է գործնական նպատակների համար և ամբողջ աշխատանքային սեփականութունն է դատարանում:

Այդ նպատակում է աշխատավորական լայն մասսաների նյութական ու կուլտուրական դրութեան բարելավման և զինում է նրանց զիտակցարար ու ծրագրված պայքարելու՝ բնութեանը տիրապետելու համար: Գիտութունը պրոլետարիատի ձեռքում միայն կարող է հազիթականորեն զեպի առաջ շարժվել և տալ այն արդյունքները, ինչ վոր կարող է առաջ, և դառնալ այն իսկապէս հզոր զենքը, վորով մարդը պայքարում է՝ բնութեանը տիրապետելու համար:

Կ Ր Կ Ն Ո Ղ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ինչո՞ւ է տարբերվում քիմիական յերեւոյթը Փիզիկականից:
2. Քիմիական փոխարկման ինչ տեսակներ գիտե՞ք:
3. Ի՞նչ նյութեր դուք տարբարութեանից և ինչ ստացա՞ք:
4. Կատարած ուսուցիչներն արտահայտեցե՞ք սխեմաներով:
5. Արտագործութունից բերե՞ք տարբարութեանն սեպիցիայի որինականեր:
6. Բերե՞ք միացման սեպիցիաների որինականեր:
7. Բերե՞ք քիմիական փոխարկումների որինականեր՝ ձեզ մտաւիկ արտագործութունից:

II. Ջ Ո Ւ Ր

Քիմիայի խնդիրներն են՝ ուսումնասիրել նյութերը, նրան հատկութունները, քիմիական սեպիցիաներն ու բաղադրուցութունը:

Վորպեսզի ծանոթանանք, թե ինչպէս են ուսումնասիրվում նյութերը, կանգ առնենք մի վորոշ նյութի վրա և փորձենք քիչ թե շատ մանրամասնորեն ուսումնասիրել այն:

Վորպէս այդպիսի նյութ վերցնենք ամենաստվորական նյութը — ջուրը:

Ք. Ջուրը բնութեան մէջ: Ջուրն ամենաշատ տարածված նյութերից է: Հեղուկ է կարծր վիճակում՝ վորպէս ծով, գետ, ձյուն ու սառուց՝ ջուրը բռնում է յերկրի մակերեսի մոտ 71% -ը: Նա ներձձված է հողի, լեռնային տեսակների մէջ, գոլորշիների ձեւով գտնվում է սոլում և մանում և կենդանիների ու բույսերի


բաղադրութեան մէջ: Մարդու մարմնի մէջ ջուրը կազմում է նրա կշռի մոտ 75% -ը. մի քանի բանջարեղենի ու պտուղների մէջ, ինչպէս, որինակ, վարունգի մէջ, 95% և ավելի ջուր է պարունակվում: Ջրի քանակութունը սովորարար վորոշում են՝ նյութերը 100°-ում չորացնելով:

14-րդ նկարում ցույց է տրված քիմիական լաբորատորիաներում կիրառվող չորացման յեղանակը: Չորացող նյութը տեղավորում են թասի մէջ, կշռում ու դնում են չորացնող պահարանի դարակի վրա. պահարանը տաքացնում են այրոցով: Ջրմաստիճանը հետզհետե բարձրանում է և վերջում պահվում է 100°-ից քիչ բարձր, մինչև վոր թասի քաշը նյութի հետ միասին կրկին կշռելիս այլևս չի պակասի:

15-րդ նկարի գիտարամը ցույց է տալիս ջրի քանակը զանազան բուսական ու կենդանական նյութերի մէջ:

Բնական ջուրը յերբեր կատարելապէս մաքուր չի լինում: Նրա մէջ կարող են լինել և լուծվող խառնուրդներ. այդ խառնուրդները յերբեմն աչքով տեսանելի յեն, վորովհետե նրանք ջուրը պղտորում են, իսկ յերբեմն ել լինում են լուծված վիճակում: Լուծված խառնուրդների ներկայութունը ջրի արտաբին տեսքից ունակտելի յե: Չուրը կարող է լինել պարզ և թափանցիկ, բայց զուրոշիացնելուց հետո մնացորդ է տալիս: Այդպիսի ջուրը հաճախ կաթասներում ու հեշտայնուներում քարացում է տալիս:

Չլուծվող նյութերը, վորոնք պարունակվում են ջրի մէջ պղտորութեան ձեւով, կամ, ինչպէս ասում են՝ «կախված» վիճակում, կամ սուսպենդիայի ձեւով (սուսպենդիա — լատիներեն բառ է, կարող են շատ բաղամաս վոր նշանակում է «կախված վիճակում»), կարող են շատ բաղամաս լինել. ավազի, կավի և այլ լեռնային տեսակների մասնիկներ, բուսական և կենդանական մնացորդներ և վերջապէս կեն-



Նկ. 14. Չորացնող պահարան:


զանի մանրադիտակային եյակներ—զանազան ինֆուզորիաներ, բակտերիաներ և այլ միկրոօրգանիզմներ: Իրանց թվում կարող են լինել և այնպիսիները, վարոնը զանազան հիվանդություններին պատճառ են զանում՝ հիվանդաբեր միկրոօրգանիզմներ (սկ. 16):

Ջուրը հսկայական նշանակություն ունի մեր կյանքում: Ջուրը մենք սպասարկում ենք խմելու համար, կերակուր պատրաստելու, մաքրության համար, ջրային ջնտուցում պատրաստելու համար և այլն: Առանց ջրի գյուղատնտեսությունը չի կարող լինել, վերսկսեալ ջուրն անհրաժեշտ է թե՛ բույսերի և թե՛ կենդանիների համար: Գետերի, ծովերի, լճերի և ովկիանոսների ջուրը հաղորդակցության ածան ա հարմար ճանապարհ և հանդիսանում: Ջրով, վարպետ շարժիչ ուժով, մենք ուղղում ենք վաղ միայն ջրաղացների համար, այլև այնպիսի հսկայական կառուցումների համար, ինչպիսիսին են—Ինկայրոզեար, Վոլխով-գեսը և այլն, վերանդ թափվող ջուրն սպասարկում են հսկայական քանակությամբ երկարոտներով ստանալու համար: Ջուրն անհրաժեշտ է շինարարության գործում՝ կալը, կիրը և ցեմենտն իրար խառնելու համար:

Ջուրը մենք սպասարկում ենք խմելու համար, կերակուր պատրաստելու, մաքրության համար, ջրային ջնտուցում պատրաստելու համար և այլն: Առանց ջրի գյուղատնտեսությունը չի կարող լինել, վերսկսեալ ջուրն անհրաժեշտ է թե՛ բույսերի և թե՛ կենդանիների համար: Գետերի, ծովերի, լճերի և ովկիանոսների ջուրը հաղորդակցության ածան ա հարմար ճանապարհ և հանդիսանում: Ջրով, վարպետ շարժիչ ուժով, մենք ուղղում ենք վաղ միայն ջրաղացների համար, այլև այնպիսի հսկայական կառուցումների համար, ինչպիսիսին են—Ինկայրոզեար, Վոլխով-գեսը և այլն, վերանդ թափվող ջուրն սպասարկում են հսկայական քանակությամբ երկարոտներով ստանալու համար: Ջուրն անհրաժեշտ է շինարարության գործում՝ կալը, կիրը և ցեմենտն իրար խառնելու համար:

Համարյա փոշ մի արտադրություն առանց ջրի յուր գնու չի կարող: Ջուրը պետք է շոգեկաթսանների և տուրբինների համար, զանազան տեսակի սառնարանների համար, զանազան նյութեր յուրձնելու համար, զանազան նյութեր լվանալու, թրջելու, ներկելու գործողելու համար և այլն:

Մտածեք, թե ինչի համար է պետք գալիս ջուրը ձեզ մտալի արտադրություն մեջ:



Նկ. 15. Ջանազան նյութերի մեջ յեզանծ ջրի քանակությունը (չսովբրազծված):

2. Ջրի գտումը յեզ գուեջրի Երկրակալան հասկուրյունեերը: Թե խմելու և թե շատ արտադրությունների համար գործածվող ջուրը պետք է զգել:



Ջրից նրա մեջ կախված խառնուրդները հետաքննելու համար ջուրը քամում են:

Նկ. 16. Ջրում պատահող հիվանդություններ միկրոօրգանիզմներ (մեծացրած 3000 անգամ). ա—աֆիֆ բակտեր, ար, Բ—խոլերայի բակտերիա, Ե—Թարախաբերներ (սառֆլուտիներ):

Ջուրը քամելու համար սովորաբար գործ են անվում ափազե քամոցներ.

Մեծ քաղաքներում հսկայական մեծություն ավազե քամոցներ են շինում, զորոնք մի քանի հեկտար մակերես են ունենում: Ավազե հասարակ քամոցները—զբանք զեանի մեջ փարած ավազաններ են, շինված ջրի համար անթափանցելի նյութերով:



Նկ. 17. Քաղաքի քամոցի կարվածքը:



Նկ. 18. Քաղաքի յեզ քամոցի ներքին տեսքը, քամոցից հետոցված և ափազե (քսա շտանակաբի):

ցեմենտով: Ավազանները ծածկված են համարներով, զորոնց վերևը հողի շերտ է փռած, զորն ամառը ջուրը պաշտպանում է սառնանալուց, իսկ ջրմեռը՝ սառնելուց:

Ավազանը համակում են ավազի շերտով: Քամվող ջուրը համարվում է ավազանի հատակում տեղափոխված

խողովակներն մեջ, վորոնց միջով անցնում է դեպի ջրմուղը (նկ. 17 և 18):

Զուրն ավազի միջով քամվելով, միկրոորգանիզմներից բուրբուկին չի ազատվում: Այդ պատճառով ել այն վայրերում, վորտեղ հիվանդաբեր բակտերիաներ շատ են լինում (ինչպես Լենինգրադում), ջրմուղներին ջուրը, բացի քամելուց, նաև ախտահանում են՝ ավելացնելով զանազան հականերխիչ նյութեր, ինչպես որինակ՝ քլոր¹ (ջրի քլորացում), վորոնք սպանում են միկրոորգանիզմներին:

Յեթե ջուրը չի ախտահանվում, կամ քիմիական միջոցներով վատ է ախտահանվում, այդ դեպքում ջուրը գործածելուց առաջ յեռացնում են, վորպեսզի նրա մեջ յեղած միկրոորգանիզմները վոչնչանան: Շատ վայրերում, ինչպես որինակ՝ Լենինգրադում, (չնայած վոր ջուրը քլորով ախտահանում են), կարելի չէ խմել միայն յեռացրած ջուր, վորովհետև այդ դեպքում ջրի մեջ սովորաբար քիչ բակտերիաներ են մտում:

Միանգամայն մաքուր ջուր, վոր իր մեջ չի պարունակում վոչ կախված և վոչ ել լուծված նյութեր, կարելի չէ ստանալ թորման միջոցով (քարած ջուր), վորին մենք արդեն ծանոթ ենք:

Հիշենք մաքուր ջրի ֆիզիկական հատկությունները, վորոնք ձեզ ծանոթ պետք է լինեն բնագիտությունից զատն թացից:

Ջրի ճեղքատար կեղևն ընդունում են վորպես միավոր: Զուրը յեռում է 100°, սառում է 0° Ց:

Ջրի գույնը: Զուրը մենք համարում ենք անգույն, բայց իրոք նա բաց-կապտավուն գույն ունի և միայն բարակ շերտերով է անգույն թվում, ինչպես ապակին (յեթե ապակուն նայենք յեղքից, պարզ կերպով նկատելի չէ, վոր ապակին կանաչավուն կամ կապտավուն գույն ունի):

Ջրի համր. Մաքուր թորած ջուրը, համեմատած խմելու ջրի հետ, ասում ենք՝ անհամ է: Աղբյուրի և ընդհանրապես խմելու լավ ջուրը մեղ համով է թվում այն պատճառով, վոր նրա մեջ լուծված աղեր ու զազեր կան. բուրբուկին մաքուր ջուրն անհամ է: Զուրը վատ է անցկացնում ջերմությունը և համարյա չի անցկացնում էլեկտրականությունը:

¹ Քլորը թունավոր դաղ է. ջրի հետ քլորն առօրինակ առաջացնում է աղթթու, վորի թույլ լուծույթը մեղ համար անվնաս է:

Յ. Զուրը վորպես լուծիչ: Զուրը շատ լավ լուծիչ նյութ է. նա իր մեջ լուծում է թե պինդ, թե հեղուկ և թե դադային նյութեր:

Մենք արդեն պատահել ենք լուծույթների և դիտենք, վոր լուծույթ կոչվում է այն հեղուկը, վոր իր մեջ կողմնակի նյութեր է պարունակում, բայց միանգամայն թափանցիկ է, վորի մեջ կախված միճակում վոչ մի մասնիկ և վոչ ել պղտորություն կարելի չէ յերևան բերել: Առորյա կյանքում սխալմամբ հաճախ լուծույթ են անվանում կավախառն կամ կրախառն ջուրը: Իրանք, ի հարկե, լուծույթներ չեն, այլ առասպելաբանք են (այսինքն ջուր, վորի մեջ կախված միճակում դանազան նյութեր են լինում):

Նյութերը լինում են լավ լուծվող, քիչ լուծվող և չլուծվող:

Ն Ն Ի Բ. Դաստակից ստացել վորոշ քանակություն ջուր պարունակող փորձանոթներ և նրանց մեջ լուծեցեք դաստակի տված դանազան պինդ նյութերը: Այն փորձանոթների մեջ, վորտեղ նյութերն ամբողջովին լուծվեցին, դարձյա նույն նյութերից քիչ-քիչ ավելացրեք այնքան, մինչև վոր նրանք դադարեն լուծվել. այդ գործողություն ժամանակ լուծույթները պետք է միշտ թափահարել:

Այն փորձանոթները, վորոնց մեջ նյութերն ամբողջապես են լուծվել, տաքացրեք մինչև յեռալը (բայց չեռացնեք) և յեթե նյութը լուծվի, նորից նյութ ավելացրեք: Տաքացրած լուծույթները պաղեցրեք ու դիտեցեք հետևանքը:

Բնորոշեցեք ձեզ տված նյութերի լուծելիությունը (լավ չլուծվողներ, քիչ լուծվողներ և չլուծվողներ):

Այն նյութերը, վորոնք թե թափահարելով և թե տաքացնելով չլուծվեցին, կարելի չէ համարել չլուծվող նյութեր: Գուցե նրանք, թեև աննշան չափով, լուծվում են: Ինքներդ մտածեցեք, թե ինչպես պետք է լուծել խնդիրը: Այն լուծույթը, վորի մեջ տվյալ նյութը տվյալ ջերմաստիճանի տակ այլևս չի լուծվում, կոչվում է հագեցած լուծույթ:

Բարեխառնության բարձրացման հետ միաժամանակ մեծանում է նաև կարծր նյութերից շատերի լուծելիությունը:

Տվյալ նյութի լուծելիությունը տվյալ բարեխառնության տակ կարելի չէ բնորոշել նյութի դրամների այն քանակով, վոր ընդունակ է լուծվել 100 գ լուծիչի մեջ: Այդ թիվը կոչվում է լուծելիության գործակից կամ ուղղակի տվյալ նյութի լուծելիություն:

Տարբեր նյութերի լուծելիությունը չափազանց տարբեր է: Այսպես՝ 100 գ ջրի մեջ 20°-ում կարող է լուծվել՝ 300 գ շաքար,

36 գ կերակրի աղ, 31 գ աղբորակ, 23 գ պղնձարջասպ, 0,2 գ գիպս և այլն:

Լուծելիության մեծացումը տաքացումից, տարրեր նյութերի համար տարրեր են: Աղբորակի լուծելիությունը դրալի չափով և մեծանում, իսկ կերակրի աղինը՝ շատ քիչ:

Բացի ջրից, ուրիշ հեղուկներ ել կարող են լուծիչ լինել: Այսպես, օրինակ՝ դանազան ճարպեր լավ լուծվում են բենզինի մեջ, խեժերը—սպիրտի և սկիպիդարի մեջ, մի քանի մետաղներ՝ սնդիկի մեջ և այլն: Այստեղ պետք է նկատել այն, վոր յեթե նյութը լավ լուծվում է մի լուծիչի մեջ, նա կարող է բոլորովին չլուծվել մի ուրիշ լուծիչի մեջ: Բոլորին հայտնի չե, վոր բենզինի մեջ լավ լուծվող ճարպերը ջրում բոլորովին չեն լուծվում: ճարպերի և յուղերի լուծվելը բենզինի մեջ գործնականում սպառազործում են բժեր հանելու համար: Խեժերի լուծվելը սպիրտի մեջ սպառազործում են լաքեր և ջնարակներ (политыра) պատրաստելու համար և այլն:

Այն նյութերը, վորոնց լուծելիությունը տաքացնելուց մեծանում է, լուծույթը սառեցնելու ժամանակ նորից անջատվում են բյուրեղների ձևով—բազմանիստների, այնպիսի մարմինների ձևով, վորոնք սահմանափակվում են հարթ մակերևոններով:

▲ Փ ա ռ ձ 1. Խոշոր բյուրեղներ օտանալու համար 13 սմ³ ջրի մեջ (կտրած) տաքացնելով, լուծեցեք 10 գ աղբորակ: Տաք լուծույթն ամեցեք բաժակի մեջ և թղթով ծածկելով, թողեք դանդաղ սառել, բաժակը հատակին ստացվում են բարակ պրիզմայանե բյուրեղներ: ▲

▲ Փ ա ռ ձ 2. Պատրաստեցեք ստորական բարեխառնության մեջ կերակրի աղի հաղեցած լուծույթ: Յերբ աղը դադարի լուծվելը, լուծույթը տաքացրեք՝ Իռք չեք նկատի, վոր լուծելիությունն դրալի չափով մեծանում է: Մտուղելու համար սուղակի վրայից լուծույթը մի բաժակի մեջ ամեք ու թողեք սառել: Շատ քիչ բյուրեղներ են ստացվում:

Բաժակը սառեցվող հեղուկով թողեք մի քանի օր: Ջուրն օտանանաբար կտրոշխանա, անջատվող բյուրեղների թիվը կավելանա, և նրանք կմեծանան: ▲


Հագեցած լուծույթից նյութը բյուրեղների ձևով կարող է անջատվել վոչ միայն սառեցնելու ժամանակ, այլև լուծիչը սովորական ջերմաստիճանում դանդաղ կերպով գոլորշիացնելու ժամանակ:

Մրանով սգտվում են աղի լճերի և ծովի ջրերից աղ ստանալու համար:


Նյութերը լուծելով և լուծույթից նրանց նորից անջատելով, սգտագործում են լաբորատորիաներում՝ լուծվող նյութերը չլուծվողներից բաժանելու համար:

Ս ե ղ ի Ե. Փորձեցեք մաքրել կերակրի վոչ մաքուր աղը չլուծ աղ խառնուրդներից: Մտածեցեք աշխատանքի ընթացքի մասին ու խորհրդակցեք գաստավի հետ:

Լուծույթից միանգամից մեծ քանակությամբ բյուրեղներ անջատվելու դեպքում՝ նրանք կարծեք թե խանդարում են իրար ամելու և ստացվում են վոչ լրիվ բյուրեղներ: Բայց յերբ քնտրում են լրիվ կազմակերպված բյուրեղներից մեկը, անջատելով մյուսներից, ու տեղավորում համապատասխան նյութերի հագեցած լուծույթի մեջ, օրինակ՝ թելից կախելով (նկ. 19), այն ժամանակ նյութը գլխավորապես անջատվում է կախված բյուրեղի վրա: Բյուրեղն աստիճանաբար ու միանգամայն համաչափ մեծանում է՝ պահպանելով իր սկզբնական ձևը:



Յերբ բյուրեղի ճիշտ աճմանը վոչինչ նկ. 19. Բյուրեղի աճումը: չի խանգարում, այդ դեպքում նա բոլոր կողմերից սահմանափակվում է հարթ մակերեսներով, նիստերով, ընդ վորում յուրաքանչյուր յերկու նիստի միացումը միմյանց հետ տվյալ նյութի համար առաջ ե բերում մշտականու վորոշակի յերկնիստ անկյուններ:




Նկ. 20. Բյուրեղների ձևերը: a—կերակրի աղ, b—պաղպղ (շեք), c—պղբորակ, d—մագնիզիում սուլֆատ, e—պղնձարջասպ (նկ. 20a), պաղպղը՝ սկտանդիի ձևով (նկ. 20b), աղբորակը՝

պրիզմայի ձևով (նկ. 20B), անդլիտիկան (կամ դառը) աղը՝ նույնպես պրիզմայի ձևով (նկ. 20Դ), պղինձարջասպը՝ բոլորովին այլ պրիզմայի ձևով (նկ. 20Ա):

Բյուրեղների ձևը պատահական ինչպիսիք բան չի: Նյութի մասնիկները բյուրեղային մարմիններ առաջացնելով՝ տարածություն մեջ դասավորվում են վորոշ կարգով: Մի շարք որինհաշվառված բյուրեղներ կարելի չի դանել, վորոշ յենթարկվում են բյուրեղների ձևերը, և բյուրեղները կարելի չի բաժանել մի քանի վորոշակի «սխտեմներ»: Բյուրեղների ուսումնասիրությունը զբաղվում է բյուրեղագիտությամբ:

Բացի արտաքին ձևից, բյուրեղներն ունեն նաև այլ բնորոշ հատկություններ: Այսպես, բյուրեղային նյութն իր բոլոր մասերում քիմիական համասեռ լինելով՝ տարբեր ուղղություններով ֆիզիկական տարբեր հատկություններ ունի: Բյուրեղների այդ առանձնահատկությունը բացատրենք որինհակով: Յենթադրենք, վոր բյուրեղներից մեկից միատեսակ մեծություն մի քանի ձողիկներ (առանցքներ) են կտրված, բայց այնպես, վոր նրանց ուղղությունները բյուրեղի մեջ իրար հասվելով տարբեր անկյուններ են կազմում (նկ. 21): Այդ առանցքների հետագոտությունը ցույց է տվել, վոր նրանք կտրվում են վոր միատեսակ հեշտությունը և տարբեր անկյուններով, ունեն ուղղակի կան տարբեր հատկություններ, տարբեր ջերմահղորդականություն և այլն:



Նկ. 21. Կերակրի աղի բյուրեղից կարած ձողիկներ:

Շատ բյուրեղներ տարբեր ուղղությունների տարբեր հատկությունները խիստ կերպով արտահայտվում են այսպես կոչվող զոդվածությամբ (սերտ կապի) մեջ. այդ այն է, վոր բյուրեղները հեշտությունը ձեղքվում են վորոշակի մի քանի ուղղություններով: Այսպես, որինակ, քարաղի կտորը կտրելիս նա միշտ ձեղքվում է իրար ուղղահայաց հարթություններով այնպես, վոր ստացված կտորները սովորաբար լինում են զուգահեռանիստի ձևով: Զոդվածության սրանչելի որինակ է հանդիսանում փայլառը, վորն, ինչպես հայտնի չի, հեշտությունը բաժանվում է բարակ թերթիկների:

Բյուրեղների նկարագրած հատկությունների հիման վրա, նյութը մենք կարող ենք կոչել բյուրեղային և այն դեպքում, յերբ նա չունի բյուրեղի ձևով:

Այն նյութերը, վորոնց մեջ բյուրեղների հատկանիշներ մենք հայտարերել չենք կարող և վորոնց հատկությունները բոլոր ուղղություններով միատեսակ են, կոչվում են վոր բյուրեղային կամ ամաֆ (հունարեն «ամորֆոս» բառից, վոր նշանակում է անձև): Ամորֆ նյութերի որինակներ կարող են ծառայել՝ ապակին, ցելյուլոզիդը, ժելատինը, խեժը, դումարաբրիկը և այլն:

Ապակու կտորին արհեստականորեն կարելի չի խորանարդի ձև տալ և հղկել նրա յեղբերը: Մյուս կողմից հարթ մակերեսներից կարելի չի գրկել աղի բյուրեղը, որինակ, նրան դնել ձև տալով: Բայց և այնպես հեշտ է տարբերել, վոր առաջին դեպքում, չնայած բյուրեղի արտաքին ձևին, մենք ունենք ամորֆ նյութ, յերկրորդ դեպքում—բյուրեղային նյութ: Հարվածից ապակի խորանարդը կձեղքվի անձև կտորների, այն ինչ կերակրի աղից շինված դուշը կձեղքվի միանգամայն վորոշ ուղղություններով, տալով զուգահեռանիստ ճիշտ ձևի կտորներ:

Բավականին շատ նյութեր կան, վորոնք հայտնի չեն թե վորպես ամորֆ և թե վորպես բյուրեղային նյութեր: Այդ պատճառով ել ասում են, վոր հյութերը կարող են լինել թե ամորֆ և թե բյուրեղային դրություն: Այսպես, մեզ ծանոթ պղինձոքսիդի սև փոշին ամորֆ դրության նյութ է: Նույն այդ սքսիդը բնություն մեջ պատահում է բյուրեղային ձևով, այսպես կոչվող պղնձի սև հանքի ձևով: Հանգամ կիրը սովորաբար ստացվում է ամորֆ դրությամբ, բայց կարելի չի ստանալ նաև փայլող խորանարդաձև բյուրեղներով:

Բյուրեղներ կարելի չի ստանալ վոր միայն լուծույթներից, այլ և հեղուկ նյութերը սառելուց (սառուցը բյուրեղային նյութ է, հալված մնացածները սառելիս առաջացնում են բյուրեղային կառուցվածք ունեցող պանգված), մի քանի նյութերի գոլորշիները սառեցնելիս (ինչպես որինակ՝ յոդը) յեղ քիմիական մի բանի առեղծոքների ծանաթակ:

Չեղուկները կարող են լուծվել այլ հեղուկների մեջ կամ ամեն հարաբերությունը, ինչպես սպիրտը և ջուրը, նավթը և բենզինը և այլն, կարող են բոլորովին չլուծվել, ինչպես սնդիկը

և ջուրը, յուզը և ջուրը, կամ վարոչ գեպքերում լուծվում են վոչ ամբողջությամբ. դրանց վրա մենք կանգ չենք առնի:

▲ Փորձ 3. Ջուրը յուզի հետ թափահարեցեք և ապա թողեք հանդիսազրույթյամբ ճուղը բարձրանում և ջրի յերեսը: ▲

Վարպետի համոզվեք, վոր գազերը կարող են լուծվել ջրի մեջ, հետևյալ փորձը կատարեցեք:

▲ Փորձ 4. Փորձանոթն ամբողջովն լցրեք ջրմուղի կամ ջրհորի թարմ ջրով և պիտիվարե խնցրեք ջրով լի բաժակի մեջ ու առաջըրեք փորձանոթի վերն մասը (չեռացնել), ինչպես այդ սույն և արված 22-րդ նկարում: Փորձանոթի վերևի մասում հավաքվում են ջրից անջատվող ողի պղպղակները:

Տարագնիչուց գազերի լուծելիությունը փորձանում ե. իսկ ստույգնիչուց՝ մեծանում: Վորքան փորձի համար վերցրած ջուրը ասոր լինի և վորքան ուժեղ տաքացնեք, այնքան ևս շատ գազ կանջատվի նրանից:

Սեռացնելու միջոցով ջրից կարելի չե հեռացնել նրա մեջ լուծված բոլոր գազերը: ▲

Ջրում լուծված սպով շնչում են ձկները: Նրանք ջարն անդնդհատ անց են կացնում խոռիկների միջով, վորոնք փոխաբինում են թոքերին:

Գազերի լուծելիությունը ջրում մեծանում և, յերբ մեծանում և այդ գազի վրա յեղած ննծույթ:



Նկ. 22. Ջրից վրա մեջ լուծված ողի անջատելը:

կիմանալ, սխորտ և այլ փմիչքներ պատասակիս շքի մեջ ամխաթթուս գազը մյուս են ճնշման տակ. ամխաթթուս լուծվում և ջրի մեջ բավական մեծ քանակությամբ: Եջի բերանը բացելիս գազի վրա յեղած ճնշումը վերքանում և, հավասարվում և միջնորդողին ճնշման, և սրում լուծված գազը ֆոշայով անջատվում և լուծույթից:

2. Ջրի բաղադրույթը: Վարեն նյութ ուսումնասիրելիս կարևոր հարցերից մեկը նրա բաղադրության հարցն է, այն և՛ բնորդ և՛ այդ նյութը, թե՛ պարզ, այնպես կարելի չե այդ նյութը տարրալուծել կամ ուրիշ նյութերից ստանալ, թե՛ փոչ:


Ջուրը բաղադրված է և կարելի չե տարրալուծել ելեկտրական հոսանքով:

Մարտո Գուրն ելեկտրական հոսանք համարյա չի անդհացնում: Այդ պատճառով ել վորձի հաներ վոչ թե մաքուր ջուր

են վերցնում, այլ վորեն նյութի լուծույթ, վոր այն փորձի ժամանակ հետև և լուծույթում նույն քանակությամբ, ինչ քանակությամբ վոր վերցված և յեղել սկզբում, և քիմիապես չի փոխվում (ծծմբաթթու, կծու նատրիում, կիր, սուղա):

Այդ փորձը կատարելու գործիքը պատկերված է 23-րդ նկարում:

Յեթև բաց թողնենք հոսանքը, այն ժամանակ ելեկտրոդները, ջրում յեղած թիթեղները կսկսեն ծածկվել գազերի պղպղակներով, վորոնք բարձրանալով վեր, հավաքվում են ելեկտրոդների վրա զրված փորձանոթների մեջ: Փորձանոթներից մեկի մեջ հավաքված գազի ծավալը յերկու անգամ մեծ է, քան մյուս փորձանոթի գազի ծավալը: Դյուրին և համազվել, վոր ստացած գազերը տարբեր են և տարբերվում են ողից: Առկայծող մարիք մոտեցնելով քիչ գազ պարունակող փորձանոթի բերանին, մենք նկատում ենք, վոր առկայծող մարիք բոցավառվում է: Այդ գազը մեկ ծանոթ քրվածիմն է: Մյուս գազն այրվում է, կարելի չե վառել: Այդ գազը ջրածինն է:



Նկ. 23. Ելեկտրական հոսանքով ջուրը տարրալուծելու գործիք:

Ջրի տարրալուծման սեակցիան կարելի չե արտահայտել հետևյալ հավասարությամբ՝

$$\text{Ջուր} = \text{ջրածին} + \text{քրվածին}:$$
 Այսպես ուրեմն, ջուրը բարդ նյութ է: Ջուրը տարրալուծելիս ստացվում է յերկու ծավալ ջրածին և մի ծավալ քրվածին:

Վոր իրոք ջուրը բարդ նյութ է, կարելի չե հեռացնել վոչ միայն այն փորձի հիման վրա, վորով նրա միջով ելեկտրական հոսանք են անցկացնում, այլև ջրի և մի քանի մետաղների միջև սեղի ունեցող ռեակցիաների հիման վրա:

▲ Փորձ. Փորձանոթի մեջ վորը պարունակում է 1—2 սմ³ ջուր, դրեք կալցիում մետաղի խառուրդ և անջատվող գազը փորձեցեք վառվող մարտով: Այդ ջրածինն է. կալցիումի փոխարեն ինչ սպիտակ նյութ ստացվեց: Այդ նյութը սովորական հանգած կիրն է. փորձով դուք հեշտությամբ կհամոզվեք այդ բանում: Այդ փորձանոթի մեջ քիչ ջուր ավելացրեք, ուժեղ թափահարեցեք և աղա լուծույթը քամեցեք մի ուրիշ փորձանոթի մեջ: Վորպեսզի համոզվեք, վոր քամած այդ լուծույթը կրաջուր է, այսինքն, կրի լուծույթը ջրի մեջ, խոզովակով փչեք նրա մեջ ձեր արտաշնչած ոդը: Զուրը պղտորվում է: ▲

Կիրը բարդ նյութ է: Նրա բաղադրությունը մեջ մտնում է կալցիում մետաղը, վորով մենք ներդրածեցինք ջրի վրա:


Կալցիումի և ջրի միջև տեղի ունեցող ռեակցիան կարելի չէ արտահայտել այսպես՝

Ջուր + կալցիում = կիր + ջրածին:

Վոր իրոք ջուրը բարդ նյութ է, առաջին անգամ ապացուցեց ֆրանսիացի հայտնի գիտնական Ս. Լավուազյեն (Lavoisier, 1743—1794) 18-րդ դարի վերջում:

Լավուազյեն դիտեց նաև մետաղի ու ջրի միջև տեղի ունեցող ռեակցիան, բայց նա վոչ թե կալցիում վերցրեց, վորն այն ժամանակ դեռ հայտնի չէր, այլ յերկաթ, վորը ռեակցիայի մեջ է մտնում ջրի հետ միայն շիկացրած ժամանակ: 24-րդ նկարում ցույց է արված Լավուազյեյի գործիքը:

Ա սետորտում յեռացող ջրի գույրը շինենք անց ելին կենում շիկացրած յերկաթյա B խողովակի միջով: Յերկաթի և ջրի միջև



Նկ. 24. Լավուազյեյի գործիքը՝ ջուրը տարբալուծելու համար:

տեղի ունեցող ռեակցիայի հետևանքով անջատվող ջրածինը հավաքվում էր C անոթի մեջ: Յերկաթի հետ ռեակցիայի մեջ

չմտած ջրի գույրը շինենք ստեղծվում էլին D ստանարանում, իսկ ջուրը հավաքվում էր E անոթի մեջ:

Լավուազյեն հայտարարեց, վոր յերկաթյա խողովակը ներսից ծածկվում է սև շերտով: Այդ շերտը՝ թթվածնի և յերկաթի միացությունն է, մազնիսային յերկաթօքսիդ (ձգվում է մազնիսից):


Ջրի և յերկաթի միջև տեղի ունեցող ռեակցիան կարելի չէ պատկերացնել այսպես.

Ջուր + յերկաթ = յերկաթօքսիդ + ջրածին:

Ջրի և մետաղի միջև տեղի ունեցող ռեակցիան միացման ռեակցիա չէ, վորի ժամանակ յերկու նյութերից ստացվում է մի նյութ և վոչ ել վերլուծման ռեակցիա, վորի ժամանակ մի նյութից ստացվում են յերկու և ավելի նոր նյութեր:

Մենք վերցնում ենք յերկու նյութ—ջուր և մետաղ, և ստանում ենք յերկու նոր նյութ—մետաղօքսիդ և ջրածին: Մեզ համար նոր տիպի այս ռեակցիան կոչվում է փոխարինման ռեակցիա:

Ջրի և յերկաթի միջև կատարվող ռեակցիան կարելի չէ պատկերել ավելի գննական ձևով, ջրի և յերկաթօքսիդի բաղադրության մասերն առնելով շրջանակներին մեջ.



Յերկաթը ջրի մեջ փոխարինում է նրա ջրածնին, գրավում է նրա տեղը—առաջացնելով յերկաթօքսիդ, իսկ ջրածինն անջատվում է ազատ վիճակում:

Բացի կալցիումից ու յերկաթից, կան ուրիշ մետաղներ, վորոնք ռեակցիա չեն տալիս ջրի հետ, ինչպես մազնեղիումը, ցինկը և ալումինումը: Բայց կան մի ամբողջ շարք մետաղներ, վորոնք ջրի հետ նման ռեակցիա չեն տալիս, որինսակ՝ պղինձը, սնդիկը, արծաթը:

ԿՐԻՆՈՂԱՄԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ի՞նչպես պետք է վորոշել ջրի տոկոսը կաղամբի մեջ:
2. Զուրը յերկրի մակերեսի վրա մտն է կազմում:
3. Ի՞նչ խառնուրդներ են ունենում բնական ջրերը:
4. Ինչու վորոշ տեղերում չի կարելի հում ջուր խմել:

- 5 Ինչից ե առաջանում կաթանների կորկը (какимъ):
- 6 Աղբյուրի անդունդն ու թափանցիկ ջուրը կարելի՞ յն համարել միանգամայն մաքուր ջուր:
- 7 Ի՞նչպես պետք է ստանալ միանգամայն մաքուր ջուր:
- 8 Թ՛վեցիք մաքուր ջրի Ֆլորիդական հատկությունները:
- 9 Ի՞նչ բան է հազեցած լուծույթը:
- 10 Ի՞նչպես պետք է համոզվել, թե ավելի նյութը ջրում լուծելի յե, թե վոչ:
- 11 Ի՞նչ բան է լուծելիությունը:
- 12 Ի՞նչ դեպքում է լուծված նյութն անջատվում հազեցած լուծույթից:
- 13 Ի՞նչ վիճակումն է անջատվում լուծված պինդ նյութը հազեցած լուծույթից:
- 14 Բյուրեղային նյութերն ինչ՞ով են տարբերվում վոչ բյուրեղայիններից Ի՞նչպես են կոչվում վոչ բյուրեղային նյութերը:
- 15 Գազերի լուծելիությունը ջրում ի՞նչից է կախված:
- 16 Գազերի լուծելիության վրա ջրում ի՞նչպես է ազդում տաքության բարձրացումը և ինչպես է մնչսան բարձրացումը:
- 17 Ի՞նչպես կարելի յն տարբարվածել ջուրը Գրեցեք ջրի տարբարվածման սեակցիայի հավասարումը:
- 18 Ջրի տարբարվածումը առաջացած գազերը ծավալային ի՞նչ հարաբերություններով են լինում:
- 19 Ջուրը վճր սեռագնների հետ է սեակցիա տալիս: Գրեցեք համապատասխան սեակցիաների հավասարությունները:
- 20 Ի՞նչ բան է փոխարինման սեակցիան:

III ԹԹՎԱՍԻՆ ՅԵՎ ՋՐԱՍԻՆ

Մենք ծանոթացանք ջրի հատկություններին, իմացանք, վոր ջուրը բարդ նյութ է և բազկացած է ջրածնից ու թթվածնից: Վորեն նյութի ուսումնասիրությունը լրիվ չի լինի, յեթե մենք չծանոթանանք այդ նյութի բազադրիչ մասերի հատկություններին:

I. Թթվածին ստանալն ու նրա հատկությունները: Մոդիկոքսիդը քայքայելիս մենք ստացանք թթվածին: Թթվածինն անզույն է և հոտ չունի. նա ողից քիչ ծանր է: Մի լիտր սղը նորմալ պայմաններում կշռում է 1,29 գ, իսկ մի լիտր թթվածինը՝ 1,43 գ: Թթվածինը ջրում քիչ է լուծվում, այդ պատճառով ել կարելի յն հավաքել ջրի վրա:¹⁾

Թթվածին ստանալու համար լաբորատորիաներում սովորաբար ոգտվում են բերտոլեայան ազից:

1) 100 ծավալ ջրի մեջ լուծվում է 4 ծավալ թթվածին:

▲ Փորձ. Միանգամայն մաքուր ու չոր փորձանոթի մեջ վերցրեք շատ քիչ քանակությամբ բերտոլեայան ազ, $\frac{1}{2}$ սանտիմետրից վոչ աղելի (նկ 11) ու տաքացրեք: Աղբյուր աղը հալում է և ապա կարճեք թե սկսում է յեռալ: Այդ ժամանակ արդեն աղը յն ունենում աղի քայքայումը: Անջատվող թթվածինը փորձեցեք առայժող մտրխով:

Բերտոլեայան աղի քայքայումը կարելի յն արագացնել մանդանդիոքսիդի սգնու թթվածնով):

Մի սերիչ փորձ՝ ոթի մեջ դարձյալ նույն քանակությամբ (ինչպես առաջին փորձանոթի մեջ) բերտոլեայան աղ վերցրեք: Տաքացրեք մինչև հալվելը, բայց վոչ շինչ քայքայվելը: Հալած բերտոլեայան աղի մեջ մի փոքր մանդանդիոքսիդ դրեցեք և իսկույն փորձեցեք առայժող ստրխով: Գուք կնկատեք թթվածնի յեռանդուն անջատում: ▲

Մանդանդիոքսիդի առկայությունը բերտոլեայան աղը մեծ արագություն սկսում է քայքայվել ավելի ցածր ջերմաստիճանի տակ, քան առանց մանդանդիոքսիդի²⁾: Այդ ժամանակ մանդանդիոքսիդը վոչ փոփոխվում է և վոչ ել ծախսվում, այլ արագացնում է սեակցիան, վոր ինքն ըստ ինքյան շատ դանդաղ է ընթանում: Վորոչ նյութերի սգնությունը, վորսնք սեակցիան վերջանալուց հետո մնում են անփոփոխ, սեակցիաների արագացման յեռույթին մենք հետազայում հաճախ ենք պատահելու: Սեակցիան արագացնող նյութերը կոչվում են կատալիզատորներ, իսկ ինքը յերևույթը—կատալիզ: Տարբեր սեակցիաների համար տարբեր կատալիզատորներ կան:

Թթվածին ստանալու համար սովորաբար վերցնում են բերտոլեայան աղի յեվ մտնգանդիոքսիդի խառնուրդ:


Անհրաժեշտ է նկատել, վոր բերտոլեայան աղի հետ գործ ունենալիս պետք է շատ զգուց լինել և այն, բացի մանդանդիոքսիդից, վոչ մի նյութի հետ չխառնել: Բերտոլեայան աղի խառնուրդը շատ նյութերի հետ, սրինակ՝ ածխի, ծծմբի, անդամ թղթի կտորների հետ վստնգավոր պայքյուններ է առաջացնում: Այն փորձանոթը, վորի մեջ բերտոլեայան աղի հետ փորձեր են կատարվում, միանգամայն մաքուր պետք է լինի:

1) Մանդանդիոքսիդը հաճախ կոչվում է նաև մանդանդիոքսիդ: Այդ անունն այժմ հնացած է, վորոչ հետև մանդանդիոքսիդն իր հատկություններով վոչ թե պերոքսիդներին է պատկանում, այլ ըլմ ական միացություններին այլ գասին (անհիդրիտներին. տես ստորև):

2) Ջուր վիճակում բերտոլեայան աղը բավական արագ կերպով է քայքայվում—սոտ 400°, իսկ մանդանդիոքսիդի խառնուրդի հետ՝ մինչև 200°:

Մանոթուլու. Բերտոլեայան աղն իր անունն ստացել է այդ աղն առաջին անգամ ստացող Ֆրանսիացի հայտնի չիմիկոս Բերտոլի (Bert-hollét) անունից, վոր ժամանակակից էր Լավուազյեյին: Այդ պատճառով էլ չի կարելի նրան «բերտոլեայան» աղ ասել, ինչպես այդ ասում են հաճախ, այլ պետք է ասել «բերտոլեայան» կամ «Բերտոլեյ» աղ:

2. Թթվածին հավաքելը յեվ նրա մեջ զանազան նյութեր այրելը. Վորովհետև թթվածինը քիչ ծանր է ուղից, դրա համար էլ այն կարելի յե հավաքել վոչ ին ջրի վրա, այլ բերանը բաց ամանի մեջ՝ ողը դուրս մղելու յեղանակով: 25-րդ նկարում ցույց է տրված, թե բաժակն ինչպես են լցնում թթվածնով: Գազատար խողովակը համարյա մինչև հատակն ընկղմած է բաժակի մեջ: Բաժակը ծածկված է a ստվարաթղթի կտորով: Թթվածինը հավաքվում է բաժակի հատակին և, դուրս մղելով ողը, աստիճանաբար լցնում է ամբողջ բաժակը: Վորպեսզի վորոշենք, թե բաժակն ամբողջությամբ թթվածնով լցված է, ին վոչ, ստվարաթուղթ քիչ այն կողմն ենք տանում և բաժակի մեջ, շատ կարճ ժամանակով, մտցնում ենք առկայծող մարխը: Յեթե բաժակը լցված է թթվածնով, ապա առկայծող մարխը բաժակի բերանի մոտ բոցավառվում է:



Նկ. 25. Թթվածին ստանալու գործիք:

Նկ. 26. Թթվածնի ստանալու մեջ այրելու գործիք:

▲ Փորձ ե. Թղթը վրա (բայց վոչ հավանդի մեջ) իրար խառնեցեք 2 գդալ բերտոլեայան աղ և մի գդալ մանգանդիլոքսիդ (փոշու վիճակում), ածեցեք փորձանոթի մեջ և հորիզոնական զերքով ամրացրեք շատիվի վրա, ինչպես ցույց է տրված 25-րդ նկարում: Փորձանոթը տաքացրեք իր հատակից սկսած: Թթվածինը հավաքեցեք բաժակի կամ բանկայի մեջ: Ժամանակ առ ժամանակ ստուգեցեք թթվածինը՝ բաժակի մեջ մտցնելով առկայծող մարխը, բայց չթողնեք վոր մարխը թթվածնի մեջ այրվի, վորպեսզի թթվածինն իրար անող չծախսվի, այլ իսկույն բաժակից հանեք: Հենց վոր բաժակը թթվածնով լցվի, շատիվը փորձանոթի հետ միատին բարձրացրեք և թթվածնով լցված ամանի բերանը ստվարաթղթով ծածկելով թողեք մնա, իսկ նրա փոխարեն մի ուրիշը դրեք:

Այդ ձևով 4-աման լցրեք թթվածնով և նրանց մեջ այրեցեք հեակայլ նյութերը: ▲



Նկ. 26. Թթվածնի մեջ այրելու գործիք:

▲ 1. Ունեիլով կամ պինցետով բռնեցեք փայտածխի մի կտոր, շիկացրեք սպիրտայրոցի բոցը վրա ու փչեցեք, վոր նա սկսի առկայծել: Հետո առկայծող այդ ածուխը յերկարագույն (նկ. 26) գդալի մեջ զնելով իջեցրեք թթվածնով լի բանկայի մեջ: Ածուխը շարունակում է այրվել առանց բոցի, բայց պիլի պայծառ է, քան ողում, և առաջ է բերում ամիսաքրու գազ:

Ամանի մեջ կրաջուր ածեցեք, ամանը ձևըն փոփով ծածկելով՝ լավ թափահարեցեք: Կրաջուրը սղորովում է:

2. Ներկարագույն գդալի մեջ ձմբի մի փոքր կտոր դրեք (սխեսի մեծությամբ), կամ մի քիչ ձմբափոշու, տաքացրեք սպիրտայրոցի վրա մինչև վառվելը և իջեցրեք թթվածնով լի բանկայի մեջ:

Մծումը այրվում է մ'ստուշակաղույն պայծառ բոցով և միանալով թթվածնին՝ առաջ է բերում ձմբային գազ, վորը սուր հոտ ունի:

3. Ներկարս այրելու համար, վոր ողում, ինչպես մեզ հայտնի յե, չի այրվում, ուղղում են բարակ սանդուղ: Ասեղն անցքի կողմից մտցրեք մարխի ծայրը (նկ. 27). սանդի ծայրին հողցրեք լուցիլու մի կտոր: Վասեք լուցիլին և իջեցրեք թթվածնով լի բանկայի մեջ: Աղբյուրում կլաավի լուցիլին և ապա կայրվի նաև սանդը: Ասեղի փոխարեն կարելի յե վերջնել շատ բարակ լար (որինձի՝ բաշալայիայի լարը): Ստացվում է յերկաթի մագնիսական սքսիդ (ձգվում է մագնիսից): ▲

Թթվածնի մեջ այրվելու յեռանդուն են այրվում նաև ուրիշ շատ նյութեր: Ինչպես օրինակ, ֆոսֆորը չի կարող այրվում է կուրացնող սպիտակ բոցով, առաջացնելով թթվածնի հետ մանր փոշու ձևով պինդ միացություն (սուլֆուրիկ օուխ):


Սուր թթվածնի մեջ այրվում է պայծառ սպիտակ բոցով, վորն էլիկարական լամպի պես լույս է տալիս:

3. Տեխնիկական յեղանակով քրվածիք ստանալու ու նրա գործագրումը: Այրումը թթվածնի մեջ գործնականում կիրառում են այն դեպքում, յերբ պահանջվում է արագ և շատ ուժեղ կերպով տաքացնել, շատ բարձր ջերմաստիճան ստանալ, սրինակ՝ մետաղները հալելու, զոդելու և կարելու համար՝ քրվածնացեխիկնային այրոցների ուղնությամբ (նկ. 28 և 29): Այդ այրոցներում այրվում է ացետիլեն գազը, վոր խառնվում է թթվածնի հետ այրոցի անցքի մոտ: Այդ աշխատանքների համար շատ մեծ քանակությամբ թթվածին է պահանջվում: Բացի այդ, թթվածինը գործագրում են թե պատերազմի ժամանակ և ին արտադրության մեջ թունավոր գազերով թունավորվածներին փրկելու համար:



Նկ. 27. Ձուրայրում է կուրացնող սպիտակ բոցով:

մար: Կենսականներին մարտը թթվածին են տալիս շնչելու համար: Նույնն են անում և մի քանի հիվանդությունների ժամանակ: Իրենց հետ սողապատյա գլանների (բալոնների) մեջ թթվածին են վերցնում նաև ողագնացները, վարսնք շատ վերև են



Նկ. 28. Յերկաթի զորումը թթվածնա-ացեալիկենային արոցի ոգնությամբ: Լաբորը, փոք վարպետը բռնել է ձեռքին, հալվում է և լցնում զորվող առարկայի կորը:



Նկ. 29. Մեռաղը թթվածնա-ացեալիկենային բուցի ոգնությամբ կտրելը:

բարձրանում, փորտեղ ուղի նստրության պատճառով դժվար է շնչել: Թթվածնով են ողավում ու շնչում նաև փրկարար ջուկառները հանքերում՝ հանքային զաղի պայթյունից հետո, յերբ մթնոլորտը թունավորված է լինում պայթյունի ժամանակ առաջացած շնորագազով:

Նման ջուկառներից մեկը պատկերացված է 30-րդ նկարում: Բանվորների մեջքին յերևում են թթվածնով լի պողպատյա գլանները:

Թթվածնով լցված պողպատյա գլանները զործադրում են նաև ուղիական զործում այն թունավոր նյութերից պաշտպանվելու համար, վարսնք սովորական հակազագերից չեն կրանվում (Նկ. 31):

Վերջուպես թթվածինը զործադրում է զուտ քիմիական մի քանի արտադրությունների մեջ:


Դսկ ինչպես և ստացվում մեծ քանակությամբ թթվածին՝ տեխնիկական նպատակների համար:



Ն 30. Փրկարար ջուկառը հանքերում. յուրաքանչյուրը մեջքին ունի թթվածնով լի գլան. գլանից թթվածինն անցնում է սեղինս պարկի մեջ, փոք գանվում է յախապահպանակ առ փի մեջ, իսկ այնտեղից ել՝ զեմքին հագած կրտադիմակը:

Այն բոլոր նյութերը, վարսնցից թթվածին են ստանում լաբորատորիաներում, արդյունաբերական նպատակների համար պիտանի չեն: Այդ նյութերը, վար պատրաստվում են արհեստական կերպով, մասնաշաղկան արտադրության համար լիանդ են: Մասնաշաղկան արտադրության համար աշխատում են ունենալ բնական և աման նյութ: Այստեղ արտադրության բարդությունը ու զործիքների թանկությունը քիչ գեր են խաղում: Յեթի պրոդուկտը քիչ քանակությամբ է հարկավար, լիանդ ու բարդ սարքավորման կարիք չկա: Այդ զեպքում ձեռնառու յե թանդ նյութ վերցնել, վորից, առանց վորեկ հատուկ սարքավորման, եեջա ու պարզ ձևով ստացվում է հարկավար պրոդուկտը:

Մասսայական արտադրութեան ժամանակ բարդ սարքավորումներն ու գործիքներն աստիճանաբար իրենց ծախսը հանելով՝ աժան նյութից ստացվող պրոդուկտն էլ աժան է նստում:



Նկ. 31 Գոգառոյա բարձր թթվածնով շնչելու հակադպր:

1—ըթի սեղմիչ, 2—ըթնոց, 3—մլացնող սեպիտն խողովակ, 4—փականների կաճեր: 5—ներքնչման փական, 6—արտաշնչման փական, 7—թթվածնային դրանի վեճիտ, 8—թթվածնային դրան: 9—Ֆիլնեմետր (դրանի մեջ յեղած թթվածնի ցուցիչ): 10—կոճակ, վոր փակում ու բացում է փամփուշտից զեպի բարձրը գնացող թթվածնի անցքի համար: 11—կծու կայուն պարունակող փամփուշտ, արտաշնչված ամթաթթու գազը կլանելու համար: 12—թթվածնային բարձր: 13—սառնեցնող խողովակ:

միական հատկութուններին: պետք է ստանալ բավականին քանակութեամբ:

Լարորատորիաներում ջրածին ստանալու համար սովորաբար ոգավում են վոչ թե ջրով, այլ ծծմբաքրվով կամ աղաքրվով,

թթվածին ստանալու համար ամեն տեղ մտաչելի է մեծ քանակութեամբ թթվածին պարունակող յերկու նյութ կա—դրանք են՝ օդը և ջուրը: Այդ յերկու նյութն էլ հենց ոգաադրում են տեխնիկայում: Մենք արդեն գիտենք, վոր ջրից կարելի է ստանալ թթվածին: Ջրածնի հետ միաժամանակ, երկարական հոսանքի ներգործութեան սակ (կամ երկարուղիի միջոցով)—յուրը տարրալուծելով: Այդ յեղանակով էլ ոգավում են տեխնիկայում:

Ողից թթվածինն անտուվում է դարձյալ բարդ յեղանակով, վորի վրա մենք այստեղ կանգ չենք առնի:


Ստացվող թթվածինը ճնշման տակ մղում են պրոպանոյա դրանները (նկ. 32) և դրանցով ուղարկում արտադրութեան:

4. Զրածին ստանալը: Զրի յերկրորդ բաղադրիչ մասը ջրածինն է, Այժմ մենք պետք է ավելի մանրամասն ծանոթանանք ջրածին ստանալու յեղանակներին և նրա ֆիզիկական ու քիմիական հատկութեանը:

Այդ նպատակի համար ջրածին

վորնց բաղադրութեան, ինչպես և բոլոր թթուների բաղադրութեան մեջ՝ ջրածին կա:

Թթուներից ջրածինը կարելի է անջատել, ինչպես և ջրից՝ մեաաղների ոգնութեամբ: Այդ նպատակի համար սովորաբար ոգաադրում են ցինկ մետաղը: Թթուն միշտ վերցնում են ջրի մեջ լուծված վիճակում:



Նկ. 32. Բառնի թթվածնով:

▲ Փորձ 1. Փորձանոթի մեջ վերցրեք 1-2 մլ թթվի լուծույթ և նրա մեջ մի կտոր ցինկ պեք: Յերը սկսվել ջրածնի ուժեղ անջատում, փորձանոթի բերանին մոտեցրեք վառվող լուցկու բոցը: Ուշադրութեան դարձրեք այն բանին, վոր ջրածինը յերբեմն այրվում է հանդիստ կերպով, իսկ յերբեմն էլ սուր շառաչուծով—պայթումով: Զրածնի յեկ ողի խառնուրդ պայթում է:

Յերը ջրածնի անջատումը փորձանոթից դադարի, վորոչեցեք այն խնդրը, թե արդյոք մետաղի և թթվի միջև տեղի ունեցած սեպիցիայի ժամանակ բացի ջրածնից, վորեք այլ բան ստացվում է, թե վոչ: Այդ նպատակի համար ապակու կտորի վրա, յեղին մոտ, փայտի փոքրիկ ձողիկի մեջուցով սի կաթիլ թթու կաթեցրեք այն թթվից, վորով դուք աշխատում ելիք, և նրա կողքին մի կաթիլ այն փորձանոթի հեղուկից, որտեղ դուք սեպիցիա կատարեցիք և վորտեղ մնացին հեղուկը և ցինկի չքայլալված կտորները: Ապակին պահեցեք լամպի բոցի վրա, բայց վոչ բոցի մեջ, վորպետեղ սպակին չարաքի (նկ. 33): ▲

Ապակու վրա թթվի լուծույթի կաթիլը գոլորշիացնելիս տակը վոչինչ չի մնում, իսկ յերբ գոլորշիացնում են այն լուծույթը, վոր ստացվում է մետաղի ու թթվի միջև տեղի ունեցած սեպիցիայի հետևանքով, ապակու վրա մնում է սպիտակ փառի նման մի պինդ նյութ: Այդ նյութը ցինկարջաասլն է, յեթև վերցված է յեղել ծծմբաթթու: Աղաթթու վերցնելու զեպը ստացվում է ցինկաքրվից: Այս յերկու նյութերն էլ սպակառում են աղերի դասին, վորոնց մենք հետագայում կժանոթանանք ավելի մանրամասնորեն: Յերկու աղերն



Նկ. 33 Ապակե թիթեղի վրա գոլորշիացնում են հեղուկ կաթիլները:

եղ լուծված են յեղել ջրի մեջ: Այդ այն ջուրն է, վորի մեջ լուծված եր վերցրած թթու: Սկզբում կար թթվի լուծույթ, հետո ստացվեց աղի լուծույթ:

Օժմբութի լուծույթ + ցինկ = ցինկարջասպ + ջրածին:

«Լուծույթ» բառը սովորաբար չեն գրում, վորովհետև ջուրը սեակցիայի մեջ չի մտնում, ինչքան վոր կար, այնքան ել մնում է: Գրում են այսպես.

Օժմբութի լուծույթ + ցինկ = ցինկարջասպ + ջրածին:

Այստեղ աղի յե ունենում փոխանակման սեակցիա:


Այժմ անցնենք ջրածին ստանալուն:

Ջրածնի հետ փորձեր կատարելիս անհրաժեշտ է խստիվ պահել ստորև բերված բոլոր ցուցումներն ու նախազգուստիան միջոցները:


Ջրածնի հետ փորձեր կատարելիս նախազգուշական միջոցները չպահելու դեպքում կարող է առաջ գալ վտանգավոր պայթյուն, այնինչ նախազգուշական միջոցներ պահելու դեպքում փորձերը միանգամայն անվտանգ են:

▲ Փորձ 2 34-րդ նկարում ցույց տրված սրվակի մեջ գրեք ցինկի կտորներ այնքան, ինչքան վոր ցույց է տրված նկարում:

2—3 փորձանոթը ցրեք ջրով և շուտ աված ձեռով գրեք ջրով լի բաժակի մեջ: Չափարի մ. ջով ցինկի վրա Ռյ-Ռյ թթու ամեցեք և խստիվ, չսպասելով, վոր անոթից սքր դուրս գա, սկսեցեք հագաքել խողովակից դուրս յեկող գազը:



Նկ. 34. Ջրածին ստանալու դրժիք:



Նկ. 35. Ջրածնի գուտ լինելու ստուգումը:

Փորձանոթը գազով լցնելուց հետո նրա բերանն իս ույն մտակցեք լամպի բացին: Փորձանոթը ջրից հանելով նրա փոխարեն մի ուրիշը գրեք և ուրիշ կրկնեցեք ստուգումը: Առաջին փորձանոթի մեջ կլինի համարյա մաքուր սպառա կլինի ջրածնի և ողի խառնուրդ: Այդ խառնուրդը պայթում է սուրացով (փորձանոթի մեջ այդ պայթյունը միանգամայն անվտանգ է): Վերջում կստացվի մաքուր ջրածին, վորը կսկսի հանախոտ այրվել՝ առաջացնելով սղը պա թեթև ձայն, առանց սուրցի: ▲

Յերբ ջրածինը փորձանոթի մեջ վառվի, փորձանոթը շուտ ավելք ու զե սեք փորձանոթի մեջ ջրածնի համարի անդույն բոցը:

5. Ջրածնի հասկուրթյունեցեք. վորպեսզի իմանանք՝ ջրածինն ողից թեթև և արդյոք, թե՞ ծանր, հետևյալ փորձը կատարենք:


▲ Փորձ. Ջրածնով լի յերկու փորձանոթ վորոշ ժամանակ պահեցեք հետևյալ ձևով—մեկը՝ բերանը վեր գործրած, իսկ մյուսը՝ ներքև, և ապա յերկուսի բերաններն ել մտակցեք լամպի բոցին: Առաջին փորձանոթի մեջ պայթյուն չի առաջանում, իսկ յերկրորդի մեջ առաջանում է:

Կատարած փորձերը ցույց են տալիս, վոր ջրածինն ողից քթիվ է: Այդ բանում կարելի չի համոզվել նաև այն դեպքում, յեթե ջրածնով լցնենք սապոնի բշտիկները: Սրանք արագ բարձրանում են վերև:

Յեթե կշռենք մի գուռո, վորի միջից ողհանով դուրս է հանված ողը, և ապա նույն այդ գուռնը կշռենք սղով լի մամանակ, մենք կլիմանանք ավյալ ծավալի ողի կշիռը: Նույն գուռնը նույն պայմաններում լցնենք ջրածնով ու կշռենք: Մենք կիմանանք նույն ծավալի ջրածնի քաշը: Այդ կշիռը մոտավորապես կլինի 14,5 անգամ պակաս, քան ողի կշիռը: Ջրածինը 14,5 անգամ քեթիվ է ողից:

Ջրածինը գազերից ամենաքեթիվն է: Նրա մեկ լիտրը կշռում է մոտ 0,09 գ: Այդ հատկության հիման վրա յե, վոր ջրածինը զործածում են սղապարիկները և զիրիժարկները լցնելու համար:

Յինկի և թթվի մեջ հաճախակի պատանոց կողմնակի խառնուրդների շնորհիվ անջատվող ջրածինը սովորաբար թույլ հոտ




Նկ. 36 Փորձանոթի մեջ ջրածնի լցվելը: Ջրածինը դուրս է մղում ողը՝ շրջած փորձանոթից:

և ունենում, իսկ գուց ցրածիներ համ լեղ հաս չուեի: Զրածինը, ինչպես և թթվածինը, ջրի մեջ քիչ և լուծվում:

Ոգտվելով ջրածնի թեթևությունը, նրանով կարելի չի լցնել նաև դատարկ ամանները: Այդ դեպքում ջրածինը բաց են թողնում բերանը ցած դարձրած ամանի մեջ (նկ. 36):

Զրածնի մաքրությունն ստուգելու համար սովորաբար հենց այդպես էլ անում են. փորձանոթը լցնում են ջրածնով՝ ողջ դուրս մղելու յեղանակով (նկ. 36), և ապա փորձանոթը մտնեցնում են քիչ հեռու դրած լամպի բոցին: Հարկավոր է միայն փորձանոթի մեջ ջրածինը յերկար ժամանակ անցկացնել, և շտապել նրան կրակին մտնեցնելը, փորովհետև, յեթև փորձանոթն ամբողջովին լցված չլինի մաքուր ջրածնով տեղի կուտենա ջրածնի ու մնացած ողի խառնուրդի պայթյուն:

Զրածնի և ողի խառնուրդի պայթյունն առանց վտանգի կարելի չի դիտել հետևյալ փորձի ժամանակ: Ողջ դուրս մղելու յեղանակով ջրածնով լցնում են կոնսերվի թիթեղյա բանկան: Բանկայի մի բերանը բաց պետք է լինի, իսկ նրա հակառակ կողմի վրա՝ մի փոքրիկ անցք. բանկան ջրածնով լցնելու ժամանակ պետք է բռնել՝ բերանը զարձրած գեպի ներքև, իսկ հատակի անցքը պետք է փակել յուղի ու սրած ծայրով (նկ. 37):



Նկ. 37. Թիթեղյա բանկան լցնում են ջրածնով:

Յերբ բանկան լրջվում է ջրածնով, ջրածին ստանալու գործիքը մի կողմ են դնում, հանում են բանկայի անցքը փակող յուղի կին և ապա վառվող ժարիի ծայրով վառում են անցքից գուրս յեկող ջրածինը (նկ. 38): Յեթև բանկան լավ լցված է լինում ջրածնով, այն ժամանակ ջրածինը սկզբում հանդիսա այրվում է: Բայց աստիճանաբար ջրածինը գուրս գալով և ներքևից բանկայի մեջ ող մտնելով՝ շտապ է



Նկ. 38. Բանկայի անցքից դուրս յեկող ջրածնի վառելը:

լավում, և աստիճանաբար ուժեղանալով՝ վերջում՝ լավում է իրացուցիչ պայթյուն, վերից բանկան թռչում է վերև:

Կատարած փորձը բացատրում է, թե ինչու ջրածնի հետ առնետալիս ռաս կարևոր է սուսգել գործիքից դուրս յեկող ջրածնի գուց լինելը: Յեթև պայթյունն առաջ գա ջրածին ստանալու գործիքի մեջ, կամ ապակյա մեծ անոթի մեջ, վոր լցված է ջրածնով, կարող է ապակին չզիմանալ պայթյունին, և գործիքը կարող է տրաքել: Այդպիսի դեպքերում գործիքի կտորները կարող են յուրջ կերպով վիրավորել ռուրջը յեղած մարդկանց:

Գործիքից անցաձվող ջրածնի գուց լինելն սուսգելու գործը յերեբ չպիտք է մտաանալ, վոր միշտ պետք է կատարել բուրո այն դեպքերում, յերբ վորևե նպատակով, առենք թե ցինկ ալկալացնելու, քեկուզ ռաս կարե ժամանակով, գործիքի յցամը համվում է: Այդ ժամանակ գործիքից ջրածնի մի մասը դուրս է գալիս, իսկ գործիքի մեջ մուտք է գործում ողը և ստացվում է վնասակար պայթող մի խառնուրդ:


6. Զրածնի բոցը: Վառվող ջրածնի բոցը համարյա անգույն է, և մենք նրան յերբեմն միանգամից չենք կարողանում տեսնել: Այժմ մտաիկից ծանոթանանք ջրածնի բոցին:

▲ Փորձ. 1. 36-րդ նկարում ցույց ալված գործիքի մեջ ստացեք ջրածինը և փորձեցե՛ք մաքուր և արդյոք անջատվող ջրածինը և դրանից հետո (վնչ առաջ) վառեք խողովակի ծայրից դուրս յեկող ջրածինը:

Զրածնի բոցի մեջ մտցրեք ապակյա բարակ մի խողովակ և պահեցեք վորոշ ժամանակ: Խողովակը փակելու է:

Զրածնի բոցի ջերմությունը մոտ 1900° է. մոտավորապես նույնքան ջերմություն ունի «պրիմուսի» նավթայրիչը:

▲ Փորձ. 2. Զրածնի բոցի վրա գլխիվայր (շուռ ալված) պահեցեք մի սառը բաժակ (նկ. 39): Բաժակի ներսի պատերի վրա առաջ են գալիս ջրի կաթիլներ: Մաս ալեք, կտեսնեք, վոր թացանում է:




Նկ. 39. Զրածնի բոցի վրա յուռ է ալված բաժակը:


Ջրածինն այրվելիս ջուր և ստացվում է Վերտեզից և նա առաջանում է Այդ խնդիրը վճարելու համար ջրածինը վառենք թթվածնի սեղ:

Փորձ 3: Փորձանոթի մեջ կալլուսփերմանդանառի մի քաթի բյուրեղ տաքացրեք կամ բերտոլեոյան աղի ու ժանդանդեղինի խառնուրդ, փորձանոթի մեջ թթվածին կանչատվի. նրա մեջ մտցրեք առկայծող մարի. յերբ մարիք փորձանոթի բերանի մոտ բոցավառվի, փորձանոթի մեջ, շատ կարճ ժամանակով, իջեցրեք ապակե խողովակ (նկ. 40). վորի ծայրն այրվում է ջրածնի բոցը (չմոռանաք ստուգել նրա մաքուրըտը): ▲

Փորձը ցույց է տալիս, վոր ջրածնի այրելու ժամանակ ստացվող ջուրն առաջանում է ջրածնից և թթվածնից, վորոնք այրման ժամանակ միանում են իրար:



7. Շառաչող գազ: Ջրածնի և թթվածնի խառնուրդն ավելի ուժեղ է պայթում, քան ջրածնի և ուղի խառնուրդը: Ասկնտուժեղ պայթյուն է ստացվում այն ժամանակ, յերբ վերցնում են 2 ծավալ ջրածին և 1 ծավալ թթվածին: Այդպիսի խառնուրդը կոչվում է Շառաչող գազ:



Նկ. 40. Ջրածնի այրվելու թթվածնի մեջ:



Նկ. 41. Դանիելի այրոցը:

Թթվածնի մեջ այրվող ջրածնի բոցը շատ ավելի մեծ տաքություն է տալիս, քան սղում այրվող ջրածնի բոցը, այն է՝ մոտ 2000°: Շառաչող գազի բոցի մեծ տաքությունը գործնականում սպասարկելու նպատակով հնարված է մի այրոց (հնարել է Դանիելը), վորի մեջ կարելի չէ այրել ջրածինը թթվածնի մեջ՝

Այդ այրոցը պատկերված է 41-րդ նկարում: Նա բաղկացած է մեկը մյուսի մեջ անցկացրած յերկու խողովակից (ցույց է արվում կարվածքով): Արտաքին խողովակով անցնում է ջրածինը, իսկ ներքին խողովակով՝ թթվածինը: Այրոցի ծայրին գազերը խառնվում են իրար, և ստացվում է շառաչող գազի բոց: Բայց վորովհեան առաջացող շառաչով գազն իսկույն այրվում է, այդ պատճառով ել այրոցը միանգամայն անվաճառ է: Ընդ ա այդ՝ ձեվով կառուցված է նաև ացետիլենա-թթվածնային այրոցը:

Շառաչող գազի բոցի մեջ հալվում են՝ պղինձը (հալման ջերմաստ. 1083), յերկաթը (հալմ. ջերմաստ. 1529), պլատինը (հալմ. ջերմաստ. 1771), լեռնային բյուրեղը (հալմ. ջերմաստ. 1710):

Շառաչող գազի այրոցով (ավելի կատարելագործված և բոցը կանոնավորող հարմարանքներ ունեցող) ոգավում են տեխնիկայում՝ պլատինը հալելու համար՝ նրա մշակման ժամանակ, ինչպես և լեռնային բյուրեղի կամ կվարցի հալվածքից քիմիական գանազան դժվարացալ անոթներ, փորձանոթ, կյւր և այլն պատրաստելու համար:

Կվարցի ապակին, բացի իր դժվարահալությունից, տարրերվում է նաև ջերմաստիճանի սուբ փոփոխությունների հանդեպ իր անդալալությամբ: Մինչև կարմրելը շիկացած կվարցն կոլը կարելի չէ անմիջապես սառը ջրի մեջ մտցնել—կոլը չի արքում, ինչպես տվյալ դեպքում կտրաքվեր ապակին: Կվարցի ապակին անփոխարինելի չէ մի շարք քիմիական գիտական աշխատանքների համար: Նա կիրառում է գտել նաև արտադրության մեջ:

8. Ջրածին ստանալը սեխնիկայում. Տեխնիկայում ջրածինը գործածվում է շատ մեծ քանակությամբ վոչ միայն վորպես բարձր բարեխառնության աղբյուր և վորպես թեթև գազ՝ սպասարկիները և գերիծարկները լցնելու համար, այլև քիմիական մի շարք պրոցեսների համար:

Տեխնիկական նպատակների համար ջրածինը յերբեք թթվաներից չեն ստանում, վորովհետև ձեռնասու չէ: Ջրածին ստանալու համար կամ ոգտագործում են ջուրը, կամ այսպես կաշված քարածխի չոր թթրման (տաքացում առանց սղի) ժամանակ անջատվող գազերի խառնուրդը:

Մենք արդեն գիտենք, վոր ջրից կարելի չէ ստանալ ջրա-

ժին՝ նրա միջով երեկտրական հոսանք անցկացնելով, կամ ջրի և մետաղների միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ: Այդ յերկու յեղանակներն ել կիրառվում են տեխնիկայում:

Մետաղի և ջրի միջև տեղի ունեցող ռեակցիայով ջրածին ստանալու համար սովորաբար ոգտվում են յերկաթից: Զրածին ստանալու տեխնիկական այլ յեղանակների վրա մենք այստեղ կանգ չենք առնի,

ԿՐԿՆ ՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Թվեցեք թթվածնի հատկությունները:
2. Ի՞նչպես են ստանում թթվածինը լաբորատորիայում:
3. Ի՞նչպես են կոչվում ռեակցիաներն արագացնող նյութերը:
4. Ի՞նչ նյութեր այրեցիք թթվածնի մեջ, ինչպես են նրանք այրվում և ինչ և ստացվում նրանց այրումից:
5. Ի՞նչպես են հավաքում թթվածինը և ինչպես են համոզվում, վոր անոթը լցված է թթվածնով:
6. Ի՞նչի համար են ոգտագործում թթվածինը:
7. Ի՞նչպես են ստանում թթվածինը տեխնիկայում:
8. Ի՞նչպես դուք ջրածին ստացաք: Գրեցեք ռեակցիայի հավասարու-թյունը:
9. Ինչպե՞ս անհրաժեշտ է ստուգել ջրածնի սաքրությունը նախքան վառելը:
10. Զրածինը քանի անգամ է ողից թեթև:
11. Թվեցեք ջրածնի ֆիզիկական հատկությունները:
12. Ի՞նչ է ստացվում ջրածինն այրելուց: Թվեցեք ռեակցիայի հավասարությունը:
13. Ի՞նչ է շառաչող գաղը:
14. Վերքան և շառաչող գաղի բոցի ջերմաստիճանը և ջրածնի բոցի ջերմաստիճանն ոգում այրվելիս:
15. Ինչի՞ համար են գործածում ջրածինը:
16. Զրածին ստանալու համար տեխնիկական ի՞նչ յեղանակներ դեռեցիք:
17. Ի՞նչ պատճառներից է առաջանում գործարարների պայթյունը:
18. Զրածնի բոցը լուսավորության համար պիտանի՞ յե, թե վոչ: Պատճառաբանեցեք ձեր պատասխանը:

IV. ՏԱՐՐԵՐ

Այն նյութերը, վոր մենք կարող ենք ստանալ միացման ռեակցիայի միջոցով և վորոնց կարող ենք իր բաղադրելի մասերի վերածել—կոչվում են բարդ նյութեր:

Բարդ նյութեր շատ են հայտնի, ավելի քան միլիոն: Բայց համեմատաբար վորք թվով նյութեր կան, վորոնք վոչ բարդ նյութեր են: Դրանք մենք չենք կարող վոչ միացման ռեակցիայի միջոցով ստանալ և վոչ ել քիմիապես այլ նյութերի վերածել: Զվերլուծվող նյութերի շարքին են պատկանում բարդ մեխաղները և մի շարք վոչ մեխաղներ, ինչպես, որինսակ, մեղ հայտնի՝ թրթվածինը, ազոտը, ծծումբը և այլ մետաղները:

Այդ վոչ բարդ նյութերը մտնելով քիմիական ռեակցիաների մեջ, հանդիսանում են բարդ նյութերի բաղադրելի մասեր կամ տարրեր (եղեմենտներ), վորոնցից բաղկացած են բարդ նյութերը:

Մտրիկոքսիդի կարմիր փոշու մեջ մենք վոչ մի միջոցով չենք կարող տեսնել վոչ թթվածին. գաղը և վոչ ել փայլուն սընդիկ մետաղը: Բայց մի բան մեղ հայտնի յե, վոր սնդիկոքսիդի վոչին տաքացնելիս տարբարվում է սնդիկի և թթվածնի: Մենք ասում ենք, վոր սնդիկոքսիդը կազմված է տարրերից—սնդիկից և թթվածնից:

Միացու թյուններից դուրս, այսինքն ազատ վիճակում գտնվող վոչ բարդ նյութերը կամ տարրերը ընդունված է վոչ թե տարր անվանել, այլ՝ պարզ նյութ: Պարզ նյութը բաղկացած է մի տարրից, իսկ բարդ նյութը—յերկու և ավելի տարրերից:

Տարբարվելով սնդիկոքսիդը, վորը կազմված է սնդիկ և թթվածնի տարրերից, մենք ստանում ենք պարզ նյութեր—սնդիկ և թթվածին:

Ծծմբի յեվ յերկաթի խառնուրդը կազմված է յերկու պարզ նյութից—ծծմբից և յերկաթից, բայց քիմիական ռեակցիա տեղի ունենալուց անմիջապես հետո ծծմբի և յերկաթի նախկին վորակները կորչում են և հանդես ե գալիս նոր վորակ նոր նյութ նոր հատկություններով՝ ծծմբերկաթ: Ծծմբերկաթը կազմված է յերկու տարրից—ծծմբից և յերկաթից:

Զրի բաղադրության մեջ մտնում է ջրածին տարր: Յեթե մենք ջրի գոլորչներն անցկացնենք շիկացած պարզ նյութ—յերկաթի վրայով, այդ դեպքում ջրածին տարրը կանշատվի պարզ նյութի ձևով, իսկ առաջացած յերկաթոքսիդի բաղադրության մեջ մտնում է յերկաթ տարր:

Յեղ այսպես, տարրերը բարդ նյութերի բաղկացուցիչ մասերն են հանդիսանում, իսկ ազատ վիճակում պարզ նյութ են կազմում,

վար վաչ բխակալամ վերլուծումն և յեմբարկվում յեվ վաչ ել միաց-
մանս ունակցիայի միջոցով ստացվում:

Ներկայումս հայտնի յեն 89 տարր: Տարրերը կարելի չե
յերկու խմբի բաժանել: Առաջին խումբը կազմում են մետաղները:

Մետաղներն ունեն մի շարք բնութագուր հատկություններ: Բո-
լոր մետաղներն ունեն հատկանշական մետաղական վայլ, վորով
դրանց հեշտ կերպով կարելի չե դանազանել մյուս նյութերից:
Բոլոր մետաղները շատ կամ քիչ չափով ջերմություն և ելեկ-
տրականություն են անցկացնում:

Տարրերի յերկրորդ խումբը վաչ մետաղներ, (հին անունը) մետա-
լոիդներն են կազմում, ինչպես որինակ՝ թթվածինը, ջրածինը, ա-
զոտը, ձմուռը, ֆոսֆորը, յոզը, քլորը, ածխածինը (ածուխ) և այլն:

Մետալոիդներն իրար հետ այնպիսի ցայտուն նմանություն
չունեն, ինչպես մետաղներն իրար հետ:

Բայց մետալոիդներն իրար հետ, ինչպես և մետաղներն իրար
հետ, քրիմիական նմանություն ունեն՝ նման ունակցիաների մեջ
են մտնում և նման նյութեր առաջացնում: Տարրի քրիմիական
նմանությունը և տարրությունը մենք մանրամասն կձանոթա-
նանք հետագայում:

Անհրաժեշտ է նշել նաև այն, վոր մետաղների և մետալոիդների միջև
խիստ բաժանում զնել չի կարելի: Կան տարրեր, վորոնք նմանություն չեն
ունեն թե մետաղների և թե մետալոիդների հետ, ինչպես որինակ՝ ար-
ևենը, անտիմոնը, նման տարրերի մենք կպատահենք և հետագայում:

Ինչպես արդեն ասացինք, հայտնի յեն ընդամենը 89 տարր:
Նրանց մեծ մասը շատ հազվագյուտ նյութեր են և բնություն
մեջ շատ չնչին քանակությամբ են գտնվում:

Ստորև բերված է տարրերի ցուցակը (բերվում է վաչ սկը-
տեյու համար): Աչքի անցկացնելով ցուցակը, դուք կհամոզվեք՝
վոր տարրերից շատերը ձեզ ծանոթ չեն:

Տ Ա Ր Ր Ե Ր Ի Ց Ո Ւ Ց Ա Վ

* Ազոտ	* Ածխածին	Դիսպրոզիում	Ինդիում
Ալյումինիում	Բարիում	* Յերկաթ	Իրիդիում
Արսենիում	Բերիլիում	Կադմիում	Իտրիում
* Արգոն	Բիսմութ	Նեբիում	Իտրիում
Անագ	Բոր	* Թթվածին	Լանթան
Անտիմոն	Բրոմ	Փայլիում	Լիթիում
* Արծաթ	Գադոլինիում	Փոբիում	* Օձուձր
* Արսեն	Գալիում	Փուլիում	Կապար
	Գերմանիում	(Կիբիում)	Կազմիում


Կալցիում	Նեոդիմում	Ռենիում	* Վանիլ
Կալիում	* Նեոն	Ռազոն	Տանսալ
Կորալ	Նիսել	Ռոդիում	Տերբիում
Կասիսպիում	Նեոբիում	Ռուբեդիում	Տելուր
* Կրիպտոն	Ուրան	Ռութենիում	Տիտան
* Հելիում	Ումիում	Սեյեն	Ցինկ
Հոլմիում	* Պղնձ	* Մոլիբդեն	Ցիրկոնիում
Համֆրիում	Պրագեոդիմիում	Սկանդիում	Ցեզիում
Մագնիզիում	Պրոպանիում	Սրբիցիում	Ցերիում
Մանգանիում	Պայլադին	Ստրոնտիում	Քլոր
Մագնիզիում	* Պլատին	Սամարիում	Քրոմ
Մոլիբդեն	Պոլոնիում	Վանադիում	* Քսենոն
Ցոլ	Ջրածին	(Վիրգիլիում)	Փոսֆոր
Ն սերիում	Ռադիում	Վոլֆրամ	Փլուտոն

Յուցակում սև տառերով առանձնացված են տարրեր, վոր-
ոնք ազատ վիճակում մետաղներ են հանդիսանում. դրանք
մեծամասնություն են կազմում: Աստղերով ցույց տրված
տարրերը բնության մեջ պատահում են ազատ վիճակում, վոր-
պես պարզ նյութեր:

Բնության մեջ պա-
տահած բազմազան
նյութերը կամ տար-
րեր են, կամ այդ
տարրերի միացու-
թյուններ:

Ուսումնասիրելով
յերկրի կեղևի, ջրի,
սղի բաղադրությունը,
մոտավորապես կարե-
լի չե հաշվել դանա-
զան նյութերի քա-
նակը, վոր կազմում
են յերկրագնդի կե-
ղևն ու մթնոլորտը, իսկ այդ նյութերի քրիմիական
բաղադրու-
թյունը վորոշելով՝ կարելի չե հաշվել նաև յուրաքանչյուր տար-
րի քանակությունը:

Այդ հաշվը ցույց է տալիս, վար յերկրի կեղևի զլիտավոր
զանգվածը (ներառյալ նաև ջուրն ու սղը) բաղկացած է քիչ
թվով տարրերից, իսկ տարրերի մեծ մասը բնության մեջ շատ



Նկ. 42. Բնության մեջ տարրերի պարածվածու-
թյան զեղազրամը:

Սյդ հաշվը ցույց է տալիս, վար յերկրի կեղևի զլիտավոր
զանգվածը (ներառյալ նաև ջուրն ու սղը) բաղկացած է քիչ
թվով տարրերից, իսկ տարրերի մեծ մասը բնության մեջ շատ

փոքր քանակությամբ են գտնվում: Այդ պարզ յերևում է դիագ-
րամից (նկ. 42), վերը ցույց է տալիս, վոր մարմինների զլխա-
վոր զանգվածը բաղկացած է 9 տարրից, վորոնք կազմում են
ընդհանուր կշռի մաս 98⁰/₁₀, իսկ մնացած մյուս տարրերը միասին
կազմում են միայն մաս 2⁰/₁₀:

Առաջին տեղը բռնում է բրվածիմը, վոր մասնում է մինե-
րալների բազադրության մեջ, վորոնք կազմում են կարևոր լեռ-
նային ապարները՝ գրանիտներ, կավ, ավաղ, կրաքար, ավա-
քաք, թերթաքար և այլն: Թթվածինը կազմում է ջրի ընդհա-
նուր քաշի $\frac{8}{9}$ մասը, գտնվում է և ողում:

Հետևյալ տարրը սիլիցիումն է: Գտնվում է գրանիտի բոլոր
բաղադրիչ մասերում, կալքարի մեջ, կավի մեջ, ավաղի մեջ,
ավազաքարերի մեջ և մի շարք ուրիշ ապարների մեջ:

Յերրորդ տարրն ալյումինումն է, մտնում է գաշտային
շպտաների, կավի և մի շարք այլ միներալների բաղադրության
մեջ:

Այդ յերեք տարրերն ամենատարածված տարրերն են յերկ-
րագնդի վրա:

Կ Բ Կ Ն Ո Ղ Ա Կ Ա Ն Հ Ա Ր Յ Ե Ր

1. Ի՞նչ հատկություններով դուք կարող եք տարբերել մետաղը մետա-
լուղից:
2. Գազային վիճակում Բ՞նչ մետալոիդներ են ձեզ հայտնի:
3. Ի՞նչ է պարզ նյութը:
4. Անվանեցե՛ք յերեք ամենաշատ տարածված տարրերը:

V. ՆՅՈՒԹԵՐԻ ԿՇՈՒ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՐԵՆՔԸ

Մետաղներից շատերը սովորական բարեխառնուրթյան մեջ,
մանավանդ տաքացնելու ժամանակ, ինչպես հայտնի յե, յեն-
թարկվում են քիմիական գանազան փոխարկումների—մթաղնում
են, սեանում են, ծածկվում են կորկով, ժանգոտում են և այլն:

Այժմ ծանոթանանք այդ յերևույթներին ավելի մանրամաս-
տորեն:

1. Փորձե՛ք մեծազանցի վրա. Առաջին հարցը, վորը մենք
պետք է լուծենք, հետևյալն է—փոխվում է արդյոք մետաղի
քաշը շիկացնելուց հետո: Բնական կլինի յենթադրել, վոր կորկն


ավելի քիչ են կշռում, քան մետաղը, բայց կարող է և այդպես
չլինել: Իրված հարցին կարող է պատասխանել միայն փորձը:

Փորձենք շիկացնել մի քանի մետաղներ, նրանց կշռելով թե
նախապես և թե շիկացնելուց հետո: Վորպեսզի շատ կորկ ստա-
նանք, մենք մետաղը կվերցնենք վոչ թե մի կտորով, այլ փո-
շու կամ մանր կտորների ձևով:

▲ Փ ո Ր Ը 1. Թ ի թ ե ղ յ ա ամանի մեջ սի գզալ յերկաթի փոշի կամ խար-
տուք ածեք: Ամանը հալոտարակշռեցե՛ք կշռքի վրա (կտորակով կամ ավաղով):
ապա դնելով շտատիլի ողակի վրա (կամ յետտանու), տաքացրե՛ք այնքան,
մինչև վոր մետաղը ծածկվի կորկով (նկ. 43),
Թողե՛ք լավ պողի և նորից կշռեցե՛ք: ▲


Փորձը մեզ համոզում է, վոր կոր-
կը վոչ միայն պակաս չի կշռում,
այլև ավելի յե կշռում, քան վերցրած
մետաղը:

Վորպեսզի լուծենք նաև այն խն-
դիրը, թե հետևանքի վրա չի ազդի
արդյոք, ... յեթե մետաղի շիկացումը
մենք կատարենք փակ անոթի մեջ, փոր-
ձը կատարենք նաև փակ անոթի մեջ:



Նկ. 43 Մետաղի շիկացումը
թիթեղյա տակիկի մեջ:

▲ Փ ո Ր Ը 2 Փորձանոթի մեջ մի քիչ մետաղ ածեցե՛ք (այն մետաղից,
վոր դուք շիկացրե՛ք թիթեղյա ամանի մեջ). բերանը ծածկեցե՛ք խցանով, վորի
մըջով անց է կացրած ազակի կարճ խողովակի իսկ վերջինիս վրա հազցրե՛ք
սեխին խողովակի և նրա վրա ել՝ սեղմիչը



(նկ. 44): Այդ բոլոր պատրաստելուց հետո հա-
լոտարակշռեցե՛ք փորձանոթը և թափահարելով
մետաղը փորձանոթի մեջ, տաքացրե՛ք այնքան,
մինչև վոր մետաղը մթաղնի: Թողե՛ք սառի ու
նորից կշռեցե՛ք: Կշիտը մտնում է նույնը: Ստա-
ցած հետևանքը բացատրելու համար սեղմիչն
խողովակին միացրե՛ք ազակի մի խողովակի
վերջինս իջեցրե՛ք ջրով լի բաժակի մեջ ու բաց
արե՛ք սեղմիչը (նկ. 45): Զուրը խողովակով վեր է բարձրանում: ▲

Ձանազան մետաղների վրա կատարած փորձերը մեզ բե-
րում են հետևյալ յեզրակացութայն:

1. Փակ փորձանոթում մետաղը շիկացնելիս ամօրի մեջ
յեղած աղի ծավալը փոքրանում է:

2. Այն փորձանոթի կշիռը, վորի մեջ մետաղը փոխարկվից կորկի, իսկ ոգի ծավալը փոքրացալ, ասում է Յուլյնը:


Այդ փաստերից կարելի չի հետևյալ հետևություններն անել:

1. Մետաղը կորկի փոխարկվելու ժամանակ տեղի չի ունենում բխիական ուսկցիա, վորտեղ մասնակցում է վոչ միայն մետաղը, այլ նաև ողբ, այդ պատճառով էլ ողբ քշանում է:

2. Կորկը շատ է կշռում, քան մետաղը, վորովհետև կորկ կազմելիս ողբից ինչ-վոր մի բան միացնում է մետաղին:

3. Այն հանգամանքը, վոր ծածկած փորձանոթի կշիռը շեկացնելուց հետո չի ավելանում, կարելի չի բացատրել միայն հետևյալ կերպ. մետաղը կորկի փոխարկվելով, նրա քաշն ավելանում է ճիշտ այնքան, վորքան պակասում է ոգի կշիռը: Հակա-

Նկ. 45. Փորձում են, թե արդյոք մետաղը փակ անոթում շեկացնելիս ողբ ծավալը փոխվում է, թե վոչ:




աակ դեպքում փորձանոթի կշիռը պետք է փոխվի:

Այսպիսով մեր փորձերի ժամանակ ուսկցիային մասնակցող նյութերի կեիտք, այսինքն մետաղի է ոգի կշիռը, հավասար է ուսկցիայից հետո ստացված նյութի—կորկի կշիռն:

2. Փորձեր այլ նյութերի հետ. Այժմ տեսնենք, թե ինչ է կատարվում այլ ուսկցիաների մեջ մտնող նյութերի կշիռի հետ:


Փորձ 1. Կշեռքի վրա հավասարակշռված դաստաղի աված տարրեր լուծույթներ պարունակող յերկու բաժակ: Այնլի հարմար է բաժակները դնել հարթ նստարներ ունեցող կշեռքի վրա (նկ. 46), յեթև այդպիսի կշեռքներ բավական թվով կան Յեթե այդպիսի կշեռքների թիվը քեչ է կամ ըստ ողակներին չէ բավականացնում, այդ դեպքում լուծույթները կարելի չի վերցնել փորձանոթների մեջ: Յերկու փորձանոթ թելով կապում են է կախում դեղատան կշեռքի կարթից (նկ. 47):



Նկ. 46. Լուծույթ պարունակող 2 բաժակ, վորոնք հավասարակշռված են կշեռքի վրա:

Յերբ կշեռքը հավասարակշռված է, լուծույթները խառնեցեք իրար: Կշեռք ասում է նույնը 1):

Ցարքեր լուծույթների հետ կատարած փորձերից մենք հանդում ենք այն հետևություն, վոր ուսկցիային մասնակցող նյութերի կշիռը հավասար է ուսկցիայից հետո ստացված նյութերի կշիռն: Կարելի չի կարծել, վոր այս հետևությունը տարածվում է նաև քիմիական այլ ուսկցիաների վրա:



Նկ. 47. Լուծույթներ պարունակող փորձանոթները դեղատան կշեռքի վրա:

Բայց կան յերևույթներ, վորոնք կարծեր թե հակասում են այդ հետևությունը: Այսպիս, որինակ, դիտելով մոմի կամ սպիրտի այրվելը, մենք տեսնում ենք, վոր այրվող նյութերը կարծում, տեսնատանում են իրոր այրվելու է:

▲ Փորձ 2. Կորպեռնի համոզվեք, թե արդյոք մոմի այրման ժամանակ վորտեղ բան չի ստացնում, վանեցեք յերկաթալարի վրա ամրացրած մոմը է իջեցրեք չոր պատեր ունեցող մի կորի կամ սրվակի մեջ: Ամանի պատերին նստում են ջրի կաթիլներ:

Յերբ մոմը հանդչի, ամանի մեջ կրաշուք ածեցեք ու թափահարեցեք: Կրաշուքը պարտավում է. ամսաթիվում դադի անկայություն նշանն է այդ: ▲


Փորձերը մեզ համոզում են, վոր այրվող մոմն անհետ չի կորչում, ինչպես այդ մեզ թվում է ասալին հայացքից: Այրվող մոմի փոխարեն յերկու նոր նյութեր են ստացվում—ջուր է ամսաթիվում դադ:

Իսկ ինչ կշիռ ունեն այդ նյութերը. արդյոք նրանք այնքան են կշռում, յնչքան վոր մոմի այրված մասը, թե ավելի, կամ պակաս: Փորձի հիման վրա կարելի չի յենթադրել, վոր այրումից ստացված պրոդուկտների կշիռը, այսինքն ջրի է ամսաթիվում դադի կշիռը, պետք է հավասար լինի վերցրած մոմի այրված մասի կշիռն: Այդ յենթադրությունը ստուգենք փորձով:

Փորձը կարելի չի դնել հետևյալ կերպ. մոմը տեղավորում

1) Մյուս ողակները փորձեր են կատարում տարրեր լուծույթների հետ:

են կշեռքի վրա և նրա վրա դնում ապակյա մի գլան, վորի մեջ կրի և կծու նատրիումի կտորներ են անում. այդ նյութերն ազահեթյամբ կլանում են թե ջուրը և թե անխաթթու գազը (Նկ. 48):



Նկ. 48. Մոմը այրուածը կշեռքի վրա. այրումից առաջացած պրոզուկաները կլանվում են

Մոմի այրման ընթացքում առաջացած տաք գազերը (այրման պրոզուկաները) անցնելով կլանող նյութերի շերտերի միջով՝ ամբողջովին կլանվում են: Այրվող մոմի փոխարեն կշեռքի վրա փնում են կրի և կծու նատրիումի կլանած ջուրը և անխաթթու գազը: Այդ ժամանակ պարզվում է, վոր այդ նյութերն ավելի շատ են կշռում, քան այրված մոմը, վորովհետև կշեռքի այն նժարը, վորի վրա դրված է մոմը, կամաց-կամաց ցած է իջնում, այսինքն ծանրանում է: Ի՞նչու չէ այդպես լինում: Այդ

յերևույթը կարելի չէ բացատրել շատ հեշտ կերպով: Մոմի այրման ժամանակ նրա բաղադրության մեջ յեղած անխաթթու և ջրածինը ռեակցիայի մեջ մտնելով ուրի հետ՝ առաջ են բերում անխաթթու գազ և ջուր:

Մեր առաջին յենթադրության ժամանակ, թե այրումից առաջացած պրոզուկաների կշիռը հավասար է այրվող մոմի կշռին, մենք հաշվի չառանք այն հանդամանքը, վոր վերցրած նյութերը վոչ միայն մոմն է, այլ և ուր, վորի մի մասը մոմի այրման ժամանակ ռեակցիայի մեջ է մտնում մոմի նյութի հետ: Բանից զուրս է գալիս, վոր յեթե ավելի ճիշտ փորձերի ժամանակ վորոշենք այրման համար ծախսված ուրի քանակը, նրա կշիռը կլինի ճիշտ հավասար այրումից առաջացած պրոզուկաների կշռի ավելացումին: Ուրիշ խոսքով՝ ավելի զեպքում վոչ մի հակասություն չի ստացվում մեր հիմնական յենթադրության, մեր «հիպոթեզի» հետ, վոր քիմիական բոլոր ռեակցիաների ժամանակ վերցրած նյութի կշիռը հավասար է ստացված նյութերի կշռին:

Յ. Նյութերի կոռի պահպանման օրենքը. Այն կանոնը, թե վերցրած նյութերի կշիռը հավասար է ստացված նյութերի կշռին, վերաբերում է վոչ միայն մեր զխտած զեպքերին, այլ

վճռականապես վերաբերում է քիմիական բոլոր ռեակցիաներին: Մինչև այժմ քիմիական և վոչ մի փորձի ժամանակ չի նկատվել, վոր ռեակցիայից հետո ստացված նյութերը կշռեն ավելի կամ պակաս, քան կշռում էին ռեակցիային մասնակցող նյութերը: Ռեակցիային մասնակցող նյութերի կշիռը միշտ հավասար է ռեակցիայից հետո ստացված նյութերի կշռին: Այս յերևույթը սովորաբար կոչվում է «նյութի պահպանման օրենք», ճիշտ կլինի ասել — նյութերի կոռի պահպանման օրենք: Յերբեմն այս օրենքը կոչում են «Լուսնասով-Լավուազիեի» օրենք — յերկու մեծ գիտնականների՝ սուս Մ. Վ. Լուսնասովի (1711—1765) և ֆրանսիացի Ա. Լավուազիեի (1743—1794) անուններով: Այս գիտնականները մեկը մյուսից անկախ՝ առաջին անգամ հաստատել են այդ օրենքն իրենց կատարած փորձերի հիման վրա: Հետագայում կատարած ամենամանրագնի փորձերը նույնպես հաստատել են այդ օրենքը, և նրան հակասող բան մինչև հիմա զանված չի:

Նյութերի կշռի պահպանման օրենքը բնության հիմնական օրենքն է համարվում: Մեր շուրջը կատարվող քիմիական բոլոր յերևույթներն անփոփոխաբար յենթադրվում են այդ օրենքին: Յեթե առաջին հայացքից ինչ-վոր բան հակասում է նյութերի կշռի պահպանման օրենքին, միշտ էլ զուրս է գալիս, վոր մենք հաշվի չենք տուել յերևույթին կամ առաջացած նյութերին մասնակցող բոլոր նյութերը:


Նյութերի կշռի պահպանման օրենքը հաստատում է վերիստիայական հիմնական այն զրույթը, վոր բնության մեջ վոչինչ անհետ չի կորչում և վոչ էլ վոչնչից առաջանում, վոր աշխարհը կազմող նյութը (մասերիան) զոյություն ունի և շարժվում է հավետ և վոչ թե սահեղձել է 5508 տարի «Քրիստոսի ծննդից» առաջ, ինչպես այդ սովորեցնում է կրոնը:

Կ Ի Կ Ը Ո Ղ Ա Կ Ա Լ Հ Ա Բ Ց Ե Բ

1. Ի՞նչպես է փոխվում մետաղի կշիռը կորի առաջանալու ժամանակ
2. Հայտնի յեն զեպքեր, յերբ նյութը կորչում. անհետանում է, կամ վոչնչից առաջանում:
3. Ի՞նչ է ստացվում մոմի այրումից:
4. Ի՞նչ է նյութերի կշռի պահպանման օրենքը կոչվում:

Մետաղը փակ անոթում շիկացնելուց հետո, յերբ մենք դիտում եյինք խողովակի միջով ջրի բարձրանալը, սեւանք, վար ջուրը զբավեց սկզբում ողի զբալած ծավալի միայն մի մասը, իսկ ամանի մեջ ելի շատ ող մնաց, վոր սեակցիային չմասնակցեց:

Իսկ ինչո՞ւ ողն ամբողջութեամբ չծախսվեց մետաղը կորկի փոխարկելու վրա, այլ ծախսվեց նրա մի մասը: Աղի այդ ինչ մասն է, վոր այդպես զործոն կերպով մասնակցում է սեակցիային:



Նկ. 49. Ջրածնով պղնձաքսիդը վերականգնելու գործիքը:


Մետաղի հետ միացած ողի թթվածինը կարելի չէ անջատել սքսիդից ջրածնի սպուլթյամբ: Փորձի համար կարելի չէ ողավել պղնձաքսիդով:

▲ Փ ո ռ ծ. Ջրածն ստանալու գործիքն հետ (Նկ. 49) մրացրեք ապակե խողովակը և թեք դիրքով ամրացրեք շտառվի սեղմիչն մեջ, ինչպես այդ ցույց է արված նկարում: Մտուգեցեք ջրածնի մաքրությունը և, յերբ մաքուր ջրածնն անջատվի, խողովակը մացրեք պղնձաքսիդ պարունակող փորձանոթի մեջ, ինչպես ցույց է արված նկարում:

Տաքացրեք պղնձաքսիդը և դիտեցե՛ք ինչ է կատարվում նրա հետ:

Պղնձաքսիդը կամաց-կամաց փոխարկվում է մետաղի, իսկ փորձանոթի պատերին նստում են ջրի կաթիլներ: ▲

Տեղի ունեցող սեակցիան կարելի չէ արտահայտել այսպես.



Փոխանակման այդպիսի սեակցիա շատ մետաղաքսիդների հետ է կատարվում: Այդ սեակցիան կոչվում է վերականգնումն սեակցիա:

Այդ սեակցիայի ժամանակ սքսիդից նորից մետաղ է ստացվում, Եվրականգնվում է:

Կատարած փորձն անկասկածորեն ապացուցում է, վոր սքսիդի առաջացման ժամանակ իսկապես վոր մետաղը միտնում է թթվածնի հետ և վոր թթվածինը զանվում է ողում:

Այն հարցը, թե ողը գաղերի խառնուրդ է, առաջ է յեկել համեմատարար վոչ այնքան վաղ, այլ միայն XVIII դարի վերջին, յերբ անգլիացի դիտնական Պրիստլիյն (Pristley) առաջին անգամ մաքուր թթվածին ստացավ (1774 թ.):

Պրիստլիյը թթվածինն ստացավ սնդիկոքսիդը տաքացնելու միջոցով տարրալուծելու յեղանակով այնպես, ինչպես մենք այդ արինք տարրալուծման սեակցիային ծանոթանալիս:

Բայց ողի բաղադրութեան ինչդիրք, այն ողի, վոր յերկաթ ժամանակ համարվում էր վորպես տարրերից մեկը, լուծեց վոչ թե Պրիստլիյը, այլ նրա ժամանակակից և մեզ արդեն ծանոթ՝ Ֆրանսիացի դիտնական Լավուազիեն:

Լավուազիեն, հակառակ իր նախորդների, վորոնք քիմիական յերեույթներն ուսումնասիրում էյին մեծ մասամբ վորակապես, հաշվի չառնելով սեակցիային մասնակցող նյութերի քանակը, իր աշխատանքի ժամանակ միշտ ուղավում էր չափ ու կշռով: Լավուազիեն կշեռքը համարում էր քիմիկոսի կարեւոր գործիքներից մեկը՝ նյութերը և նրանց փոխարկումներն ուսումնասիրելու ժամանակ:

Լավուազիյի աշխատանքն ողի բաղադրութեան վերաբերմամբ հանդիսանում է նրա՝ զանազան նյութերի այրումը թթվածնի մեջ և ողում՝ ուսումնասիրելու աշխատանքի շարունակությունը: Լավուազիեն հետեյալ փորձը գրեց (Նկ. 50): Նա A կրակարանի վրա C սետորտի մեջ տաքացնում էր սնդիկը. սե-



Նկ. 50. Փորձը, վորով ողարվում էր Լավուազիեն ողի վերլուծման ժամանակ:

տարտի գազատար խողովակի ծայրը մացրել եր սնդիկով լցված D թասի վրա դրած ողով լի B գանդի մեջ: 12 սր շարունակ տաքացնելուց հետո պարսիկեց, վոր սետորտի մեջ լեղած սնդիկի մի մասը փոխարկվեց կարմիր փոշու, իսկ գանդի մեջ սնդիկը բարձրացավ: Ողի ծավալը գանդի մեջ, նախկին ծավալի հետ համեմատած, մոտավորապես 1/5-ով փոքրացավ: Հետագա տաքացումից ողի ծավալը փոփոխության չենթարկվեց: Լավուազյեն հանեց սետորտի միջի նյութը, առաջացած կորկն անջատեց մնացած սնդիկից և հետագոտեց այն: Գուրս յեկավ, վոր ստացված կորկը վոչ այլ ինչ է, յեթե վոչ նրան ծանոթ սնդիկոքսիդը, վոր տաքացնելու ժամանակ տարրալուծվում է սնդիկի և թթվածնի: Վորպեսզի վերջնականապես համոզվի իր լինթապրության ճշտության մեջ, Լավուազյեն ստացած սնդիկոքսիդի փոշին տեղավորեց փոքրիկ սետորտի մեջ և շիկացրեց ուժեղ կրակի վրա: Ոքսիդից անջատվեց գազ, վոր նա հավաքեց ամանի մեջ, ջրի վրա: Պարզվեց, վոր ստացված գազի ծավալը ճիշտ այնքան է, ինչքան վոր ողի ծավալից պակասել էր առաջին փորձի ժամանակ: Նյութը մի տեղ պակասեց այնքան, վորքան մյուս տեղում ավելացավ: Ուսումնասիրելով գազի հատկությունները՝ Լավուազյեն համոզվեց, վոր իրոք այդ թթվածին է 1): Չանդի մեջ մնացած ողը վոչ այրում էր պահպանում և վոչ էլ շնչատություն. մոմը նրա մեջ հանգավ, ալդ գազի մեջ դրած մուկը խեղդվեց: Այդ գազը Լավուազյեն անվանեց ազոս, վոր նշանակում է՝ կյանքի համար անպետք:



Նկ. 51. Փոսֆորը գանդի տակ վառելը:

Սյապիտով ապացուցվեց, վոր կորկի թթվածինն ողի բաղադրիչ մասն է, և վոր այրումը, կորկի առաջացումը, շնչառությունը—դրանք նյութերի միացումն են թթվածնի հետ, անկախ այն բանից, թե արդյոք սեակցիան ողման է տեղի ունենում, թե մաքուր թթվածնի մեջ:


1) «Թթվածին»-թթու առաջադեմ, անունն առաջարկել է Լավուազյեն: «Թթվածին» բառը լատիներեն անվան թարգմանությունն է երբևէ չենթարկված: Թթվածնի շատ միացություններ ջրի մեջ լուծելու ժամանակ թթուներ են տալիս:

Նյութերի՝ թթվածնի հետ միանալու սեակցիաները սովորաբար կոչվում են նյութերի սփաղացում, իսկ սեակցիայի արգասիք հանդիսացող նյութերը՝ սփաղանք:

2. Ողի բաղադրությունը. Ողի բաղադրությունը ծանոթանալու համար մենք կարող ենք ավելի հասարակ փորձ կատարել: Մնդիկի փոխարեն վերցնենք ֆոսֆոր, այնպեսի նյութ, վորն ավելի հեշտ և արագ կերպով է միանում թթվածնի հետ, քան սնդիկը:

Փոսֆորը տեղավորում են թասի մեջ, վորը լողում է գանդի տակ՝ ջրի յերեսին (նկ. 51): Փոսֆորը վառում են և խցանով իսկույն ծածկում գանդը: Փոսֆորն այրվում է, իսկ առաջացած սպիտակ ծուխը—ֆոսֆորքսիդը (ֆոսֆորական անհիդրիդը) լուծվում է ջրի մեջ:

Չուրը բարձրանում է գանդի մեջ և բռնում սկզբում ողով բռնած ծավալի մոտ 1/5 մասը: Յեթե փորձենք գանդի մեջ մնացած գազը, կարող ենք համոզվել, վոր նա այրում չի պահպանում, գանդի մեջ մտցրած վառվող մոմը կամ մաքրին իսկույն հանդչում է: Բացի այդ՝ այդ գազը չի պղտորում կրաջուրը—



Նկ. 52. Ողի ծավալային կազմության դեպքում:

սուրբն ամխաթթու գազ չէ: Այդ գազն ազոսն է: Նա կազմում է ողի ծավալի մոտ 1/5 մասը (տես 52-րդ նկարի դիագրամը):

Բացի ազոսից ու թթվածնից, ողում կան ամխաթթու գազ և ջրային գոլորշիներ: Այդ գազերի քանակն անփոփոխ չէ և կախված է այն վայրից, վորտեղ վերցված է նմուշը, և մի շարք այլ պայմաններից:

Ածխաթթու գազը, ինչպես արդեն հայանի յե, առաջա-
նում է ալքաման և արտաշնչման ժամանակ, այդ պատճառով ել
քաղաքի սղում, վորտեղ շատ ֆարքիկներ ու զործարաններ
կան, վորտեղ շատ վառելանյութեր են վառվում, ածխաթթու
գազը մի քանի անգամ ավելի յե, քան ծովի վրայի, անառի
կամ գաշտի սղում: Մաքուր սղում ածխաթթու գազի քանակը
կազմում է մոտ 0,03—0,04% ըստ ծավալի (նկ. 52): Խիտ բնակ-
ված վայրերում կարող է հասնել մինչև 0,06—0,7 %:

Ածխաթթու գազ շատ է հավաքվում մանափանց ծածկած և
վատ ողափոխվող շենքերում, վորտեղ շատ մարդիկ են լինում.
Թթվածինը շնչառության ժամանակ ծախսվում է, կուտակվում
և ածխաթթու գազ: 0,1% -ից ավելի ածխաթթու պարունակող
ոդը շատ խեղդուկ է:


Չբայիև գոլարեիների քանակը կախված է ջրի մտախ-
կությունից, ջերմաստիճանից և այլ պայմաններից, վարտնք
հայտնի պետք է լինեն ֆիզիկայի և աշխարհագրության գասըն-
թացներից:

Սղում միշտ լինում են նաև փոշի և միկրոօրգանիզմներ
(բակտերիաներ, բորբոսի սողմեր և այլն): Նրանք սղում լինում
են կախված վիճակում, ինչպես պղտորությունը ջրում, և ասար-
վում են ողի մեջ՝ ողի հոսանքների շնորհիվ: Այդ խառնուրդների
քանակն ու բաղադրությունը շատ բազմազան են: Քաղաքի ողում
շատ կան ածխի փոշի—մուր, չալրված ածխի կտորներ, վորտնք
գուրս են շարտվում դերծարանների ծխնելույղներից՝ սե ծխի
ձևով: Արտադրություններից շատերը մեծ քանակությամբ փոշի
յեն տալիս, վոր ասբաձվելով սղում և ընկնելով թոքերի մեջ՝
զրգուում է նրանց և հաճախ շատ ծանր հիվանդություններ են
առաջացնում:

Վնասակար տրսադրուրյունների շենքերում ողի
ուսուսնասիրություններից պարզվել է, վոր մի խորանարդ մետր
ողի մեջ կա—չբաղադրում՝ 47 մգ փոշի, ատաղձագործական ար-
հեստանոցում 55 մգ, ցեմենտի գործարանում՝ 224 մգ փոշի և
այլն: 53-րդ նկարում ցույց է տված զանազան փոշիների տեսքը
մանրադիտակի տակ:

Դպրոցական շենքերում նույնպես մեծ քանակությամբ փո-
շի յե առաջանում: Այդ պատճառով պետք է զործ դնել բոլոր

միջոցները՝ փոշու գեմ պայքարելու համար—մարքել թաց շո-
րով, հատակները նավթեղ, սեղանների և այլ իրերի փոշիները
թաց շորով մաքրել: Ան-
հրատեղտ և հիշել, վոր փո-
շին ֆլատակար և թոքերին,
և վոր փոշու հեռ սղում
միշտ էլ միկրոօրգանիզմ-
ների սողմեր են լինում,
վորոնցից շատ-շատերը
վասնդավոր հիվանդու-
թյունների պատճառ են
դառնում:



Նկ. 53. Արտադրության փոշին մանրադի-
տակի տակ:

Ց. ԵՆԵՐՏ ԳԱԳԵՐ ՅԵՐ-
կար ժամանակ կարծում
էյին, վոր ողի բաղադրու-
թյունն արդեն ուսուսնա-
սիրված է, լավ հայտնի յե
և այլևս նոր բան ողի մա-
սին առել չի կարելի: Կա-
վառողչեյի փորձերը, վորտնք հետադայում գանադան ձեքփոխու-
թյուններով շատ անգամ կրկնվեցին, շատ համոզեցուցիչ էյին
համարվում:

Միայն XIX դարի վերջերին, 40 տարի առաջ, անգլիացի
գիտնական Բամզեյը (Pamsay), ողավելով նոր յեղանակներով
ու նոր մեթոդներով, վորտնք մշակված էյին ժամանակակից
գիտության ու տեխնիկայի նվաճումների հիման վրա, ազոտի
մեջ, թթվածնի և այլ խառնուրդների հեռացնելուց հետո, յե-
րևան հանեց էլի մի քանի գազերի առկայություն:

Նա անջատեց այդ գազերը և հետազոտեց: Պարզվեց, վոր
այդ գազերը ասրերբում են հոսուկ հոսկուրյուններով: Նրանք
բնավ վորեև նյութի հեռ բիմիական ռեակցիաներ տալու բնու-
նակություն չունեն: Նրանց բնորոշ հատկությունն այն է, վոր
բիմիապես իներտ են, այտինքն անգործն են: Այդ պատճառով
էլ նրանց անվանում են իներտ գազեր: Դրանք են՝ արգոնը, հե-
լիումը, նեոնը, կրիպտոնը և բեռնոնը: Ողում այդ գազերի բա-
նակն ըստ ծավալի կազմում է ընդամենը 1% (տես գիադ-
րամը նկ. 52):

Ներկայումս այդ ինքնա գաղերից մի բանիսն ուղտագործու մն են անխնդիրյում, այն գեպերում, յերբ պահանջվում է չայրվող, ուսակցիայի մեջ չմանող գաղ, Այդ գաղերից է հեղիումը, (նա միայն յերկու անգամ է ծանր ջրածնից), գործածում են տղանավազնացութան մեջ՝ զիրիժարլնիցը լցնելու համար, բռնկվող ջրածնի փոխարեն (գործածում են հեղիումի և ջրածնի անվտանգ խառնուրդ):

Վորոշ վայրերում հեղիումը գտնվում է գետնից դուրս յեկող գաղերի մեջ նավթահորերից դուրս յեկող գաղերի մեջ և հանքային աղբյուրների ջրերում, վորտեղից և ստանում են այդ գաղը:

Ելեկտրական լամպերը լցնելու համար ուղտագործում են մի ուրիշ գաղ—տրգոնը: Ինչպես հայտնի յե, ելեկտրական լամպերի մեջ մետաղի թելիկը ելեկտրական հոսանքի աղղեցութան տակ շիկանում է մինչև բարձր ջերմաստիճան ու լույս է արձակում: Ոգում շիկացնելիս մետաղյա թելիկն լսկոյն կոքսիզանար—կայրվեր: Այդ բանից խուսափելու համար լամպի միջի սղը հանում են: Այժմ սղը հանելու փոխարեն, հաճախ լամպեր են պատրաստում՝ լցրած աղոտի հետ խառնած արգոնով, և պարզվում է, վոր այդպիսի լամպերը թե դիտացկուն են և թե գործածութան համար ձեռնտու, քան սովորական լամպերը:

Աքզոնը յել նեռնը ուղտագործում են նաև ելեկտրական հատուկ լամպեր պատրաստելու համար, վորոնց մեջ վոչ թե մետաղյա թելիկն է լույս տալիս, այլ ինքը գաղը վորի մեջ բաց են թողնում ելեկտրական պարպումներ: Արգոնով լցված խողովակաձև լամպերը տալիս են պայծառ կապույտ գույնի լույս, նեռնով լցվածները—պայծառ նարնջա կարմրավուն գույնի լույս:

Թե մեկ է թե մյուս լամպերը գործ են անում խանութների գուցափեղկերը զարգարելու, լուսական հայտարարությունների, ուսկրամների և այլ նպատակների համար: Նեռնային լամպերը գործ են անում նավահանգստի փարոսները լուսավորելու համար:

1. Ինչպես կապացույց, վոր ոգում թթվածին և ածխածին գաղ կան
2. Աղոտի և թթվածնի վոր հատկություններից են ոգավում այդ գաղերն իրարից բաժանելու համար:
3. Հիշեցեք հեղիումի և արգոնի ամենաքորոշ հատկությունը:
4. Ինչու յեն հեղիումը գործածում ուղտավազնացութան մեջ, չնայած այն բանին, վոր 2 անգամ ծանր է ջրածնից:
5. Ինչ՞ու յեն սղը համարում գաղերի խառնուրդ և վոչ թե ըմբիական միացություն:
6. Ոգում ինչ վստահար խառնուրդներ են գտնվում:

VII. ՏԱՐՐԵՐԻ ԿՇՈՒՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԻՄԻԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՍ

Վորեք բարդ նյութ ուսումնասիրելիս մեզ կարող են հետաքրքրել վոչ միայն նրա հատկությունները և նրա փորակական բաղադրությունը, այսինքն թե ինչ տարրերից է նա բաղկացած, այլև կոչային այն հարաբերությունները, վորոնցով տարրերը միանում են իրար հետ՝ տվյալ նյութը կազմելու համար: Հետաքրքիր է նաև, թե իրար հետ միացող տարրերի կոչային հարաբերությունների մեջ տատանումներ կարող են լինել, թե վոչ:

Այդ հարցերին մոտենալու համար նախ և առաջ մենք պետք է ծանոթանանք նաև այն բանին, թե ինչպես են վորոշում վորեք նյութի կոչային բաղադրությունը: Վորպես որինակ վերցնենք ջուրը, վորը մինչև այս մենք ուսումնասիրում էյինք:


1. Ջրի կոչային բաղադրությունը. Մենք արդեն ծանոթ ենք ջրի հատկություններին ու նրա վորակական բաղադրությունը Գիտենք նաև, վոր ջուրը բաղկացած է յերկու տարրերից՝ ջրածնից և թթվածնից: Իսկ ջրածինն ու թթվածինը կոչային ինչքանակություններով են մտնում ջրի բաղադրության մեջ:

Այդ խնդիրը լուծելու համար մենք պետք է յեղենք այն դրությունից, վոր ելեկտրական հոսանքով ջուրը տարրալուծելիս ստացվում է յերկու ծավալ ջրածին և մի ծավալ թթվածին: Ուրեմն յեթե մենք ստանայինք մի լիտր թթվածին, յերկու լիտր ջրածին կստացվեր:

Կշռելով մի լիտր ջրածինը, վորը վերցված է նորմալ պայ

ժաններում՝ մենք կգտնենք, վոր նա կշռում է 0,09 գր: 2 լիտր ջրածինը կկշռի 0,09 × 2 = 0,18 գր, իսկ 1 լիտր թթվածինը (նույն պայմաններում) կշռում է 1,43 գր: Հետևաբար ջրի մեջ ջրածնի կշռային հարաբերությունը թթվածնի նկատմամբ կլինի 0,18 : 1,43 = 1 : 7,94, կամ կլոր թվով՝ 1 : 8: Այսինքն՝ մի կշռամաս ջրածնին ընկնում է 8 կշռամաս թթվածին: Այդ էլ հենց կլինի ջրի քանակական կամ կշռային բաղադրությունը: Այլ կերպ այդ հարաբերությունը կարելի չէ արտահայտել և ստիպաներով (88,81⁰/₁₀₀ թթվածին, 11,19⁰/₁₀₀ ջրածին):

Ջրի քանակական բաղադրությունը կարելի չէ վորոշել և այլ յեղանակով, ինչպես այդ արեց Փրանսիացի զիսնական Գեյ-Լյուսակը (Gay-Lussac 1805 թվին), վորն առաջին անգամ հաստատեց ջրի քանակական բաղադրությունը: (1805թ.) Գեյ-Լյուսակը գտնադան հարաբերություններով իրար եր խառնում ջրածինն ու թթվածինը և ամուր պատեր ունեցող փակ անոթում պայթեցնում այդ խառնուրդը: Հետո նա վորոշում եր, թե վոր գազից ավելցուկ մնաց և ինչ ծավալով: Այդ իմանալով՝ նա կարողացավ հաշվել, թե յուրաքանչյուր գազից քանի ծավալ ծախսվեց ջուր առաջացնելու համար:



Նկ. 54 Գեյ-Լյուսակի փորձը կրկնելու համար պարզ գործիք

Յենթագրենք, թե նա վերցրել է 10 մլ թթվածին և 30 մլ ջրածին: Պայթյունից հետո ամանի մեջ մնաց 10 մլ ջրածին: Հետևապես ջուր առաջացնելու համար իրար հետ միացրել են 10 մլ թթվածին և 30—10=20 մլ ջրածին. ուրեմն ջուր առաջանալու համար ջրածինը թթվածնից յերկու անգամ շատ պետք է լինի: Գազերն այդ հարաբերությամբ վերցնելով, նա ստացավ միայն ջուր—վոչ թթվածին մնաց և վոչ էլ ջրածին: Այլ խոսքով ասած՝ Գեյ-Լյուսակը ջուր ստանալով՝ թթվածնի և ջրածնի ծավալների միջև գտավ նույն հարաբերությունը՝ ինչ հարաբերությունն վոր ստացվում է ջրի տարրալուծման ժամանակ:

Գազերի խառնուրդից պայթյուն առաջացնելու համար Գեյ-Լյուսակը խառնուրդի միջով ելեկտրական կայծեր եր անցկացնում:

54-րդ նկարում պատկերված է մի պարզ գործիք, վորի մեջ կարելի չէ կրկնել Գեյ-Լյուսակի փորձը:

Հաստ պատեր ունեցող & խողովակը լցնում են ջրով: Բերտոլեայան աղից, կամ այլ նյութից 6 փորձանոթի մեջ թթվածին են ստանում և նրանից հավաքում 2 ծավալ և ապա նույն քանակությամբ էլ ջրածին: Դրանից հետո փորձանոթի խցանի մեջ անցկացրած լարերը միացնում են ելեկտրական աղբյուրի հետ: Խողովակի մեջ լարերի ծայրերի միջև առաջ է գալիս ելեկտրական կայծ, և խողովակի մեջ աեղի չէ ունենում պայթյուն: Պայթյունից հետո խողովակի ջուրը բարձրանում է վեր՝ մինչև յերեք բաժանմունք: Խողովակի մեջ 4 ծավալ գազի փոխարեն մնում է մի ծավալ գազ: Մնացած գազը թթվածինն է: Հետևապես պայթյունի ժամանակ յերկու ծավալ ջրածնի հետ միանում է մի ծավալ թթվածին:

Ջրի կշռային բաղադրությունը վորոշելու համար կարելի չէ ուղղվել նաև պղնձաքիզի ու ջրածնի միջև կատարվող աեակցիայից: Ինչպես նայանի չէ, այդ աեակցիայի ժամանակ ջուր է առաջանում: Յենթ նախորդ կշռնք պղնձաքիզը և ապա ստացված պղնձը, մենք կիմանանք պղնձից անջատված թթվածնի կշիռը: Անջատված թթվածինն ամբողջությամբ մտնում է առաջացած ջրի բաղադրության մեջ: Հետևապես յթե առաջացած ջուրը կշռենք և նրա քաշից գուրս գանք նրա բաղադրության մեջ մտած թթվածնի կշիռը, մենք կիմանանք ջրի մեջ յեղած ջրածնի կշիռը:

Այս ձևով ջրի կշռային բաղադրությունը վորոշել է Փրանսիացի զիսնական Ժ. Դյուման (Dumas), Գեյ-Լյուսակի փորձից ժամ 40 տարի հետո:


Դյումանի յեղանակն ավելի ճիշտ է, քան Գեյ-Լյուսակի յեղանակը, վորովհետև կշռումները կարելի չէ ավելի ճիշտ կատարել, քան գազերի ծավալների չափումները:

Դյումանի փորձերի ժամանակ վորոշ գծվարություններ են հարուցվել աեակցիայից առաջացած ջրի կշիռը վորոշելիս:

Պետք եր վոչ միայն հավաքել հեղուկացած ջուրը, այլ և հավաքել ջրի գուրջները, վորոնք ջրածնի ավելցուկի հետ կարող էլին գուրս գալ խողովակից: Դրա համար Դյուման ուղղից ջրի գուրջներն ազահույթամբ կլանող նյութերով—ֆոսֆորական անհիդրիդով:

55-րդ նկարում պատկերված է Դյումայի գործիքի սխեման a-ն գնդակ ախի խողովակն է, վորտեղ տեղի յն ունեցել պահպանան:

Մողովակը պղնձաքսիդի հետ միասին կշռել և փորձից առաջ և փորձից հետո՝ ստացած պղնձաքսիդի հետ միասին (յերկու կշիռները տարբերութունը կլինի պղնձի անջատված թթվածնի քաշը): Ե-ն ախի սրվակն է, վորտեղ հալված է պահպանից առաջացած ջուրը: ԵԵ-ն ախի խողովակներն են, վորտեղ դրվել և ֆոսֆորական անհիդրիդ՝ ջրի գոլորշիները կլանելու համար:



Նկ. 55. Դյումայի գործիքի սխեման:

Շատ տեղ չգրավելու համար՝ խողովակները ծոված են լատինական Ս առաջի ձևով (դրանք այսպես կոչվող Ս) առև խողովակներ են): Գազատար խողովակն անց և կացրած թունդ ծծմբաթթու պարունակող գլանի մեջ, վորն ողի խոնավության մուգն արդելու և դեպի ԵԵ խողովակները Ե սրվակը և ԵԵ խողովակները կշռվել, են փորձից առաջ և փորձից հետո (կշիռները տարբերութունը հույց կտա առաջացած ջրի կշիռը):

Ջրածինը ստացվել է A անոթում ցինկի վրա ծծմբաթթվով ներգործելով ԵԵԵ խողովակներում ջրածինը մաքրվել և դազանման խոնուրդները ներանց կլանող նյութերի սղնու թյամբ: Ջրածինը չորացնելու համար ԵԵԵ խողովակներում դրվել և ֆոսֆորական անհիդրիդ, այսինքն ջրի գոլորշիները կլանվել են, վորտեղ խոնավել ելին ջրածնի A անոթի մեջ (ջրածին ստանալու համար վերջում են ծծմբաթթվի ջրային լուծույթը): Յեթն ջրի գոլորշիները չկլանվելին մինչև պղնձաքսիդ պարունակող խողովակի մուտքին համեմբ, այն ժամանակ այդ գոլորշիները կկլանվելին (ինչպես և պահպանից առաջացած գոլորշիները) ԵԵ խողովակներում, և փորձը կտար սխալ հասանք:

Դյումայի փորձերը հաստատելին Գեյ-Լյուսակի ավյախները և ավին ջրի մեջ յեղած ջրածնի և թթվածնի կշռային ճիշտ հարաբերութունը, այն է՝ 1:7,94, կոր թվով 1:8:

2. Մեղալից լեվ սֆեթեգ. վորտե նյութ տարրալու ծելով՝ նրա բաղադրութունը վորոշելու համար մենք կատարում ենք հիմալիան անալիզ:

Յեթն մենք բավականանում ենք վորոշելով միայն, թի ինչ

տարրերից և բաղկացած ավյալ նյութը, ապա մենք կատարում ենք նրա վարակալան անալիզը:

Վարակալան անալիզի ամենահասարակ ձևն այն է, վոր մենք տարրալուծում ենք բարդ նյութը և նրա տարրերը դատում ազատ վիճակում: Այդպիսի անալիզի որինակ, բացի ջրի տաքացումով, կարող է ծառայել սնդիկաքսիդի տարրալուծումը՝ տաքացնելու միջոցով: Առկայծող մարխի միջոցով մենք կարող ենք յերևան հանել, վոր սնդիկաքսիդի տաքացումից զատվում է թթվածին: Բացի այդ, նրա բաղադրության մեջ, բացի թթվածնից, կա և սնդիկ, վոր մենք իմանում ենք նրա բնորոշ հատկութուններից:

Միացության մեջ ավյալ տարրի առկայութունը կարելի յե յերևան հանել նաև չդատելով այն ազատ վիճակում: Այսպես, որինակ՝ մալաքիտը տաքացնելու ժամանակ ստացվում է յերեք նյութ—ջուր, պղնձաքսիդ և ածխաթթու գաղ: Ստացված բոլոր յերեք նյութերն էլ բարդ են: Մենք պիտենք, վոր ջուրը բաղկացած է ջրածնից և թթվածնից. ջուրն առաջացել է մալաքիտից: Ուրեմն մալաքիտի բաղադրության մեջ կա ջրածին և թթվածին:

Գիտենալով, վոր պղնձաքսիդը բաղկացած է պղնձից և թթվածնից, կարող ենք ասել, վոր մալաքիտի բաղադրության մեջ կա նաև պղինձ: Յեղ, վերջապես, դիտենալով, վոր ածխաթթու գաղը բաղկացած է ածխածնից և թթվածնից, կարող ենք ասել, վոր մալաքիտի բաղադրության մեջ կա և ածխածին:

Այսպիսով, մենք իմացանք մալաքիտի վորակական բաղադրութունը: Նա բաղկացած է չորս տարրերից՝ պղնձից, ածխածնից, թթվածնից և ջրածնից: Միայ կլինել կարծել, վոր մալաքիտի բաղադրության մեջ մտնում են՝ պղնձաքսիդ, ջուր և ածխաթթու գաղ: Այդ նյութերն առաջանում են մալաքիտը տաքացնելու ժամանակ, իսկ մալաքիտը բաղկացած է օտարերից:

Մենք այստեղ բերինք վորակական անալիզի յերկու ամենապարզ որինակ: Նյութի վորակական բաղադրութունը վորոշելու խնդիրը միշտ էլ այդպես հեշտ ու հասարակ յեղանակով չի վճռվում: Նույն խնդիրների լուծումը, ինչպես և խոնուրդների անալիզը, կազմում է ըիմիայն առանձին մի բաժնի ուսումնասիրության առարկան. ըիմիայն այդ բաժինը կոչվում է անալիսիկ հիմալ:

Բարդ նյութի մեջ տարրերի կշռային հարաբերությունները վերոշեղ կոչվում է խնայակալան անալիզ:

Նյութի բաղադրությունը վերոշելու համար մենք կարող ենք ոգտվել նաև անալիզին հակառակ մեթոդով: Նյութը տարբալուծելու փոխարեն մենք այդ նյութը կարող ենք ստանալ տարրերից: Որինակ՝ ապացուցելով, վոր յերկու ծավալ ջրածնի և մի ծավալ թթվածնի միացումից ստացվում է միայն ջուր և ուրիշ վոչինչ, մենք հենց այդ յեղանակով հաստատում ենք ջրի բաղադրությունը: Պարզ նյութերից բարդ նյութեր կամ ընդհանրապես պակաս բարդ նյութերից ավելի բարդ նյութեր ստանալու մեթոդը քիմիայի մեջ կոչվում է սինթեզ:

Դիտական հետազոտությունների ժամանակ սինթետիկ մեթոդով շատ հաճախ են ոգտվում՝ անալիզի ավյալներն ստուգելու համար և, ընդհակառակը, վորեն նյութ սինթեզի յենթարկելով՝ նրան հետո յենթարկում են անալիզի: Յերկու մեթոդն էլ մի նպատակի յեն հանդուս—սահմանել նյութի բաղադրությունը:

3. Զանազան յեղանակով սացված րի բաղադրությամբ արտեղը: Մենք գիտենք, վոր բնություն մեջ տարրեր ջրեր կան—գետի, ջրհորի, աղբյուրի, անձրևի, ծովի ջուր և այլն: Արհեստական ձևով մենք կարող ենք ջուր ստանալ զանազան յեղանակներով—ջրածնից և թթվածնից, մալաքիտը տարբալուծելով, պղինձօքսիդը ջրածնով վերականգնելիս: Պղնձօքսիդ կարելի յե ստանալ մալաքիտը տաքացնելով, պղնձիտրատից՝ տաքացնելով և այլ յեղանակներով: Զանազան յեղանակներով կարելի յե ստանալ նաև մի շարք այլ նյութեր: Միանգամայն բնական և յենթարդի, վոր զանազան տեղերից և զանազան յեղանակներով ստացվող ջրի և այլ նյութերի նմուշները կարող են թեկուզ փոքր չափով տարբերվել իրենց կշռային բաղադրությամբ:

Ֆրանսիացի հայտնի գիտնական Բերտելոն (Berthollet, 1747—1822), վոր հայտնի յե իր մի շարք գիտական կարևոր գյուտերով, իսկապես գտավ, վոր տարրեր յեղանակներով ստացվող մի քանի նյութերի մոտ կշռային բաղադրության վորոշ տատանումներ են նկատվում: Նա գտավ, վոր մետաղներն ոգում ջիկացնելու ժամանակ, նրանց թթվածնավոր միացություններն առաջանում են յսիստ փոփոխվող հարաբերություններով: Նման

յերևույթներ նա գտավ և այլ միացությունների համար: Նա ընդունում էր, վոր վորոշ նյութեր իրար հետ միացություններ են առաջացնում անփոփոխ բաղադրությամբ, իսկ մյուսների համար վորոշ սահմաններ կան, վորտեղ այդ միացությունների բաղադրությունը կարող է տատանվել:


Բերտելոյի կարծիքը ժխտում էր Ֆրանսիացի մի ուրիշ գիտնական՝ Պրուսթը (Proust, 1754—1826), վոր ասում էր, թե քիմիական բոլոր միացությունները մշտական բաղադրություն ունեն (անկախ նրանց ստանալու յեղանակից): Պրուսթը պնդում էր, վեր Բերտելոյի ստացած ավյալները հետևանք են նրա հետազոտած նյութերի վոչ բոլորովին մաքուր լինելուն: Պրուստի և Բերտելոյի վեճը տևեց մոտ 6 տարի: Այդ ժամանակամիջոցում, ավելի ճիշտ անալիզներ կատարելու համար, նրանք մեթոդներ մշակեցին և շատ փորձեր գրին: Վերջապես պարզվեց, վոր ճիշտը Պրուստն է և զիտություն մեջ այն համոզումը հաստատվեց, վոր յուրաքանչյուր մաքուր նյութ ունի մեծական յել անփոխյա բաղադրություն, և վոր գոյություն ունի բաղադրությամբ հաստատունությամբ արեմի:

Այսպիսով ջրի բաղադրությունը, ինչպես և այլ միացությունների, անփոփոխ է և հարակալուն: Դրանից սակայն չի հետևում, վոր ջրածինը և թթվածինը յեն կարող առաջացնել միանգամայն այլ միացություն, վոր իր հասկություններով ու բաղադրությամբ տարբերվի ջրից, այսինքն՝ վոր ջրածնի և թթվածնի միջև հարաբերությունը լինի վոչ թե 1:8, այլ ուրիշ հարաբերություն: Յեվ իսկապես, այդպիսի միացություն հնարավոր է ստանալ և այդ կոչվում է ջրածնի պերօքսիդ:

4. Զրածին պերօքսիդ: Զրածին պերօքսիդը շատերին է հայտնի: Թույլ լուծույթ է. գործ են անում կոկորդը վողողելու և վերքերը ախտահանելու համար: Զրածին պերօքսիդի լուծույթը, անգամ շատ թույլ (30|0-անոց լուծույթի մի թեյի գդալը մի բաժակ ջրի մեջ) վիճակում բնորոշ համ ունի: Ավելի թունդ լուծույթները կծու համ ունեն և ներգործում են մաշկի վրա: Մաշկի վրա առաջ են բերում սպիտակ բծեր, և այրոցք է ստացվում:

Զուտ ջրածին պերօքսիդը—թանձր, անգույն հեղուկ է, 1|2 անգամ ծանր է ջրից:

Ջրածին պերօքսիդն



Նկ. 56. Ջրածին պերօքսիդի քայքայելը՝ տաքացնելով:

այնպիսի նյութերի որինակ կարող է ծառայել, փորձը հետևաբար քայքայվում են: Ջրածին պերօքսիդի քայքայումը տեղի չի ունենում և սովորական ջերմաստիճանի մեջ, բայց դանդաղ: Քայքայումը կարելի չի արագացնել տաքացնելով:

Յեթե ջրածին պերօքսիդի լուծույթը գաղափար խողովակ ունեցող փորձանոթի մեջ տաքացնենք (նկ. 56), կարելի չի համոզվել, վերջ ջրածին

պերօքսիդի քայքայման ժամանակ գազ է անջատվում: Ստուգելով հավաքած գազը՝ մենք կիմանանք, փոր այդ շառաչող գազ չէ, այսինքն ջրածնի ու թթվածնի խառնուրդ, այլ մաքուր թթվածին է: Ռեակցիան ընթանում է այսպես.

Ջրածին պերօքսիդ = ջուր + օքսիգեն:

Հետևապես, թթվածնի քանակը ջրածին պերօքսիդի մեջ ավելի շատ է, քան ջրի մեջ, փորտեղից և ստացել է «ջրածին պերօքսիդ» կամ ջրածին պերօքսիդ անունը (ջուրը կարելի չի կոչել «ջրածինօքսիդ»):

Ջրածին պերօքսիդի քայքայումը կարելի չի արագացնել փոշ միայն տաքացնելով, այլ կատալիզատորների ողնությամբ:

▲ Փորձ. Փորձանոթի 1/4 լցրեք ջրածին պերօքսիդի 3% լուծույթով: Պատրաստ ունեցեք անկայծող մարիս: Փորձանոթի մեջ պեղեք մի պտղունց մակուկաղիոսիդի սև փոշի և փորձանոթի մեջ իջեցրեք անկայծող մարիքը: Մարիքը բոցավառվում է, փորովհետև իսկույն սկսվեց թթվածին անջատվելը:

Մանդանթիդն առաջ է բերում ջրածին պերօքսիդի ուժեղ քայքայում և թթվածնի անջատում: Ռեակցիան շուտով վերջանում է: Քայքայման ժամանակ հետափում է տաքացում, այսինքն տաքության անջատում:

Իսկ ի՞նչ մնաց փորձանոթի մեջ: Փոխվեց արդյոք մանդանթիդը՝ ածուխի նման փոշի:

Փորձանոթի մեջ մնացած սև փոշին քամեցեք. քամոցի վրայից վերջերք այդ սև փոշին ու նորից պեղեք ջրածին պերօքսիդ պարունակող մի այլ փորձանոթի մեջ: Դուք նորից կտեսնեք ջրածին պերօքսիդի ուժեղ քայքայում: Կարող եք սև փոշին նորից անջատել, և նա նորից կսկսի ջրածին պերօքսիդն ուժեղ քայքայել: Այդ գործողությունը կարելի չի կրկնել՝ վերջան ուղիք: ▲

Տվյալ փորձն սպացուցում է մեզ վերևում սաածը, վոր կատալիզատորն արագացնելով ռեակցիան. ինքը մնում է անփոփոխ:

Ջրածին պերօքսիդի համար վորպես կատալիզատոր, բացի մանգան դիօքսիդից, կարող են ծառայել և այլ նյութեր, ինչպես, որինակ՝ մետաղների փոշին և հատկապես պլատինի փոշին, ալյուր և նույնիսկ ապակին: Ապակյա ամանի մեջ ջրածին պերօքսիդն ավելի արագ է քայքայվում, քան, ասենք թե, պարաֆինե ամանի մեջ:

Կատալիզատորները կարող են արագացնել վոշ միայն ջրածին պերօքսիդի քայքայման ռեակցիան, այլ նաև քիմիական բազմապիսի այլ պրոցեսներ: Կատալիզի յերևույթներ հետազայում մեզ դեռ կպատահեն:

Բացի տաքացնելուց և կատալիզատորներից, ջրածին պերօքսիդի քայքայումն արագացնում է նաև լույսը: Յեթե ջրածին պերօքսիդի լուծույթը, բերանը պինդ փակած անոթի մեջ, պատահանի մոտ դնենք, տարրալուծումն այնքան կարագանա, վոր անջատվող թթվածնի ճնշման տակ կարող է խցանը թռչել և նույնիսկ սրվակը կտորվել: Մթության մեջ քայքայումն այնքան դանդաղ է ընթանում, վոր ջրածին պերօքսիդի նույն լուծույթն առանց նկատելի քայքայման կարող է մնալ շատ ամիսներ: Անա թե ինչն է ջրածին պերօքսիդը գեղատաներից բաց են թողնում սովորաբար մթնազույն սրվակները մեջ: Կավ կլիներ, վոր այդ սրվակների մեջ ևս ջրածին պերօքսիդը մութ պահարանում և սառը տեղ պահվի: Յեվ, հնայած դրան, ջրածին պերօքսիդը յերկար ժամանակ մնայով, աստիճանաբար քայքայվում է և լուծույթն ավելի ու ավելի թուլանում:

Վորքան թուլեց է ջրածին պերօքսիդի լուծույթը, այնքան նա ավելի հեշտ է քայքայվում: Չուտ ջրածին պերօքսիդի քայքայումը կարող է ընթանալ այնքան ուժեղ կերպով, վոր նույնիսկ պայթյուն կառաջացնի: Չուտ ջրածին պերօքսիդը փոսնագավոր պայթուցիկի նյութ է: Շուտ քայքայվող նյութերը քիմիայի մեջ կոչվում են անկայուն նյութեր:

Ջրից և թթվածնից զգալի քանակությամբ ջրածին պերօքսիդ ստանալ չի հաջողվում: Նա ստացվում է բարիում պերօքսիդի և մինչև 0° ստուգրած ծծմրաթթվի լուծույթի միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ:

Ջրածին պերօքսիդի անալիզը ցույց է տալիս, վոր նրա մեջ մի կշռամաս ջրածին ընկնում է 16 կշռամաս թթվածին, այսինքն յերկու անգամ ավելի, քան ջրի մեջ (ջրի մեջ 1 կշռամաս ջրածինն ընկնում է 8 կշռամաս թթվածին):

Այսպիսով ջրածինն ու թթվածինն իրար հետ միանալով՝ առաջացնում են յերկու միացութուն—միանգամայն քարբեր բաղադրությամբ: Ընդ վորում, տարրերի քանակական հարաբերությունների փոփոխմամբ առաջ է գալիս նոր վարակ, նոր նյութ՝ նոր հատկութուններով: Ջուրը և ջրածին պերօքսիդը—յերկու բարձրման տարրեր նյութեր են:

5. Յերկու քարբերի քարբեր միացութունների կառավարական քաղաքությունը. Ջուրը և ջրածին պերօքսիդը յեղակի գեպք չեն ներկայացնում, յերբ յերկու տարրեր իրար հետ վոչ թե մի, այլ յերկու տարրեր միացութուններ են առաջացնում: Մի քանի տարրեր իրար հետ նույնիսկ յերկուսից ավելի՝ 3, 4, 5 և ավելի միացութուններ են առաջացնում:

Մի քանի մետաղներ, որինակ՝ պղինձը, կապարը, յերկաթը, մանգանը, թթվածնի հետ առաջ են բերում մի քանի միացութուններ—ոքսիդներ: Մետաղօքսիդների մեջ մասնաբաժնի կազմութունն ու կշռային հարաբերութուններն ուսումնասիրելու համար ոգտվում են այդ ոքսիդների և ջրածնի միջև տեղի ունեցող ռեակցիայով:

Յեթե մետաղը մի քանի տարրեր ոքսիդներ է առաջացնում, վերականգնման ժամանակ նրանք բոլորն էլ տալիս են ջուր և մետաղ, Բնտիան կլինի յենթադրել, վոր նույն մետաղի տարրեր ոքսիդները վարակապես տարրեր են, տարրեր պետք է լինեն և փոխակախան թաղադրության տեսակետից:

Այդ ենթադրութունը կարելի չի հաստատել, յեթե մենք վերջինք ճիշտ կերպով կշռած մետաղօքսիդի մի վորոշ քանակութուն, ջրածնով վերականգնենք փորձանոթի մեջ (Նկ. 49) և սուղա ստացված մետաղը կտեսնենք:

Մետաղօքսիդի կշռից դուրս գալով ստացված մետաղի կշիռը, մենք կգանենք մետաղի հետ միացած և վերականգնման ռեակցիայի ժամանակ մետաղից ջրածնի միջոցով անջատված թթվածնի կշիռը:

Վորպեսզի պարզ լինի, թե ինչպես են այդ փորձերը կա-

առնում, բերում ենք Լենինգրադի 15-րդ դպրոցի պղնձօքսիդի և կապարօքսիդի վրա կատարած փորձերից մեկը:

Վերցրել են պղնձի յերկու տարրեր ոքսիդներ—մեկը կարմիր, մյուսը սև գույնի, և կապարի յերկու տարրեր ոքսիդներ—մեկը դեղին, մյուսը մուգ-կարմիր գույնի:

1. Պղնձի կարմիր սխիդ

Փորձանոթի կշիռն ոքսիդի հետ միասին	—8,33	գր
» » զատարկ ժամանակ	—7,53	»
Պղնձօքսիդի	—0,8	»
Փորձանոթի կշիռն ստացած պղնձի հետ միասին	—8,24	գր
» » զատարկ ժամանակ	—7,53	»
Ստացած պղնձի կշիռը	—0,71	»
Թթվածնի կշիռը	=0,8—0,71=0,09	գր

2. Պղնձի սև սխիդ

Փորձանոթի կշիռն ոքսիդի հետ միասին	—8,72	գր
» » զատարկ ժամանակ	—8,12	»
Պղնձօքսիդի կշիռը	—0,6	»
Փորձանոթի կշիռն ստացված պղնձի հետ միասին	—8,60	գր
» » զատարկ ժամանակ	—8,12	»
Ստացած պղնձի կշիռը	—0,48	»
Թթվածնի կշիռը	=0,6—0,48=0,12	գր:

Հիմա հաշվենք, թե այդ ոքսիդների մեջ ուսյն քանակաության, որինակ, 10 գր թթվածնին ինչքան պղինձ է ընկնում:

Յեթե պղնձի կարմիր ոքսիդի մեջ 0,09 գր թթվածնին ընկնում է 0,71 գր պղինձ, ուրեմն 1 գր կլնկնի 0,09 անդամ

պակաս $\frac{0,71}{0,09}$, իսկ 10 գր—10 անգամ ավելի, այսինքն

$$\frac{0,71}{0,09} \times 10 = 76 \text{ գր պղինձ:}$$

Նման հաշվարկ կատարելով սև պղնձօքսիդի վերաբերյալ:

կլանենք՝ $\frac{0,48}{0,12} \times 10 = 40 \text{ գր պղինձ:}$

79-ը համարյա յերկու անգամ ավելի չի 40-ից: Յեթե

զարոցում ավելի ճիշտ կշռեք լիներ, այն ժամանակ ստացած թվերը շատ ավելի մոտ կլինեյին 2:1 հարաբերության, կամ նույնիսկ ճիշտ՝ 2:1:

Այսպիսով կարմիր պղնձոքսիդի մեջ նույն քանակությամբ թթվածնին ընկնում է յերկու անգամ ավելի պղինձ, քան սև ոքսիդի մեջ:

Կապուտսիդի վերաբերյալ հետևյալ տվյալներն են ստացվել. 2,8 գր կապարի դեղին ոքսիդի մեջ գտնված է 2,6 գր կապար և 0,2 գր թթվածին: 2,093 գր կապարի մուգ-կարմիր ոքսիդի մեջ՝ 1,82 գր կապար և 0,273 գր թթվածին:

Յեթե հաշվենք թթվածնի քանակը, յերկու ոքսիդներին մեջ ել 10 գր կապարի համար կգտնենք.

Դեղին օքսիդի մեջ՝

2,6 գր կապարին ընկնում է 0,2 գր թթվածին.

10 » » » x » »

$$x = \frac{0,2 \cdot 10}{2,6} = 0,75 \text{ գր թթվածին:}$$

Մուգ կարմիր օքսիդի մեջ՝

1,82 գր կապարին ընկնում է 0,273 գր թթվածին

10 » » » x » »

$$x = \frac{0,273 \cdot 10}{1,82} = 1,5 \text{ գր թթվածին:}$$

Այստեղ կապարի մուգ-կարմիր ոքսիդի մեջ կապարի նույն քանակությամբ ընկնում է ճիշտ յերկու անգամ ավելի թթվածին, քան դեղին ոքսիդի մեջ՝ $1,5 : 0,75 = 2$:

Մենք գիտենք, վոր ծծումբը յերկաթի հետ առաջացնում է ծծմբերկաթ: Բացի ծծմբերկաթից, ծծումբը յերկաթի հետ տալիս է ևս մի միացություն, վոր պատահում է բնություն մեջ. մետաղական փայլով դեղին գույնի նյութ է, կոչվում է ծծմբալիմ կրչեղամ և քիչ նման է լատունին (դեղին պղինձ):

Ոգտվելով անալիզի այլ յեղանակներով, կարելի չէ գտնել, թե նույն քանակի յերկաթին ինչքան ծծումբ է ընկնում թե ծծմբերկաթի և թե ծծմբական կոչեղանի մեջ: Մենք արդեն գիտենք, վոր ծծմբերկաթի մեջ 7 կշռամաս յերկաթին ընկնում է

4 կշռամաս ծծումբ: Ծծմբական կոչեղանի անալիզը ցույց է տալիս, վոր ծծմբական կոչեղանի մեջ 7 կշռամաս յերկաթին ընկնում է 8 կշռամաս ծծումբ, այսինքն յերկու անգամ ավելի. քան ծծմբերկաթի մեջ:

Ջրածնի պերքսիդի մեջ, ինչպես արդեն հայտնի չէ, 1 մաս ջրածնին յերկու անգամ ավելի թթվածին է ընկնում, քան ջրի մեջ: Վերջենք կլի մի որինակ—ածխածնի և ջրածնի յերկու միացություն, հտհնային գազ, վորն անջատվում է կանգնած ջրերի հատակից, և ացետիլեն, վոր ստացվում է արհեստական յեղանակով, տալիս է շատ պայծառ բոց և գործ է անվում լուսատվորության համար: Ծահճային գազի մեջ 1 մաս ջրածնին ընկնում է 3 մաս ածխածին, իսկ ացետիլենի մեջ 1 մաս ջրածնին 12 մաս ածխածին, այսինքն՝ 4 անգամ ավելի: Նման հաշուակ հարաբերություններ են ստացվում և նման այլ միացությունների համար:

Բոլոր այս գեպերում մեմբ ուժադուրյուն պետք է գործենք յերկու համգամակի վրա:

1. Ըստ կշռային բազադրության՝ նույն տարրերի յերկու միացությունները խիտ տարրերվում են իրարից: Բազադրությունը փոխվում է կարծեք թե թույլով:

Կամայական բազադրության միացություններ ստանալ մենք չենք կարող: 1 կշռամաս ջրածնի հետ միանում է կամ 8 կամ 16 կշռամաս թթվածին: Ուրիշ միացություն ստանալ չի հաջողվում:

Նույնը կարելի չէ ասել և ընդհանրապես յերկու տարրերի մի քանի միացությունների նկատմամբ:

2. Բացի այդ, յերբ յերկու տարր իրար հետ մի քանի միացություն են առաջացնում, նկատվում է նաև մի այլ կանոնափոխություն: Բացի այն, վոր մի տարրի միևնույն քանակություն մի այլ տարրի խիտ տարրեր քանակություններն են ընկնում, այդ քանակությունները սովորաբար 2, 3, 4 անգամ, ընդհանրապես ամբողջական թվեր անգամ մեկը մյուսից մեծ է լինում:

Այդ կանոնափոխություններն առաջին անգամ գտել է անգլիացի գիտնական Դալտոնը (Dalton, 1766—1844):

1. Ի՞նչ կըստյին բազաղրութուն ունի շուրթ:
2. Ի՞նչպէս վորոշեց Գեյ-Լյուստիլը ջրի բաղադրութիւնը:
3. Ի՞նչ է վորակական անալիզը:
4. Ի՞նչ է սինթէզը:
5. Ի՞նչ է քանակական անալիզը:
6. Վճիռն է բաղադրութեան հաստատունութեան որոնքը:
7. Ի՞նչ անկաշուն նյութեր գիտեք:
8. Ի՞նչ է կատալիզատորը:
9. Յուլց ավելեք ռեակցիան արաղացնող պայմաններ:
10. Դալտոնը յերկու ավելայ տարրերից առաջացող մի քանի միացութեաների համար ինչ կանոնաւորութուն գտավ:
11. Կարելի չէ ասել, թե կրաքարի բաղադրութեան մեջ կէր կա:
12. Հինգ ծավալ շրտմանի և յերկու ծավալ թթվածնի խառնուրդի պայթեցումներից հետո թէ՛ն կմնա և քանի ծավալ:
13. Ի՞նչ հատկութիւններ ու բաղադրութուն ունի շրտման պերքուրդը:
14. Վճիռն է Դյուրմայի՝ ջրի բաղադրութունը վորոշելու յեղանակը:

VIII. ՆՅՈՒԹԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Դալտոնը վոչ միայն նկատեց վերը նշած ճշտութիւնները, այլև գտավ այդ ճշտութիւնների պատճառը: Նա տիեց նրանց բացատրութիւնը, վոր այժմ քիմիական մեր բոլոր գիտելիքների հիմքն է կազմում: Դալտոնը հանդիսանում է ժամանակակից քիմիայի հիմնադիրը:

1. Դալտոնի ատոմները. Դալտոնի գիտաւորութիւններից պարզվում է, վոր կարծեք թե տարրերն այլ տարրերի հետ կարելի չէ միացնել միայն վորոշակի բաժիններով: Մի տարրի ավել քանակութեանը կարելի չէ միացնել մի այլ տարրի մեկ, յերկու, յերեք բաժին և վոչ թե կամայական քանակութիւններ, ճիշտ այնպէս, ինչպէս շողեքարչին մենք միացնում ենք 1, 2, 3 վարդն և վոչ թե 1,3 կամ, 2,78 վարդն:

Այդ ճշտութիւնները Դալտոնը վոչ թե պատահական կերպով գտավ, այլ այդպիսի պարզ հարաբերութիւններ հենց նա սպասում էր: Բանն այն է, վոր մի շարք կրադատութիւնների հիման վրա, նյութի կազմարկում վերաբերյալ Դալտոնը վորոշակի պատկերացում ունեցավ: Նման պատկերացումներ են ունեցել և հին հունական փիլիսոփաները, վորոնք 2 հազար և ավելի տարի

դի մեղնից առաջ են ապրել: Յուրաքանչյուր նյութ Դալտոնին պատկերանում էր վոչ թե համատարած, անբաժան ինչպիսի մի բան, այլ բաղկացած փոքրիկ անսեսանելի մասնիկներից, վոր հունական փիլիսոփաներն անվանել են ատոմներ, վոր նշանակում է անբաժանելի:

Դալտոնը գտնում էր, վոր յուրաքանչյուր տարրի այդ ատոմները խիստ վորոշ են և ունեն իրենց սեփական կշիռն ու մեծութիւնը: Ատոմները արոնվել, բաժանվել չեն կարող: Նրանք կարող են միայն միմեայ իրար հետ և առաջ բերել բարդ նյութերի ատոմներ, վորոնք այժմ կոչվում են «մասնիկներ» կամ «ուլեկուլներ»:

Մոլեկուլներ առաջացնելու համար մի տարրի ավել քանակութեան ատոմների հետ կարող են միմեայ կամ մի, կամ յերկու, կամ ընդհանրապես ամբողջական թվով մի այլ տարրի ատոմներ:

Ատոմները Դալտոնը պատկերացնում էր գնդիկների ձևով և նշանակում էր փոքրիկ շրջաններով: Թող \bigcirc շրջանը պատ-

կերացնի թթվածնի ատոմը, իսկ \bigcirc շրջանը՝ պղնձի ատոմը:


Պղինձը թթվածնի հետ միացութիւն առաջացնելու ժամանակ մի ատոմ թթվածնի հետ կարող է միմեայ կամ մեկ, կամ յերկու ատոմ պղինձ:

Ասենք թե թթվածնի մի ատոմը կշռում է զրամի ամենաչնչին մասնիկի 8 կշռամասը, իսկ պղնձի ատոմը՝ զրամի նույն մասնիկի 32 կշռամասը: Այդ զեպքում պղնձի սե ոքսիդի մոլեկուլի մեջ 8 կշռամաս թթվածնին կընկնի 32 կշռամաս պղինձ իսկ կարմիր ոքսիդի մեջ նույն 8 կշռամաս թթվածնին՝ 64 կշռամաս պղինձ՝ այսինքն յերկու անգամ ավելի:

Պարզ է, վոր կշռային նույն հարաբերութիւններ կմնա, յեթե վերցնենք 2 մոլեկուլ սե ոքսիդից և 2 մոլեկուլ կարմիրց, կամ 10 և 10 մոլեկուլ, կամ միլիոն և միլիոն մոլեկուլ: Միևնույն է, ինչքան էլ մենք նյութեր վերցնելու լինենք, պղնձի կարմիր ոքսիդի մեջ թթվածնի քանակը յերկու անգամ շատ կլինի, քան պղնձի սե ոքսիդի մեջ:

Դալտոնի կատարած փորձերը միանգամայն հաստատեցին նրա հիպոթեզը: Նրա հայտարարած ճշտութիւնները միանգամայն

մայն համապատասխանում են նրա այն պատկերացմանը, թե նյութը բաղկացած է ատանձին, միանգամայն վորտչակի և անփոփոխ կշիռ ունեցող ատոմներից: Յերկու տարրի տարրեր միացությունների մեջ մի տարրի ավել բանակությունն իսկապես ընկնում են մյուս տարրի այնպիսի բանակությունները, վորոնք մեկը մյուսից մեծ են ամբողջական թիվ անգամ:



Պղնձի սև որսիքը Պղնձի կարմիր որսիքը

Յեկնելով այն քանից, վոր ամենարագմապիսի քիմիական միացությունների մեջ կեռային ամենաբիչ քանակությունը միշտ էլ ընկնում է ջրածնին՝ Դալտոնը վորոշեց, վոր ամենաբարձր ատոմն է:

Այսուհետև Դալտոնը յենթադրեց, վոր ջրի մոլեկուլը, վորտեղ մեկ կշռամաս ջրածնին ընկնում է 8 կշռամաս թթվածինը—բաղկացած է մի ատոմ ջրածնից և մի ատոմ թթվածնից: Դրանից հետևում է, վոր թթվածնի ատոմն 8 անգամ ավելի յե կշռում, քան ջրածնի մի ատոմը: Այսպիսով, յեթե ջրածնի մի ատոմը, վոր

Դալտոնը նշանակեց  նշանով, կշռում է կշռի միավորի ամենաչնչին մի մասը, ապա թթվածնի ատոմը կշռում է այդպիսի 8 միավոր: Համաձայն այս բանի, Դալտոնը ջրի բաղադրությունը պատկերացրեց այսպես—  :

Նման յեղանակով, ջրածնի մի ատոմի կշիռն ընդունելով վորպես միավոր, ջրածնի տարրեր միացությունների կշռային բազադըությունների հիման վրա Դալտոնը վորոշեց, թե տարրեր ատոմները եանի անգամ ծանր են ջրածնի. մի ատոմից, ու գուրս յեբեց իրեն հայտնի տարրերի յենթադրական ատոմական կեթոմները: Այդ գեպըում նա ամեն անգամ յեկնում էր այն յենթադրությունից, վոր յերկու տարրերի հասարակ միացություն մոլեկուլի մեջ մտնում են այդ տարրերից մեկական ատոմ¹⁾:

Ատոմները և նրանց կշիռները Դալտոնը նշանակեց համապատասխան նշաններով՝ շրջաններով, և այդ շրջանների ող-

1) Այն տարրերի համար, վորոնք ջրածնի հետ միացություն չեն տալիս, Դալտոնն յեղակեռ էր ընդունում նրանց թթվածնային միացությունները, հաշվելով 8 կշռամասին ընկնող տարրի քանակը, այսինքն մեկ ատոմ թթվածնին:

նությամբ նա սկսեց արտահայտել քիմիական միացությունների կշռային բաղադրությունը: Այդ նշանները քիմիական առաջին ֆորմուլներն էյին, վոր արտահայտում էյին վոչ միայն նյութի վորակական, այլև քանակական բաղադրությունը, վորովհետև յուրաքանչյուր շրջան տարրի կշռային վորոշ քանակություն՝ ատոմի արտահայտությունն էր հանդիսանում:

Պղնձի կարմիր որսիքի կամ պղինձաուրորսիքի ֆորմուլը

Դալտոնը պետք է արտահայտեր այսպես՝  . վոր նշանակում է վոչ միայն այն, վոր պղինձաուրորսիքի մոլեկուլը բաղադրված է յերկու ատոմ պղնձից և մի ատոմ թթվածնից, այլև այն, վոր այդ միացության մեջ, ինչ քանակություն էլ ուզում է յինի, թթվածնի և պղնձի միջև հարաբերությունը նույնն է, ինչպես վոր մի մոլեկուլի մեջ, այն է 8:64:

Ստորև բերած աղյուսակում ցույց են տրված տարրերի այն նշանները (հիշելու համար չե), վորոնցով Դալտոնը նշանակում է իրեն հայտնի տարրերը:

	- Ջրածին		- Գոսմոր		- Յիճկ
	- Ազոտ		- Մծումբ		- Պղինձ
	- Ածխածին		- Սնդիկ		- Արճիճ
	- Թրվածին		- Յերկաք		- Արծաք


Յուրաքանչյուր նշանին վորոշակի ատոմական կշիռ էր համապատասխանում¹⁾:

Ահա Դալտոնի ֆորմուլներից մի քանի որինակ (հիշելու համար չեն):




Ջուր շմոլադադ անթաթթու ազոտի թթվածնային միացություններ


1) Ատոմական այդ կշիռներն այստեղ մենք չենք բերում, վորովհետև նրանք ճիշտ չեյին և հետագայում միայն փոխարինվեցին ավելի ճիշտ թվերով:




Ճծուձը
յեռքսիդ



քայտաթթու



ամոնիում նիտրատ



գինեթթու

Այդ ժամանակվա վոչ ճիշտ անալիզների և ատոմական կշիռների հիման վրա կազմած այդ ֆորմուլաները համեմայն դեպս շատ մոտ են ժամանակակից քիմիայի ֆորմուլաներին, և կարելի չէ զարմանալ այն հանճարեղության վրա, վորով Դալտոնը շատ նյութերի բաղադրություն նախատեսեց:

2. Մետալ—մոլեկուլային ուսմունք. Դալտոնի սքանչելի իդեան, ինչպես արդեն ասված է, կազմում է ժամանակակից քիմիայի հիմքը: Դալտոնի ուսմունքն աստիճանաբար զարգացավ ու լայնացավ: Այժմ մենք վոչ միայն միանգամայն վորոշակի կերպով գիտեմք, վոր իրոք ատոմները գոյություն ունեն, այլև մենք շատ բան գիտենք ատոմների կազմության մասին, պարզ պատկերացում ունենք մոլեկուլների կազմության մասին, մոլեկուլների և ատոմների մեծությամբ, կռիվի և նրանց օարժման մասին:


Այդ բոլորը գիտության մի ամբողջ բնագավառ է կազմում և կոչվում է առատա-մոլեկուլային ուսմունք: Ֆիզիկայի գասընթացից հայտնի պետք է լինի, վոր մարմինների լայնամալը տաքությունից և սեղմվելը ցրտից՝ բացատրվում է այն բանով, վոր նյութի մոլեկուլները կարող են իրարից հեռանալ և իրար մոտենալ:

Բացի այն, վոր նյութի մոլեկուլներն իրարից վորոշ տարածության վրա յեն գտնվում, և վոր այդ տարածությունը կարող է մեծանալ ու փոքրանալ, մոլեկուլները գտնվում են անընդհատ օարժման մեջ:

Մոլեկուլների շարժումը հատկապես շատ ցայտուն կերպով է արտահայտվում գազային վիճակի նյութերի հատկությունների վրա:

Յեթե մենք վերցնենք գազով լի յերկու գլան և բերաններով իրար մոտեցնենք, շատ շուտով գազերն իրենք իրենց


իրար կխառնվեն, և կտասցվի զազերի համասեռ մի խառնուրդ: Այդ յերևույթը, վոր կոչվում է գիճուզիա, հատկապես շատ լավ դիտելի չէ, յերբ զազերից մեկը զուեւավոր է լինում, մյուսը անգույն: Կարելի չէ վերցնել մի գլանով ջրածին, մյուսով՝ ազոտդիոքսիդ, վոր ունի գորը գույն: Գլանները միացնելուց հետո, ազոտդիոքսիդն ավելի ծանր լինելով՝ կտարածվի դեպի վեր, իսկ ջրածինը թեթև լինելով՝ կիջնի դեպի վար (նկ. 57):



Նկ. 57. Գազերի
գիճուզիա:

Գազերն իրենք իրենց կխառնըվեն և այն դեպքում, յեթե նրանց մոլեկուլներն անցնելու լինեն նեղ խողովակի միջով:

Դալտոնն այսպիսի մի փորձ կատարեց. նա վերցրեց յերկու սրվակի Մեկը ցրեց անխաթթու գազով, մյուսը՝ ջրածնով և սրբվակները միացրեց իրար ապակի խողովակով, ինչպես ցույց է



Նկ. 58. Դալտոնի
փորձը:

արված 58-րդ նկարում, ընդ վորում անխաթթու գազով լի սրբվակը դնում է ներքև, իսկ ջրածնով լի սրվակը (ջրածինը թեթև է անխաթթու գազից 22 անգամ)—վերևում, և գործիքը մի քանի ժամով թողնում է միանգամայն հանգիստ վիճակում: Յերբ նա հետագոտեց սրվակների զազերը, պարզվեց, վոր յերկու ամանումն էլ գազերի բաղադրությունը միանգամայն նույնն է, ջրածինը խառնելով անխաթթու գազին՝ ստացվել է համասեռ խառնուրդ: Դիճուզիայի այս յերևույթը կարելի չէ բացատրել միայն մոլեկուլների օարժմանով:

Գազային նյութերի դիճուզիան մենք նկատում ենք ամեն քայլափոխին՝ մեր առոյթա կյանքում: Բոլորին շատ լավ հայտնի չէ, թե ինչպես արագությունը տարածվում է կարբոնիկայի, բենզինի, նավթալինի, դուխու հոտը: Բավական է, վոր մի տեղ հոտավետ նյութ թափվի, ամբողջ սենյակը ցվում է հոտով: Իսկ ինչ է հոտը: Հոտը նյութի հատկությունն է. նյութի մոլեկուլ-

ներք շարժվում են և ընկնելով մեր քթի լորձաթաղանթի վրա՝ առաջ են բերում վորոշ զգայնություն:

Այս միայն գազային նյութերի մոլեկուլներն են շարժվում, այլ շարժվում են նաև հեղուկ և կարծր նյութերի մոլեկուլները և իրար խառնվում:

Յեթն գլանի մեջ շուր անենք և նրա վրա՝ զուգուրթյամբ՝ ավելի թեթև սպիրտ, և գլանը թողնենք հանդիստ վիճակում, սկզբում մենք պարզ կերպով կնկատենք հեղուկի յերկու առանձին շերտ, իսկ հետո սահմանն աստիճանաբար ավելի և ավելի աննկատելի կդառնա, և վերջապես կստացվի միանգամայն համասեռ խառնուրդ:

Յեթն ապակյա բարձր գլանի հատակին վորեն կարծր նյութ բյուրեղներ դնենք, որինակ, պղնձաբջապի բյուրեղներ, և գլանի մեջ զուգուրթյամբ շուր անենք ու գլանը հանդիստ վիճակում թողնենք, վորոշ ժամանակից հետո մենք բյուրեղների վերևում գունավոր թանձր հեղուկի շերտ կնկատենք, վորը դեպի վեր աստիճանաբար պարզում է, իսկ նրա վրա՝ անգույն շուր: Աստիճանաբար, թեև շատ դանդաղ, լուծույթի գունավոր շերտը մեծանում է, և վերջապես ամբողջ լուծույթը դառնում է համասեռ:

Այդ բոլոր դիտողություններն, առաջին հայացքից թվում է, թե հակասում են ձողողական որհնքին — աղբրի ավելի ծանր լուծույթները, ծանր գազերը բարձրանում են դեպի վեր, ջրածնի և այլ նյութերի ավելի թեթև մոլեկուլներն իջնում են դեպի դեմ:

Այդ հակասությունները կարելի չե բացատրել միայն այն բանով, վոր շուրը, աղբրը, գազերը և այլն բաղկացած են առանձին մասնիկներից — մոլեկուլներից, վորոնք իրենց սեփական օտարժուգում ունեն: Նման շարժում կարելի չե յերևան հանել նույնիսկ կարծր նյութերի մոլեկուլների նկատմամբ: Յեթն վերցնենք պղնձե թիթեղ և այն պատենք ցինկի թիթեղով, ուժեղ սեղմենք ու մետաղների հալման ջերմաստիճանից ցած՝ յերկար ժամանակ տաքացնենք, ապա թիթեղները կզոդվին իրար հետ, և ցինկի ու պղնձի՝ իրար հետ շփվելու սահմանում առաջ կգա համաձուլվածք — ցինկի մոլեկուլները թափանցում են պղնձի մոլեկուլների մեջ, և ընդհակառակը: Այս բանից այժմ ոգտվում են տեխնիկայում. մետաղներ պատելու համար նրանց ձուլել են ուրիշ մետաղների հետ: Պատվող առարկան տեղավորում են ցինկի կամ

ալյումինիումի վորոշ պարունակող՝ պինդ փակված ամանի մեջ, և մետաղների հալման ջերմաստիճանից ցածր ջերմաստիճանում տաքացնում: Փորոշ վիճակում վերցրած մետաղի ատոմներն աստիճանաբար մտնելով ծածկվող մետաղի մակերեսը՝ նրա հետ առաջ են բերում մի ամուր համաձուլվածք:

Այսպիսով ֆիզիկական յերևույթների վրա կատարած մի շարք դիտողությունները հաստատում են նյութերի մոլեկուլային կառուցվածքը:

Քիմիական սեպիցիաններն, առանց ատոմների տեղափոխման, այսինքն առանց նյութերը կաղմող մոլեկուլների ասումների օտարժուգում պատկերացնել հնարավոր չե: Ատոմները նույնպես գտնվում են անընդհատ շարժման մեջ:

Այսպիսով ատոմա-մոլեկուլային ուսմունքը բացատրում է ֆիզիկական ու քիմիական մի շարք յերևույթներ: Նա հասկանալի չե դարձնում և քիմիական այն որհնքները, վորոնց մեջք ծանոթացել ենք առաջ:

Նյութերի կոռի պակասումում օրեմֆի եյությունն այն է, վոր սեպիցիային մասնակցող նյութերի կշիռը հավասար է սեպիցիայից հետո տաղացած նյութերի կշիռին: Ատոմիպատական պատկերացման տեսակետից, քիմիական բոլոր յերևույթների ժամակերպման տեսակետից, քիմիական բոլոր յերևույթների ժամանակ, տվյալ նյութերի բաղադրություն մեջ յեղած մոլեկուլների ատոմները նոր մոլեկուլներ են առաջացնում: Ինչքան վոր ատոմներ կային, այնքան էլ մնում են, բայց այլ խմբավորմամբ: Բայց վորովհետև ատոմներն անփոփոխ են, այդ պատճառով էլ նոր նյութերը պետք է կշռեն այնքան, ինչքան վոր կշռում էին սկզբում վերցրած նյութերը:

Բաղադրության հաստատումում օրեմֆն այն է, վոր տվյալ միացություն բաղադրությունն անփոփոխ է և հարակալուն՝ անկախ ստացման յեղանակներից: Այդ մենք կարող ենք հասկանալ այսպես. յեթե, որինակ, պղնձի սե օքսիդի բաղադրություն մեջ մտնում են մի ատոմ պղինձ և մի ատոմ թթվածին, այդ դեպքում թթվածնի և պղնձի կշիռների միջև հարաբերությունը պետք է լինի անփոփոխ և հաստատու, ինչ յեղանակով էլ վոր այդ նյութերն ստացվեն: Իսկ յերբ մի ատոմ թթվածնի հետ միանում է վոչ թե մի, այլ յերկու ատոմ պղինձ, այդ արդեն բոլորովին նոր նյութ կլինի — պղնձի կարմիր օքսիդ:

Պարզ նյութ, բարդ նյութ, օտար հասկացողությունները նույն-

պես նոր շուսարանութունն են ստանում առանձն-մտելուլային ուսմունքի տեսակետից:

Պարզ նյութերը կազմված են միատեսակ ատոմներից, բարդ նյութերը—տարբեր ատոմներից:

Գիմիական ուսուցիչների ժամանակ պարզ և բարդ նյութերի ատոմները փոխարկվում են նոր նյութերի մոլեկուլներին: Սակայն նոր մոլեկուլների առաջացումը չի կարելի գիտել միայն վորպես ատոմների տեղափոխութունն մի մոլեկուլից մյուսը, իսկ մոլեկուլը—վորպես նյութ կազմող ատոմների մի գումար: Մոլեկուլ կազմող ատոմներն այնքան ուժեղ կերպով են ազդում միմյանց վրա, վոր նոր մոլեկուլներից կազմված նյութի մեջ մենք արդեն նախկին նյութերի հատկութունները չենք տեսնում: Մտքիկոքսիդի մեջ մենք վոչ սնդիկի և վոչ էլ թթվածնի հատկութուններն ենք տեսնում: Մտքիկոքսիդը (նոր վորակ է) բոլորովին նոր նյութ է նոր հատկութուններով:

Մատնանշելով այդ, մենք ասում ենք, վոր սնդիկոքսիդի մեջ սնդիկը լինում է վոչ թե վորպես պարզ նյութ, այլ վորպես տարր (ելեմենտ):

Առանձն-մոլեկուլային ուսմունքի տեսակետից՝ օտբեմ ընդհանրապես միատեսակ օտբեի բոլոր ատոմներն են, ատոմների ամբողջություն: Այդ ատոմները միմյանց հետ կարող են կազմել պարզ նյութ, իսկ այլ տեսակի ատոմների հետ—բարդ նյութ:


Հետաքրքիր է հիշել, վոր ատոմների վերաբերյալ ուսմունքը, վոր ժամանակակից քիմիայի զարգացման հիմքն է կազմում, շատ յերկար ժամանակ, մեր ժամանակաշրջանի առաջին իսկ զարբերից սկսած մինչև XVII դարը, հալածանքի յենթարկվեց քրիստոնեական յեկեղեցու կողմից, վորպես կրոնին հակասող ուսմունք: Այսպես, որինակ, 1630 թ. յեկեղեցականների պնդումով փարիզյան դարլամենտը հրատարակեց մի դեկրետ, վորն արգելում է ատոմային տեսությամբ զբաղվելը, սպառնալով մահապատժի յենթարկել այդ տեսությամբ զբաղվողներին: Այդ դանդաղեցրեց, բայց չփասեցրեց գիտության մեջ ահագին դեր խաղացող ատոմ-մոլեկուլային ուսմունքի զարգացումը:

Յ. Յարրերի ալլոտրոպ ձեզափոխությունները. «Պարզ նյութ» և «տարր» հասկացություններն ավելի լավ յուրացնելու համար հարկավոր է ծանոթանալ այն փոփոխութուններին, վոր կա-

տարվում է թթվածնի հետ, յերբ նրա միջով ելեկտրական կայծեր են անցկացնում:

Ո՛վ կանգնած է յեղել ախտաող ելեկտրական մեքենայի մոտ, նա գիտե, վոր յերբ կայծերն այս ու այն կողմն են թաշում այսինքն ողի միջով պարզումներ են կատարվում, մեքենայի շուրջը թարմության յուրահատուկ հոտ է զգացվում, վոր հետք ավելի սուր է դառնում: Այդ յերևույթի ուսումնասիրությունը պարզել է, վոր հոտի պատճառը ողի թթվածնի կրամ փոփոխության հետևանքն է:

59-րդ նկարում պատկերված է մի գործիք, վորի ողնությամբ կարելի յի ծանոթանալ թթվածնի փոփոխութուններին: Գործիքը բաղկացած է ապակյա լայն խողովակից. խողովակի մեջ դրված է a լարը, իսկ դրաից վաթաթված է b լարով: Լարերը միացած են ելեկտրական մեքենայի



Նկ. 59. Հասարակ ողնատար.

կամ այլ գործիքի հետ, վոր տալիս է այնպիսի լարվածութուն, վոր պարպումն անցնի թե ապակու և թե ձախ կողմից խողովակի միջով բաց թողած թթվածնի միջով:

Գաղատար ճ խողովակի միջով դուրս յեկող թթվածինը շուտով ձեռք է բերում բնորոշ հոտ: Յեթե թթվածինն անցկացնենք ջրի մեջ, ինչպես այդ ցույց է աված նկարում, առաջացող ձևափոխված թթվածինը կլուծվի ջրի մեջ:

Փոփոխված թթվածնի ավելի մանրամասն ուսումնասիրությունը պարզել է, վոր վոչ միայն հոտն է փոխվում, այլև թըթվածնի բոլոր հատկութունները: Բոլորովին նոր նյութ է ստացվում: Մաքուր վիճակում այդ նոր նյութն ստանալը զովար է, վում: Մաքուր վիճակում այդ նոր նյութն ստանալը զովար է, բայց հնարավոր է: Այդ զազը թթվածնից ծանր է, ունի կապրայց հնարավոր է: Այդ զազը թթվածնից ծանր է, ունի կապրայց տավուն գույն. ջրում ավելի լավ է լուծվում, քան թթվածինը: Այդ զազն ունի սուր հոտ. ներշնչելիս ուժեղ չափով զրդում է

1) Որինակ՝ արանսփորմատոր կամ կոծ, մինչև մե քանի հազար վոլտ լարվածությամբ: Այդ գործիքները կառուցվածքը և աշխատանքն ուսումնասիրում են ֆիզիկայի մեջ:

թիւ և կոկորդի լորձաթաղանթները, իսկ մեծ քանակութեամբ
ներշնչելն առաջ և բերում թունափորում:

Թթվածնի այդ ձևափոխութեանը կոչվում է ռզոն (հունարեն
բառ է, վոր նշանակում է «հոտափառ»):

Ողունը նույն սեպտաներն է տալիս, ինչ վոր թթվածինը,
բայց թթվածնից ավելի յիտանդուն կերպով և որսիզացնում:
Յեթե ողոն պարունակող թթվածինն անցկացնենք ինդիգոյի
կապույտ լուծույթի կամ լակմուսի լուծույթի մեջ, այն ժամա-
նակ ներկն աստիճանաբար որսիզանալով՝ գունաթափվում է:
Ռեդինե կողովակը, վորի միջով անցնում և ողոն, վորոշ ժամա-
նակից հետո սկսում է քայքայվել և վերջիվերջով մաս-մաս է
լինում: Ողունից նույնպես գործոն կերպով են որսիզանում և
ուրիշ շատ նյութեր:

Ողունը, յեթե այն թողնենք վորոշ ժամանակ, աստիճա-
նաբար փոխարկվում է սովորական թթվածնի: Այդ հակառակ
փոխարկումը կարելի չէ արագացնել տաքացնելով:

Այնպիսի յերևույթի, յերբ պարզ նյութն ուրիշ նյութերի
հետ սեպտայի մեջ շմտնելով՝ փոխարկվում է նոր վորակի,
նոր նյութի՝ նոր հատկութուններով—մենք մինչև այժմ չեյինք
պատահել: Բանն ինչ է ավելի ղեպքում: Ի՞նչ կերպ կարող ենք
բացատրել այդ փոխարկումը: Բացատրութեանը մենք գտնում
ենք ատոմա-մոլեկուլային ուսմունքի մեջ: Կարելի չէ այսպես
ցել (այսպես ցըր մենք չենք բերի այստեղ), վոր թթվածնի ատ-
ոմները պարզ նյութ թթվածինն առաջացնելու համար, կազ-
մում են մոլեկուլներ, վորոնք բաղկացած են յերկու ատոմ թրթ-
վածնից, իսկ ողոն առաջացնելու ժամանակ, վորը նույնպես
պարզ նյութ է հանդիսանում, կազմում են մոլեկուլներ, վորոնք
կազմված են յերեք ատոմ թթվածնից:

Թթվածնի մոլեկուլներից ողոնի մոլեկուլներ առաջանալու
պըրոցեսը կարելի չէ պատկերացնել հետևյալ սխեմայով՝



Այսպիսով պարզ նյութից նոր վորակ առաջանալը, այսինքն
մի նոր պարզ նյութ նոր հատկութուններով, կապված է մո-
լեկուլներ կազմելու ժամանակ իրար հետ միացող ատոմների
բաժանելի փոփոխութեան հետ:

Այն ղեպքում, յերբ մոլեկուլի մեջ ատոմները միացած են
յերկուական, նրանց փոխադարձ ազդեցութունը մեկը մյուսի
վրա այլ է, քան այն ժամանակ, յերբ նրանք միացած են յերե-
քական ատոմով:

Ողունը թթվածնի փոխարկվելիս, ողոնի մոլեկուլները արոն-
վում են ատանձին ատոմների, վորոնք հետո նոր մոլեկուլներ
են առաջացնում: Նույն բանն է կատարվում նաև թթվածնի
մոլեկուլների վրա ելեկտրական պարպումներով ներգործելիս:
Մոլեկուլները արոնվում են ատոմների, վորոնք հետո մասամբ
ողոնի մոլեկուլներ են առաջացնում, մասամբ էլ դարձյալ թրթ-
վածնի մոլեկուլներ:

Ողոնի՝ թթվածնի ատանձին ատոմների արոնվելու հետ կապ-
ված է այն հանդամունքը վոր ողոնն ավելի յիտանդուն կերպով
է որսիզացնում, քան սովորական թթվածինը: Ակներև է, վոր
ատանձին ատոմները, վոր ղեռ չեն միացել մոլեկուլ կազմելու
համար, անհամեմատ ավելի յիտանդուն են սեպտիքում, քան
մոլեկուլները:

Վորպես ուժեղ որսիզացնող, ողունը շատ լավ ախտահանիչ
միջոց է հանդիսանում: Նա սպանում է բակտերիաներին և կի-
բառվում է ողն ու ջուրն անվտանգ դարձնելու համար:

Ամպրոպից հետո ողի թաքմ հոտը, այսինքն մթնոլորտի
ելեկտրական պարպումներից հետո, բացատրվում է ողում ողոն
առաջանալով:

Յերբ տարբը յերկու կամ մի բանի տարբեր պարզ նյութեք է
առաջացնում, վորոնք տարբերվում են իրենց հատկութուն-
ներով, ապա նույն տարբի այդ ձևափոխութեանները կոչվում
են ալլոտրոպ ձևափոխութեաններ, իսկ ինքը յերևույթը՝ ալլո-
տրոպիա: Բացի թթվածնից, ալլոտրոպ ձևափոխութեաններ կա-
րող են առաջացնել և ուրիշ շատ նյութեր: Այդ ձևափոխու-
թեաններին մենք ղեռ կպատահենք:

Վերն ասածներից պարզ է, թե ինչու չի կարելի ռարզ
նյութերը հատկացողութեանը նու նացնել «տարբը» հատկացողու-
թեան հետ: Պղնձորսիդ մենք կարող ենք ստանալ պղնձի վրա
թե թթվածնով և թե ողոնով ներգործելով, իսկ այդ որսիզի բա-
ղադրութեան մեջ մտնում է վսշ թե թթվածինը կամ ողունը վոր-
պես պարզ նյութ, այլ թթվածին տարբը, կամ այն ատոմները,
վորոնք առաջացնում են և՛ թթվածին և՛ ողոն:

4. Ասումի կօթուք յեւ ասումական կօթուք: Մենք այժմ կարող ենք բնորոշել Վանիկուլը և Շատում հասկացողութիւնները:

Մոլեկուլները ամենափոքր ատանձին մասնիկներ են, վորոնցից կազմվում են նյութերը:

Ատոմը—դա ավելի տարրի ամենափոքր մասնիկն է, վորը կարող է գոյութիւն ունենալ միացութիւնների և պարզ նյութերի մոլեկուլների մեջ:

Ատոմները և մոլեկուլները մենք տեսնել չենք կարող. վորովհետև անսահման վառ են: Վորոշ պատկերացում այն մասին, թե ինչքան փոքր են մոլեկուլները, կարելի չէ ստանալ հետեյալ փորձի հիման վրա:

Յեթն կշռենք 0,015 գր կալիումպերմանգանատ (մի քանի բոյ բեգներ) և լուծենք 1 լիտր ջրի մեջ, ջուրը վարդագույն գունավորում կընդունի: Այդ լուծույթի մի խորանարդ սանտիմետրը կպարունակի 0,015 : 1000 = 0,000015 գր աղ: Մի կաթիլը կպարունակի մտավորապես 20 անգամ քիչ, այսինքն 0,000015 : 20 = 0,00000075 գր աղ: Բայց մի կաթիլն ամբողջութեամբ գունավորված է աղով, հետևապես նրա մեջ գեռ շատ մոլեկուլներ են գտնվում: Այժմ կարելի չէ պատկերացնել, թե ինչքան պետք է լինի յուրաքանչյուր մոլեկուլի կշիւր:

Խինինի մի փոքրիկ հատիկը մի քանի լիտր ջրին դառը համ է հաղորդում: Մուսկուսի հոտը կարող է մի հսկայական զանիւր լցնել, իսկ այդ կորուստն այնքան չնչին է, վոր ամենազգայուն կշիւրներն անգամ նրա կշիւ կորուստը ցույց չեն տալիս:

Ապակու վրա կարելի չէ իր փայլով նկատելի՝ 0,000 000 005 սմ հաստութեան վոսկու խավ դնել: Պարզ է, վոր վոսկու ատոմների տրամագիծը զքանից շատ ավելի փոքր պետք է լինի:

Ժամանակակից ֆիզիկայի տվյալները, վորոնց վրա մենք այստեղ կանգ առնել չենք կարող (այդ տվյալներն ուսումնասիրում են բարձրագույն դպրոցում), հնարավորութիւն են տալիս վորոշելու գանազան տարրերի ատոմների կօթուք. իհարկե՛ վոշ թե առնի՞ջպակս այդ ատոմները կշիւրով, այլ կողմնակի ճանապարհով:

Պարզվում է, վոր ջրածնի մի ատոմի կշիւրը զբաղեցրած կազասար է 0,000,000,000,000,000,000,000,001 663 գրամի կամ 0, (0) 17 1663: Թթվածնի մի ատոմի կշիւրը հավասար է 0, (0) 22 26608-ի է այլն:

Մեր յերեակայութիւնը միանգամայն անընդունակ է այդպիսի փոքրիկ մեծութիւններ պատկերացնելու, ճիշտ այնպես,

ինչպես մենք սեալ պատկերացում չունենք շատ խոշոր մեծութիւնների մասին:

Եւ զի ո՛ր Փորձեցեք աչքի չափով իմանալ, թե ինչ հաստութիւն կունենա 2 միլիոն եջ (1 միլիոն թերթ) ունեցող գիրքը և ապա համարելով վորեք գրքից 200 եջ, չափեցեք ամառամետրերով և համեմատեցեք այն մեծութեան հետ. վոր դուք «չքաչափով իմացաք» Ատոմային կշիւրը— դա մի թիվ է, վորը ցույց է տալիս, թե ավելի տարրի ատոմը քանի անգամ ծանր է ջրածնի մի ատոմից:

Պարզ է, վոր պրակտիկայում այժման փոքր թվերից ոչ ուրեք շատ դժվար կլինեն: Ուստի, թեև մենք այժմ դիտենք եւ առաջին ատոմները կշիւրները, բայց և այնպես շարունակում ենք ոգտվել դիտութեան մեջ մտցված հասկացողութեամբ՝ հարաբերական ատոմային կշիւրների մասին:

Ասումական կօթուք— դա այն թիվն է, վոր ցույց է տալիս, թե սվյալ տարրի ատոմը բանի անգամ է ծանր ջրածնի մի ատոմից:

Դալտոնի դադափարները տարրերի ատոմական կշիւրները սահմանելու հնարավորութիւնների մասին՝ հետագայում լայնացան ու զարգացան:

Դալտոնի մտավոր և վոշ ճիշտ ասումական կօթուք, զիտնականները ամբողջ մի սերնդի յերկարատե աշխատանքներից հետո, այժմ փոխարինված են շատ ճիշտ վորոշած ատոմական կշիւրներով: Այսպես, ի միջի այլոց պարզվեց, վոր թթվածնի ատոմական կշիւրը պետք է ընդունել վոշ թե 8, այլ 16 և վոր ջրի բաղադրութեան մեջ վոշ թե մի ատոմ ջրածնի կա, այլ յերկու:

Ոգտվելով Դալտոնի նշաններից, ջրի բաղադրութիւնը

մենք պետք է արտահայտենք վոշ թե O_2 , այլ H_2O

այսինքն՝ յերկու կշումաս (2 ատոմ) ջրածնին՝ 16 կշումաս (1 ատոմ) թթվածնին: Այստեղ 1 : 8 հարաբերութիւնը մնում է նույնը, ինչ հարաբերութիւն վոր գտել եր Դեյ-Լյուսակը, բայց թթվածնի ատոմական կշիւրը վոշ թե 8, այլ 16 է:

Անշրտեշտ է նշել, վոր արդի ատոմական կշիւրներն ավելի հարմար յեղավ հաշվել, ջրածնի ատոմական կշիւրն ընդունելով վոշ թե 1, այլ 1,008: Այդ դեպքում թթվածնի ատոմական կշիւրը կլինի 16 և վոշ թե 15,88, ինչպես այդ ստացվում եր, յերջ ջրածնի ատոմական կշիւրն ընդունում եյին 1: Հիշենք, վոր ջրի անալիզը և սինթեզը ջրածնի և թթվածնի կշիւրների հետեյալ հարաբերութիւնն է տալիս՝ 1 : 7,94 (կամ 1,008 : 8) և վոշ թե ճիշտ 1 : 8, ինչպես այդ մենք պարզութեան համար ընդունել ենք:

Այն հարցը, թե ինչպես են հաստատովել ատոմների՝ ժամանակակից ճիշտ կշիռները, ինչպես են վորոշվել ատոմների և մոլեկուլների չափերը և ինչ կշռադասութունների հիման վրա կարելի չե պատկերացնել ատոմների կառուցվածքը—չափազանց հետաքրքիր, բայց շատ բարդ ու դժվարին ինդիւրներ են, և նրանց միանգամայն գիտակցաբար կարելի չե ծանոթանալ միայն բարձրագույն դպրոցում: Սակայն այդ բոլորովին չի խանդարի մեզ ուղովել ատոմների կշիռներով ֆիլիսոֆիան ֆորմուլների ստեղծումը բարդ նյութերի կշռային բաղադրութունն արտահայտելու համար:

5. Քիմիական Ֆորմուլներ. Իսլաոնի նշանների աղյուսակից յերևում է, վոր մի քանի մետաղների համար Իսլաոնը, փոխանակ նոր, տարբեր շրջաններ մտածելու, շրջանների մեջ սկսեց տառեր դնել: Դրանք մետաղների անդլերեն անվան առաջին տառերն են 1—iron (ալրըն)—յերկաթ, C—copper (կոպպեր)—պղինձ և այլն:

Հետագայում Իսլաոնի այդ միաքն ուղտագործեց շվեդացի գիտնական Բերցելիուսը (1779—1848) — ատոմները նշանակելու համար, բայց ցառեռավ միայն, առանց շրջանների: Բերցելիուսի ժամանակներից սկսած՝ մենք տառերի ատոմները նշանակում ենք նրանց անվան լատիներեն սկզբնատառերով, վոր վերջված են լատիներեն և հունարեն յեղուներից: Հայտնի էլուծ բերված են քիմիական նշանները կամ սխեմաներ և կարևոր տարրերի ատոմական կշիռները: (Ատոմական կշիռները արված են կլորացված ամբողջական թվերով, առանց տասերորդականների և հարյուրերորդանների, ճշգրիտ ատոմական կշիռները արված են զրբի վերջի աղյուսակում): Յեթն մի քանի տարրերի անունները միևնույն տառով են սկսվում, այն ղեպքում սկզբնատառի կողքին դրվում է նաև այդ անվան հետևյալ տառերից մեկը:

Բերցելիուսի առաջարկութամբ ֆիլիսոֆիան ֆորմուլները այնպես չեն գրում, ինչպես այդ Իսլաոնն եր անում, այն է՝ քիմիական նշանը չեն կրկնում այնքան անգամ, վորքան ատոմ կա ավյալ բարդ նյութի մոլեկուլի մեջ, այլ ատոմների թիվը նշանակում են տարրի նշանի աջ կողմում՝ ներքեը փոքրիկ թվանշան գրելով (1 թվանշանը չի գրվում): Այսպես, ջրի բա-

ղադրութունը նշանակում են վոր թե HHO, այլ H₂O: Այդ ֆորմուլը կարգում են այսպես հառ—յերկառ—ո¹),

Ջրի ֆորմուլը պետք է հասկանալ այսպես. ջրի մոլեկուլի մեջ մտնում են 2 ատոմ ջրածին և մի ատոմ թթվածին, այսինքն ջրի մեջ կա 2 կշռամաս ջրածին և 16 կշռամաս թթվածին:

Ծծմբաթթվի ֆորմուլը՝ H₂SO₄ կարգում են հաշ-յերկառ-ես-ս չորս և հասկանում են այսպես. ծծմբաթթվի բաղադրութան մեջ մտնում են՝ յերկու կշռամաս ջրածին, 32 կշռամաս ծծումբ և 64 (այսինքն 16×4) կշռամաս թթվածին: Վորպես առանձին տառեր ֆորմուլների մեջ ընդունված է արտասանել միայն հետևյալ կարևոր տարրերի նշանները. բորը՝ B (բե), ածխածինը՝ C (ցե), ջրածինը՝ H (հաշ), թթվածինը՝ O (ո), ֆոսֆորը՝ P (պե) և ծծումբը՝ S (ես): Մնացած բոլոր նշանները սովորաբար արտասանվում են ինչպես տարրի լատինական անունը: Յերկաթ՝ Fe՝ ֆերում, պղինձ՝ Cu—կուպրում, սնդիկ՝ Hg—հիդրարգիրում:

Ահա ֆորմուլների արտասանման մի քանի որինակներ ևս:
Fe₂O₃ (յերկաթօքսիդ) — ֆերում-յերկառ-ո-յերեք:
HCl (աղաթթու) — հաշ-քլոր:
NaCl (սեղանի աղ) — նատրիում-քլոր:

Ենդիւր. Աղալիւղ հաջորդ եջում բերված աղյուսակից, կարգաբեք ստորե բերված ֆորմուլները ու ղրեցեք այդ ֆորմուլների արտասանութունը և քանակական նշանակութունը:

1. Պոտաշ K₂CO₃:
2. Սելիտրա KNO₃:
3. Պղնձարջասպ՝ CuSO₄:
4. Սոդա՝ Na₂CO₃:
5. Գիպս՝ CaSO₄:
6. Լյապիս՝ AgNO₃:
7. Սուլեմա՝ HgCl₂:
8. Մանգանդիտքսիդ՝ MnO₂:
9. Դառն աղ՝ MgSO₄:
10. Բերտոլետյան աղ՝ KClO₃:

1) Քիմիական ֆորմուլներում լատինական տառերն արտասանում են լատիներեն, բայց H տառը (ջրածին), սովորաբար արտասանում են ֆրանսեզերեն, թեև այդ ճիշտ չե (H—ը լատիներեն կլինի հա, ֆրանսերեն՝ հաշ):

Ամենակարեւոր արրերի բիմիական Եւանճելիքի յեւ աստուկան
Կեիոցերի

Ա Ղ Յ Ո Ի Ս Ա Լ

Քիմ. նշան	Ատմկն կշիւ	Հայերեն անունները	Լատինական անունները	Լատինական անունների ար- աստուկաները	Քիմ. նշանների արաստուկաները Ֆորմուլի մեջ
Ag	103	Արծաթ	Argentum	Արդենտում	Արդենտում
Al	27	Ալյումինիում	Aluminium	Ալյումինիում	Ալյումին ոււ
Ba	137	Բարիում	Barium	Բարիում	Բարիում
Bi	209	Բիսմութ	Bismuthum	Բիսմութում	Բիսմութ
C	12	Ածխածին	Carboneum	Կարբոնիում	Յե
Ca	40	Կալցիում	Calcium	Կալցիում	Կալցիում
Cl	35,5	Քլոր	Chlorum	Քլորում	Քլոր
Cu	64	Պղինձ	Cuprum	Կոպրում	Կոպրում
Fe	56	Յերկաթ	Ferrum	Ֆերրում	Ֆերրում
H	1	Հրածին	Hydrogenium	Հիդրոգենիում	Հաջ
Hg	200	Մըղեկ	Hydrargyrum	Հիդրարգիրում	Հիդրարգիրում
K	39	Կալիում	Kalium	Կալիում	Կալիում
Mg	24	Մագնեզիում	Magnesium	Մագնեզիում	Մագնեզիում
Mn	55	Մանգան	Manganum	Մանգանում	Մանգան
N	14	Ազոտ	Nitrogenium	Նիտրոգենիում	Նի
Na	23	Նատրիում	Natrium	Նատրիում	Նատրիում
O	16	Թթվածին	Oxygenium	Ոքսիգենիում	Ո
P	31	Փոսֆոր	Phosphorus	Փոսֆորում	Պե
Pb	207	Կապար	Plumbum	Պլումբում	Պլումբում
S	32	Ծծուկ	Sulfur	Սուլֆուր	Սս
Si	28	Սիլիցիում	Silicium	Սիլիցիում	Սիլիցիում (Սի)
Sn	119	Սնառ	Stannum	Ստանում	Ստանում (անագ)
Zn	65	Ցինկ	Zincum	Ցինկում	Ցինկ

Յ. Ի՞նչպես է կազմվում բիմիական Ֆորմուլը. Վորովհետև յուրաքանչյուր բարդ նյութ բաղկացած է մոլեկուլից, իսկ ամեն մի մոլեկուլ բաղկացած է վորոշ թվով ատոմներից, ուրեմն ամեն մի բարդ նյութի բաղադրությունը կարելի չէ արտահայտել բիմիական ֆորմուլներով: Իսկ ինչպես են այդ անում: Բիմիա-

կան անալիզը մեզ տալիս է միայն տարրերի կշռային և վոշ թե մոլեկուլի ատոմների քանակությունը: Իսկ ըստ կշռային բաղադրություն ինչպես պետք է դանել բիմիական ֆորմուլը: Այդ հարցը քննարկենք սրինակով:

Ունենք վորեւ զազ: Վորակական անալիզը ցույց է տալիս, վոր այդ զազը բաղկացած է ածխածնից և թթվածնից. քանակական անալիզը ցույց է տալիս, վոր այդ զազի մեջ 3 կշռամաս ածխածնին ընկնում է 8 կշռամաս թթվածին: Այդ զազի մոլեկուլը քանի՞ ատոմ ածխածնից և քանի՞ ատոմ թթվածնից է բաղկացած:

Յենթադրենք, վոր այդ զազի մոլեկուլի մեջ կա 1 ատոմ ածխածին: Ածխածնի 1 ատոմը 12 կշռամաս ածխածին է. 12 կշռամաս ածխածնին քանի՞ կշռամաս թթվածին կընկնի, յեթե 3 կշռամասին ընկնում է 8 կշռամաս:

Դատում ենք այսպես. յեթե 3 մաս ածխածնին ընկնում է 8 մաս թթվածին, այդ դեպքում մի մասին կընկնի 3 անգամ պակաս. այն է $\frac{8}{3}$, իսկ 12 մասին՝ 12 անգամ ավելի, այն է՝ $\frac{8 \times 12}{3}$

մաս: Կրճատելով՝ ստանում ենք $8 \times 4 = 32$ մաս: Իսկ այդ քանի՞ ատոմ է կազմում: Թթվածնի ատոմական կշիւրը 16 է, հետևապես կլինի $32 : 16 = 2$ ատոմ: Նշանակում է՝ մեր վերջրած զազի մոլեկուլի մեջ մտնում են 1 ատոմ ածխածին և 2 ատոմ թթվածին, և նրա ֆորմուլը կլինի՝ CO₂: Ածխաթթու զազն է այդ:

Իայց մենք միանգամայն կամայորեն յենթադրեցինք, վոր զազի մոլեկուլի մեջ պարունակվում է 1 ատոմ ածխածին: Իսկ ինչ՞նչ չենթադրել, վոր նրա մեջ կա մի ատոմ թթվածին: Այդ դեպքում այլ հետևանք չի ստացվի արդյոք. փորձենք այդպիսի յենթադրություն անել: Այդ դեպքում մենք պետք է դատենք այսպես. 8 կշռամաս թթվածնին ընկնում է 3 կշռամաս ածխածին: Դանի կշռամաս ածխածին կընկնի 1 ատոմ թթվածնին, 16 կշռամասին: Կընկնի՝ $\frac{3 \times 16}{8} = 6$ կշռամաս ածխածին: Վորով-

հետև ածխածնի ատոմական կշիւրը 12 չէ, այդ կազմում է ածխածնի ատոմի $\frac{1}{2}$ -ը, վոր ընկնում է 1 ատոմ թթվածնին: Իայց

$\frac{1}{2}$ ատամ չի կարող լինել: Ուրեմն 1 ատամին պետք է ընկնի

փոչ թե $\frac{1}{2}$ ատամ, այլ 1 ատամին՝ 2 ատամ: Այլ խոսքով՝ այդ

պես դատելով, ստացվում է CO_2 ֆորմուլը: Նույն բանը կստացվի, եթե մենք յենթադրենք, Վոր մեր գազի մոլեկուլի մեջ կա 2 ատամ ածխածին: Մենք կստանանք 24:64 հարաբերությունը, վերին համապատասխանում են 2 ատամ ածխածինը և 4 ատամ թթվածինը, իսկ ֆորմուլի համար մենք ընդունում ենք պարզ հարաբերություն, այն է 1:2 և փոչ թե 2:4, այսինքն ստանում ենք դարձյալ CO_2 :

Ինմիական ֆորմուլները զտնելու հնարավորությունը հիմնված է այն բանի վրա, վոր վորեւե բարդ նյութի մեջ մտնող ատրոբերի հարաբերությունը, ինչ քանակությամբ էլ վոր նա լինի, պետք է լինի այնպես, ինչպես մի մոլեկուլի մեջ: Ածխաթթու գազի մեջ ածխածնի հարաբերությունը թթվածնին՝ կլինի 12:32, իսկ անալիզը տալիս է 3:8 հարաբերություն: Պարզ է, վոր այդ հարաբերությունները համասար են 12:32=3:8: Այսպիսով ֆորմուլն ըստ կշռային բաղադրություն զտնելու խնդիրը զուտ թվաբանական խնդիր է:

Ինմիական անալիզի հետեանքները սովորաբար արտահայտում են տոկոսներով: Այսպես, որինակի, մագնեզիումի այրումից ստացվող սպիտակ վոշին՝ մագնեզիում որսիզը պարունակում է 60% մագնեզիում և 40% թթվածին, այսինքն մագնեզիումի և թթվածնի կշռային քանակությունները լինում են 60:40 հարաբերությամբ:

Խ Ն Դ Ի Բ Ն Ե Բ


Գտեք հետևյալ նյութերի ֆորմուլները:

1. Մագնեզիում որսիզի, վոր բաղադրությունը բերված է վերևում:
2. Ճահնային գազի, վոր 75% ածխածին և 25% ջրածին է պարունակում:
3. Ծծմբի թթվածնային միացությունների, վորոնցից մեկը պարունակում է 50% ծծումբ, 50% թթվածին, իսկ մյուսը՝ 40% ծծումբ և 60% թթվածին:
4. Մանգան հանքի, վոր պարունակում է 63,20% մանգան և 36,80% թթվածին:
5. Աղտորսիզի, վոր պարունակում է 25,93% աղտա և 74,07% թթվածին:
6. Պոտաշի, վոր պարունակում է 56,52% կալիում, 8,71% ածխածին և 34,78% թթվածին:

7. Այն միացություն, վոր պարունակում է 2,04% ջրածին, 32,65% ծծումբ և 65,31% թթվածին:

8. Զիլիական սելիտրա, վորը պարունակում է 27,20% նատրիում, 16,50% աղտա և 56,30% թթվածին:

7. Մոլեկուլյար Փորմուլներ. Մեր քննարկած բոլոր որինակների ու խնդիրների մեջ ատոմների և մոլեկուլների միջև մենք պարզ հարաբերություններ էլինք տեսնում: Ածխաթթու գազի ֆորմուլը մենք բնդունեցինք պարզ ձևով՝ CO_2 , և փոչ թե C_2O_4 կամ C_2O_6 , վորոնք նույնպես համապատասխանում են նյութի կշռային բաղադրության: Մեր բոլոր քննարկած որինակներում այն հենց այդպես էլ է: Բայց յերբեմն պատահում են այնպիսի նյութեր, վորոնց պետք է վերադրել փոչ թե պարզ ֆորմուլներ, այլ ալիլի բարդ՝ կրկնապատկած, յետապատկած և այլն: Վորպես որինակ կարող է ծառայել ջրածին պերքոսիզը, վորտեղ ջրածնի և թթվածնի հարաբերությունը 1:6 է, և նրա պարզ ֆորմուլը պետք է լինի HO : Նկատի ունենալով այն հանդմանքը, վոր ջրածին պերքոսիզը բալքարվում է ջրի և թթվածնի, նրան կարելի է վերադրել H_2O_2 և փոչ թե HO ֆորմուլը:



Կան և այլ կշռադատություններ, վորոնց հիման վրա ջրածին պերքոսիզի մոլեկուլը պետք է վոր բաղկացած լինի յերկու ատոմ ջրածնից և յերկու ատոմ թթվածնից: Նման հանդամանքներն են ստիպում նաև, վոր բացախաթթվի ֆորմուլը գրենք $\text{H}_4\text{C}_2\text{O}_2$ և փոչ թե H_2CO , այետիկն գազի ֆորմուլը՝ H_2C_2 և փոչ թե HC , և, վերջապես, հիմք կա բնդունելու, վոր մի բանի պարզ նյութեր, այսինքն տարբեր, ապա վիճակում կարող են գոյություն ունենալ մի ատոմից կազմված մոլեկուլների ձևով, իսկ մյուսները՝ պարզ նյութի մոլեկուլի ձևով, մոլեկուլներ՝ բաղկացած յերկու կամ մի բանի միատեսակ ատոմներից: Վորտեղ յեպքերում հնարավոր է լինում նույնիսկ վորտեղ այդ մոլեկուլների բաղադրությունը: Այսպես, որինակ՝ ջրածնի, թթվածնի, ազոտի, բլորի մոլեկուլները բաղկացած են 2-ական ատոմներից: Մոլեկուլները մենք կարող ենք պատկերել այսպես. H_2 , N_2 , O_2 , Cl_2 : Զպետք է կարծել սակայն, վոր ամեն մի պարզ նյութի մոլեկուլ բաղկացած է յերկու ատոմից: Այդ վերաբերում է միայն տվյալ դագերին և թիչ թվով այլ պարզ նյութերի, վորոնց վրա մենք այստեղ կանգ չենք առնում:

Այն ֆորմուլաները, վարմք արտահայտում են բարդ և պարզ նյութերի մոլեկուլի բաղադրությունը, կոչվում են մոլեկուլյար Գորմուլաներ: Նյութերի մեծ մասը, վորոնց հետագայում մենք պետք է պատահենք, ունեն պարզ ֆորմուլ. այդ ֆորմուլը հենց նրանց մոլեկուլյար ֆորմուլն է՝ գտած կշռային բաղադրություն հիման վրա, իսկ H_2O_2 , C_2H_2 և նման այլ ֆորմուլաների մասին անհրաժեշտ է հիշատակել, վորպեսզի աշակերտները սխալ պատկերացում չունենան, վոր բոլոր նյութերն էլ պարզ ֆորմուլ պետք է ունենան: Իսկ այն հարցը, թե ինչպես պետք է գտնել մոլեկուլյար ֆորմուլաները, բավական բարդ հարց է, և այն մենք այստեղ քննարկել չենք կարող: Մոլեկուլյար ֆորմուլաները գտնելու յեղանակների մասին խոսվում է որդանական քիմիայի մեջ:


Մոլեկուլյար ֆորմուլով հեշտ է հաշվել տվյալ նյութի մոլեկուլյար կշիռը: Դրա համար հարկավոր է գումարել մոլեկուլ կազմող բոլոր ատոմներն ատոմային կշիռները: Այսպես, սրինակ, ծծմբաթթվի մոլեկուլը բաղկացած է յերկու ատոմ ջրածնից, վորոնց կշիռը հավասար է $1 \times 2 = 2$, մի ատոմ ծծմբից $= 32$ և չորս ատոմ թթվածնից $- 16 \times 4 = 64$:

Հետևաբար, ծծմբաթթվի մոլեկուլյար կշիռը $= 2 + 32 + 64 = 98$:

Յեթն ատոմային կշիռը մի այնպիսի թիվ է, վոր ցույց է տալիս, թե տվյալ տարրի ատոմը քանի անգամ ծանր է ջրածնի մի ատոմից, ապա մոլեկուլյար կշիռը մի այնպիսի թիվ է, վոր ցույց է տալիս, թե տվյալ նյութի մոլեկուլը քանի անգամ ծանր է ջրածնի մի ատոմից:

Տ. Քիմիական հավասարումներ. Քիմիական ֆորմուլաների ողնությունը կարելի չէ արտահայտել վոչ միայն բարդ նյութերի բաղադրությունը, այլև քիմիական ռեակցիաները, այնպես, ինչպես մենք արտահայտում էյինք բառերով: Տարբերությունն այստեղ միայն այն կլինի, վոր քիմիական հավասարումներ ֆորմուլաներով արտահայտում են նյութերի վոչ միայն վորակական, այլև քանակական հարաբերությունները:


Ծծմբի ($S=32$) և յերկաթի ($Fe=56$) միացման հավասարումը




ցույց է տալիս, վոր 56 կշռամաս յերկաթի հետ միանալով 32 կշռամաս ծծումբ, առաջանում է 56+32=88 կշռամաս ծծմբերկաթ:

Բայց վորովհետև քիմիական հավասարումն արտահայտում է նյութերի կշռային քանակությունները, ապա այդ հավասարումը պետք է արտահայտի յեվ նյութի կոնի պահպանման ռեակցիա: Յուրաքանչյուր տարրի ատոմների թիվը՝ հավասարության նշանից ղեպի աջ և ղեպի ձախ պետք է նույնը լինի:

Վերցնենք մեզ ծանոթ՝ կալցիումի և ջրի միջև տեղի ունեցող ռեակցիան: Այդ ռեակցիայի ժամանակ առաջանում են այսպես կոչվող հանգած կիր և ջրածին: Կալցիումի նշանն է Ca: Հանգած կրի անալիզը ցույց է տալիս, վոր նա բաղկացած է կալցիումից, թթվածնից և ջրածնից, և նրա ֆորմուլն է CaO_2H_2 : Ուրեմն կալցիումի և ջրի միջև տեղի ունեցող ռեակցիան մենք պետք է գրենք այսպես. հավասարման նշանից ղեպի ձախ պետք է գրենք կալցիումը և ջուրը, իսկ ղեպի աջ՝ հանգած կիրը և ջրածինը (ջրածնի մոլեկուլը H_2):



Բայց այս ձևով գրված մեր հավասարումը հակասում է նյութի կշռի պահպանման ռեակցիան: Չախից՝ ջրի բաղադրության մեջ մենք ունենք յերկու ատոմ ջրածին, իսկ աջից՝ չորս ատոմ ջրածին յերկու ատոմ ջրածին կրի բաղադրության մեջ և յերկու ատոմ էլ ազատ ջրածնի մոլեկուլի մեջ: Թթվածինը ջրի մեջ մի ատոմ է, իսկ կրի մեջ՝ յերկու ատոմ: Իսկ ինչպես գրենք այդ հավասարումը, վոր նա նյութի կշռի պահպանման ռեակցիան չհակասի: Մենք իհարկե չենք կարող H_2O ջրի ֆորմուլի վորտեղ գրել H_4O_2 , վորովհետև այդ արդեն ջուր չի լինի, այլ մի ուրիշ նյութ: Պարզ է, վոր այդպես անել չի կարելի: Ակնհայտ է, վոր ռեակցիան ընթանում է այնպես, վոր նրա մեջ մասնակցում է վոչ թե մի մոլեկուլ H_2O ջուր, այլ յերկու: Այդ մենք նշանակում ենք այդպես. ֆորմուլի առաջ գրում ենք յերկու թվանշանը՝ $2H_2O$: Այս ղեպքում յերկու մոլեկուլ ջրի մեջ հարկավոր կլինի 2 ատոմ թթվածին և 4 ատոմ ջրածին:



Այսպես գրելով՝ մենք ստանում ենք մի հավասարում,

վորակ ձախ մասի յուրաքանչյուր տարրի ատոմների թիվը հաս-
վասար և այլ մասի նույն տարրի ատոմների թվին:

Ձախ մասում կա 1 ատոմ Ca, այլ մասում նույնպես
1 ատոմ:


Ձախ մասում յերկու մոլեկուլ ջրի մեջ կա 4 ատոմ H
իսկ այլ մասում յերկու ատոմ H գտնվում է կրի մեջ և 2 ատ-
ոմ էլ (1 մոլեկուլ) ազատ վիճակում—ընդամենը 4 ատոմ:

Ձախ մասում յերկու մոլեկուլ ջրի մեջ կա 2 ատոմ թթված-
նի՝ O—այլ մասում կրի մեջ կա 2 ատոմ թթվածին:


Այսպես, ուրեմն, հավասարումը ճիշտ և զրոյած:

Անհրաժեշտ է մի անգամ ևս նշել, վոր հանգած կրի ֆոր-
մուլը սովորաբար գրում են վոչ թե CaO_2H_2 , այլ $Ca(OH)_2$ և
կարգում են՝ կայցիում-ո-հաշ-յերկու անգամ: «Յերկու անգամ»
(«չերեք անգամ» և այլն) բառով այն նրբութունն է արտա-
հայտվում, վոր 2 (3 և այլն) վերաբերում է փակագծերի՝ մեջ
յեղած բոլոր ատոմներին: Յեթե ասելու լինենք՝ «կայցիում-ո-
հաշ-յերկու», այդ կնշանակեր $CaOH_2$,—մի նյութ, վոր զոչու-
թյուն չունի:

Ջննենք քիմիական հավասարում կազմելու մի սրինակ էր
Ջրի գոլորշիների և յերկաթի միջև կատարվող սեակցիայի ժա-
մանակ ստացվում են յերկաթնոսից և ջրածին: Յերկաթնոսիգի
անալիզը ցույց է տալիս, վոր նա ունի այս բաղադրութունը՝
 Fe_3O_4 : Ռեակցիայի սխեման սկզբում մենք պետք է գրենք
այսպես.




Այս հավասարումը զարձյալ չի համապատասխանում նյու-
թի կշռի պահպանման սրենքին, վորովհետև ջրածնի, թթվածնի
և յերկաթի ատոմների թիվը հավասարման այլ և ձախ մասե-
րում իրար հավասար չեն: Գտնում ենք այնպիսի ֆորմուլ, վոր-
տեղ տարրերի ատոմների թիվը ամենից շատ է— Fe_3O_4 և նրա-
նից էլ սկսում ենք «հավասարեցնել»: Այլ մասում կա 3 ատոմ
յերկաթ, ձախ մաս—1. յերկաթի տաալը ձախ մասում գրում
ենք 3.



Այլ հավասարեցնում ենք թթվածինը, այլ մասում թթված-

նի ատոմների թիվը 4 է, հետևապես ռեակցիային մասնակցում
է չորս մոլեկուլ ջուր՝ $4H_2O$: Չորս մոլեկուլ ջրի մեջ կա մեղ
հարկավոր չորս ատոմ թթվածին. բացի այդ՝ նաև 8 ատոմ ջրա-
ծին: Այդքան էլ ատոմ ջրածին պետք է լինի հավասարման այլ
մասում, հետևաբար հավասարումն արտահայտվում է այս կերպ՝




Նման «հավասարեցում» կատարելն անհրաժեշտ է, յեթե
հավասարման այլ մասը չի համապատասխանում ձախ մասին:
Կարելի չէ ճիշտ հավասարում կազմել միայն այն ժամանակ,
յեթե մենք ստույգ գիտենք, թե ռեակցիայի ժամանակ ինչ
նյութեր են ստացվում, և թե մենք նրանց ֆորմուլները ճիշտ
ենք գրել՝ համաձայն նրանց բաղադրության:

Յեթե բոլոր նյութերի ֆորմուլները ճիշտ են գրված, այդ
դեպքում խոսք կարող է լինել միայն ռեակցիային մասնակցող
և ռեակցիայից հետո ստացվող նյութերի մոլեկուլի թվի մասին:
Անկասկած՝ յուրաքանչյուր նյութի մոլեկուլների թիվը այնպես
պետք է լինի, վոր հավասարումը չհակասի նյութի կշռի պահ-
պանման սրենքին:

«Հավասարեցնել» բառի փոխարեն հաճախ ասում են «զոր-
ծակիցներ զնել»:

Ծանոթություն. Գիմիական հավասարութունները յերբեմն
կոչվում են «քիմիական հավասարումներ», հավասարության
նշանի փոխարեն մի քանի գրքերում գնում են սլաք—>. սրինակ՝




Յեղբրափակելով մեր բոլոր ատոմները՝ մտաբերենք քիմիա-
կան այն բոլոր ռեակցիաները, վոր մենք կատարեցինք կամ
նկարագրեցինք, բայց չգրեցինք քիմիական հավասարութունների
ձևով: Այդ ռեակցիաները բերված են ստորև՝ սխեմաների ձևով,
առանց գործակիցների, ուստի և հավասարության փոխարեն
զրված են գծիկներ: Այդ սխեմաները պետք է արտապրել տետրի
մեջ հավասարումների ձևով և դնել զործակիցները:


Պղնձնոսիգի ստացումը՝




Անագորքսիդի առաջացումը՝




Կրաջրի պղտորումը՝ նրա վրա ածխածինի գազով ազդելիս.




Մնդիկորքսիդի տարբալուծումը՝




Մալաքիտի քայքայումը՝




Կրաքարի քայքայումը (բովումը).




Կրի մարումը՝



Ջրի տարբալուծումը՝







Բերտոլետյան աղի քայքայումից թթվածին ստանալը՝




Մանգանիդի օքսիդացումը— MnO_2 , վորը մենք խառնում ենք բեր-
տոլետյան աղին վորպես կառավարիչ, մնում է անփոփոխ,
որա համար ել սեղանի վրա հավասարության մեջ չի մտնում:


Թթվածնի մեջ գանազան պարզ նյութերի այրումից առա-
ջացած օքսիդները՝



Ջրածին ստանալը՝




Ջրածնի այրվելը:



Պղնձօքսիդի վերականգնումը ջրածնի միջոցով.



Ջրածին պերօքսիդ ստանալը.



Ողորհի առաջացումը թթվածնից.



9. Հազվադեպ հանդիպում ենք Օ₂ և Օ₃ նյութերի մասին, որոնք հազվադեպ հանդիպում ենք մի շարք խնդիրներ վճռելիս: Այսպես, օրինակ, գիտենալով ած-
խածինի քանակությունը, մենք կարող ենք մի շարք խնդիրներ վճռել: Այսպես, օրինակ, գիտենալով ած-
խածինի քանակությունը, մենք հեշտությամբ կարող ենք
հաշվել, թե նրա մեջ քանի տոկոս ածխածին կա, այսինքն՝ 100
կշռամաս ածխածին գազի մեջ քանի կշռամաս ածխածին է
պարունակվում:

Հիշենք, վոր ածխածնի ատոմական կշիռը=12, թթվածնի
ատոմական կշիռը=16: Ածխածին գազի մոլեկուլի մեջ կա 1
ատոմ ածխածին—12 կշռամաս և յերկու ատոմ թթվածին—

$16 \times 2 = 32$ կշռամաս: Հետևաբար, ածխածինը զաղի մոլեկուլայար կշիռը հավասար է $12 + 32 = 44$ կշռամաս:

Հիմա մենք հեշտ կերպով կարող ենք հաշվել, թե 100 կշռամաս ածխածինը զաղի մեջ քանի կշռամաս ածխածին կա: Դատում ենք այսպես. 44 կշռամասի մեջ պարունակվում է 12 կշռամաս ածխածին, մի կշռամասի մեջ կլինի $\frac{12}{44}$, իսկ 100 կշռամասի մեջ՝ $\frac{12 \times 100}{44} = 1200 : 44 = 27,270\%$:

Այս խնդիրը լուծելու համար կարող ենք սգավել նաև համեմատությունների կանոնով.

$$x : 120 = 100 : 44, \text{ վորտեղից } x = \frac{100 \times 12}{44} = 27,270\%$$

Այսպիսով մենք գտանք, վոր ածխածինը զաղի մեջ պարունակվում է $27,270\%$ ածխածին:

Նման յեղանակով կարելի յե վճռել նաև մի շարք խնդիրներ: Ոքինակ՝ ունենք 20 տոնն անագի հանք—«անագաքար» SnO_2 բաղադրությունը: Այդ հանքից քանի տոնն անագ կարելի յե ձուլել:

Անագի ատոմական կշիռն է՝ 119: SnO_2 -ի մոլեկուլային կշիռը կլինի՝ $119 + 16 \times 2 = 119 + 32 = 151$:

Կազմում ենք համեմատություն.

$$x : 119 = 20 : 151, \text{ այստեղից } x = \frac{20 \cdot 119}{151} = 15,8 \text{ տոնն:}$$

Խ Ն Դ Ի Բ Ն Ե Բ

Հաշվեցիք տանորդական կոտորակներից և վճռեցիք մեկ տանորդական նշանի ճշտությամբ

1. Կնքանի կապար կարելի յե ստանալ 478 տոնն կապարափայլից, վորն ունի PbS բաղադրություն:


2. Քանի կիրողած ցինկուլֆիդ՝ ZnS անհրաժեշտ է վերցնել 25 կիրողած ցինկ ստանալու համար:

3. Վճռեցիք, թե յերկաթահանքերից վորն է ավելի հարուստ յերկաթով գործ յերկաթաքարը՝ Fe_2O_3 կամ Fe_3O_4 թե՛ մագնիսական յերկաթաքարը՝ Fe_3O_4 :

4. Կարծիք յերկաթաքարից Fe_2O_3 պետք է ձուլել 200 տոնն յերկաթի քանի վագոն է հարկավոր, վոր պահանջվող քանակությամբ յերկաթահանքը բերվի զոմեյան վառարանի մոտ: Յուրաքանչյուր վագոնի տարողությունը = 16 տոննի:

Նման խնդիրները կարելի յե վճռել սեպտեմբերի հավասարումներից հիման վրա: Ոքինակ՝ քանի գրամ ջուր կստացվի, յեթե ջրածնով վերականգնենք 32,8 գրամ պղնձօքսիդ՝ CuO :

Գրում ենք սեպտեմբերի հավասարությունը.




Հավասարումից մենք նկատում ենք, վոր պղնձօքսիդի մի մոլեկուլը, այսինքն $64 + 16 = 80$ կշռամասը, սեպտեմբերի ժամանակ տալիս է մի մոլեկուլ, այսինքն $2 + 16 = 18$ կշռամաս ջուր: Կազմում ենք համեմատություն. 18-ն այնքան անգամ մեծ է x -ից, վորքան 80-ը մեծ է 32,8-ից, կամ՝

$$18 : x = 80 : 32,8, \text{ վորտեղից}$$


$$x = \frac{32,8 \cdot 18}{80} = 7,38 \text{ գր:}$$

Հարմար է դասավորել այսպես.



Կարգում ենք. 80 գր պղնձօքսիդը տալիս է 18 գր ջուր, 32,8 գրամը տալիս է x : Այստեղից կազմվում է հետևյալ համեմատությունը՝ $80 : 32 = 18 : x$:

Յեթե խնդիրը պղնձի քանակին վերաբերեր, այդ դեպքում հաշվումները պետք է դասավորել այսպես:



Յեթե խնդիրը գրվեր այնպես, թե քանի գրամ պղնձօքսիդ պետք է վերցնել, վոր սեպտեմբերի ժամանակ ստացվեր 7,38 գր ջուր, այդ դեպքում խնդիրը կլուծվեր այսպես.

$$\begin{array}{r} \text{CnO} + \text{H}_2 = \text{Cu} + \text{H}_2\text{O} \\ 64 + 16 \qquad \qquad 2 + 16 \\ - 80 \qquad \qquad \qquad 18 \\ \times \qquad \qquad \qquad 7,38 \\ \hline 80 : x = 18 : 7,38 \end{array}$$

Համեմատություն կազմելու փոխարեն, կարելի չեք դասել այսպես:


80 գր պղնձոքսիդը տալիս է 18 գր ջուր: Վորպեսզի 1 գր ջուր ստացվի, պետք է վերցնել վոչ թե 80 գր պղնձոքսիդ, այլ 18 անգամ պակաս, այսինքն $\frac{80}{18}$, իսկ վորպեսզի ստանանք վոչ թե 1 գր, այլ 7,38 գր ջուր—պետք է վերցնել 7,38 անգամ ա-վելի:

$$\frac{80 \cdot 7,38}{18} \text{ գր}$$

Կատարելով գործողությունը՝ մենք կստանանք փնտրած արդյունքը:

Քիմիական զանազան փորձերի ու հաշվարկների ժամանակ շատ հաճախ նյութերի քանակությունները կամայորեն վերցրած կշռային մասերով հաշվելու փոխարեն սովորում են զրամմոյեկուլ կշիռն և զրամատոմ կշիռն կամ, ավելի կարճ լինելու համար, գրամմոյեկուլ յեմ գրամատոմ հասկացողություններով: Այդ հասկացողությունները նշանակում են նյութի ատոմի կամ մոլեկուլի կշռային քանակությունները գրամմերով: Ծծմբաթթվի՝ H_2SO_4 զրամմոյեկուլը կլինի՝ $2 + 32 + 64 = 98$ զրամ ծծմբաթթու: Յինկի զրամատոմը կլինի 65 գր ցինկ:

Յեթև գործնականում հարկավոր է լինում վորևե ոեակցիա կատարել, ամենից հարմար է նյութերը զրամմերով կշռել: Մի զրամմոյեկուլ ծծմբաթթու և մի զրամատոմ ցինկ վերցնելով՝ մենք գիտենք, վոր



ոեակցիայի ժամանակ վոչ ցինկ կմնա և վոչ էլ ծծմբաթթու, այլ կստացվեն միայն ցինկարջասպ և ջրածին:


Յերբեմն զրամմոյեկուլայ կշիռը կրճատ ձևով ասում են մոլայր կշիռ, կամ ավելի կարճ—մոլ:

Ամբողջ զրամմոյեկուլ վերցնելու փոխարեն աշխատանքի ժամանակ կարելի չե վերցնել զրամմոյեկուլի մասերը, որինակ՝ $\frac{1}{8}$ մոլ, 0,1 մոլ և այլն:


Խ Ն Դ Ի Ի Ն Ե Բ

1. Քանի կելոզրամ յերկաթ պետք է վերցնել, վորպեսզի ստացվի 20 կելոզրամ ծծմբերկաթ: Ռեակցիայի հավասարումն է՝ $\text{Fe} + \text{S} = \text{FeS}$:

2. 50 գր ցինկի միջոցով ծծմբաթթվից զատած ջրածնի այրումից քանի գրամ ջուր կստացվի: Ռեակցիաների հավասարումներն են՝



3. 200 գր մալաքիտի շիկացումից քանի գրամ պղնձոքսիդ կստացվի Ռեակցիայի հավասարումն է՝




մալաքիտ պղնձ-ջուր ածխա-
ոքսիդ թթու գազ

4. Ինչքան մալաքիտ պետք է քայքայել, վոր 10 գրամ ջուր անջատվի


5. Մալաքիտի քայքայման ժամանակ անջատվել է 25 գր ջուր և ածխաթթու գազ: Ինչքան մալաքիտ է վերցված յեղի:

6. Կալցիումի և ջրի միջև տեղի ունեցող ոեակցիայի ժամանակ ստացվել է 10 գր ջրածին: Ինչքան կալցիում է վերցված յեղի: Ռեակցիայի հավասարումն է



7. Ուղապարեկի տարողությունն է 100 մ³ մի խորանարդ մետր ջրածինը կշռում է 0,09 կգ. ինչքան ծծմբաթթու և ցինկ պետք է վերցնել՝ այդ ուղապարեկը ջրածնով լցնելու համար:


8. Բարիումպերոքսիդի BaO_2 և ծծմբաթթվի H_2SO_4 միջև տեղի ունեցող ոեակցիայի ժամանակ ստացվում է ջրածին պերոքսիդ ըստ հետևյալ ոեակցիայի՝



Քանի գրամ բարիում պերոքսիդ պետք է վերցնել 340 գ ջրածին պերոքսիդ ստանալու համար:

9. Քլորին գրամ բերտության աղ պետք է վերցնել նորմալ պայմաններում 134,4 թթվածին ստանալու համար:

Ռեակցիայի հավասարությունը հետևյալն է.



Նորմալ պայմաններում մեկ լիտր թթվածինը կշռում է 1,43 գ:

10. Քիմիական լեզու. Քիմիական ֆորմուլաները և հավասարումները չափազանց կարճ, հասկանալի ու զննական կերպով արտահայտում են նյութերի վորակական ու քանակական բաղադրությունը և նրանց հետ կատարվող յերևույթները:


Փորմուլաների և հավասարումների գիտողականության շնորհիվ նրանք հեշտություն պահվում են հիշողության մեջ, այնինչ նյութերի տոկոսային բաղադրությունը հիշելն անիմաստ բան կլիներ:

Քիմիական նշանների կամ «սիմվոլները» հիմքում բերցնելու և ընդունում էր տարրերի լատինական և հունական անունները: Այդ նշաններն ընդունել են բոլոր յերկրների և ժողովուրդների քիմիկոսները: Այսպիսով քիմիական ֆորմուլաները և հավասարումները հիմնական ինտերնացիոնալ հատուկ լեզու չեն՝ միատեսակ հասկանալի յուրաքանչյուր քիմիկոսի, ինչ ազգություն էլ վերնա պատկանելու լինի:


ԿՐԿՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Ստորև բերված հավասարումներում զտրմակիցները դրեք և արտադրեցեք ձեր անտրակներում:


ա) Ջրի առաջացումը կապարդիոքսիդի և ջրածնի միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ.




բ) Ցինկի և աղաթթվի միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ.



գ) Ալումինիումի և ջրի միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ.



դ) Մալաքիտի և ազոտաթթվի միջև տեղի ունեցող ռեակցիայի ժամանակ.



մալաքիտ ազոտ-պղնձ-ջուր ածխաթթուք քլորիդ թթու

2. Ինչո՞վ են տարբերվում պարզ և բարդ նյութերն իրենց մոլեկուլեքադադրության տեսակետից:

3. Թվեցեք ողորդի հատկությունները:

4. Ի՞նչ բաղադրություն ունի թթվածնի և ողորդի մոլեկուլը:

5. Ի՞նչ տարբերություն կա «ատոմի կշիռ» և «ատոմական կշիռ» հասկացությունների մեջ:

6. Ի՞նչու Դալտոնն ատոմական կշիռները վորոշելու համար վորպես միավոր ընդունում է ջրածնի ատոմի կշիռը:


7. Ի՞նչ է մոլեկուլային ֆորմուլը:

8. Ատոմական ուսմունքն ի՞նչ որենքներ է բացատրում:

9. Գրեցեք քլորի մոլեկուլային ֆորմուլը:

10. Գտեք այն նյութի ֆորմուլը, վոր պարունակում է 82,25% ազոտ և 17,75% ջրածին:

11. Գործարանում տարեկան 190.000 տոնն քարածուխ են այրում: Որքան նյութն են արտադրում գազ և բաց թողնվում ող, յեթե տարին ունի 310 աշխատանքի ող, և ածուխը միջին թվով 70% ածխածին (C) է պարունակում, վորն այրվելիս առաջ է բերում ածխաթթու գազ, այս հավասարությունը՝




IX. ՈՔՍԻԴԱՑՈՒՄ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ

1. Օդումը քվածնի մեջ յե՞վ ողում. Այրումը թթվածնի մեջ՝ տարբերվում է սղի մեջ տեղի ունեցող այրումից նրանով միայն, վոր գուտ թթվածնի մեջ այրման պրոցեսն ավելի արագ ու յետանողուն է կատարվում, քան սղում:

Ողում թթվածինը, յնչպես արկեն ասված է, մեծ չափով յատնված է աղտի հետ (ըստ ծավալի $\frac{1}{3}$), վորն այրման մեջ վոչ մի մասնակցություն չունի, այլ միայն պրոցեսն է գանդադեղնում: Այրման ժամանակ, թե սղում է թե գուտ թթվածնի մեջ, նույն պրոցես կաներն են ստացվում՝ տարբերի միացումը թթվածնի հետ: Թթվածնի և տարբերի բոլոր միացությունները մի ընդհանուր բառով կոչվում են օքսիդներ: Տարբերի հետ թթվածնի միացման պրոցեսը կոչվում է օքսիդացում: Յերբ մենք ասում ենք, թե նյութերն այրվում են թթվածնի մեջ, վոր թթվածինը «նպատում է այրմանը», յերբեք չպետք է մոտանանք, վոր այրումը նույնքան տվյալ նյութի միացումն է թթվածնի հետ, վորքան թթվածնի միացումն այդ նյութի հետ: Դրանք միանում են թթվածնի միացումն այդ նյութի հետ: Դրանք միանում են վախադարձաբար, Հեշտ է ապացուցել, վոր, որինակ, թթվածինը կարող է ջրածնի մեջ աջրվել նույնպես, յնչպես ջրածինը


Թթվածնի մեջ: Ջրածնի այրվելը Թթվածնի մեջ՝ մենք արդեն դիտել ենք:



Նկ 60 Թթվածնի այրումը ջրածնի մեջ:

Ջրածնի մեջ Թթվածնի այրվելու փորձը կարելի չե կատարել այսպես. բացվածքով դեպի ցած շուռ տված գլանը լցնում են ջրածնով, այնուհետև ջրածինը բռնկեցնում են և անմիջապես դառնի մեջ են մտցնում մի խողովակի վորեց Թթվածին և դուրս գալիս: Այն մոմենտին, յերբ խողովակի մի ծայրը դրանի բերանի մաս

ջրածնի բոցի մեջ և մտնում, անմիջապես խողովակի մյուս ծայրին բոց և նկատվում: Այդ ջրածնի մեջ այրվող քվածնի բոցն է: Գլանի պատերը քրտնում են, քանի վոր այրման ժամանակ ջուր և առաջանում (Նկ. 60).



Թե բարդ և թե պարզ նյութերի այրման ժամանակ առաջանում են որսիղներ: Դրանք տարրերի որսիղներ են, վոր մտնում են բարդ նյութերի բաղադրության մեջ: Այսպես, որինակ՝ սաեարինե մոմի այրման ժամանակ առաջ են գալիս մոմի նյութի բաղադրության մեջ յերկու տարրի որսիղ—ջրածին որսիղ (ջուր) և ածխածին որսիղ (ածխածխած գազ):

Խ Ն Դ Ի Բ

Գրեցեք սաեարինի այրման ժամանակ տեղի ունեցող սեակցիայի հավասարում, վորի ֆորմուլն է $C_{18}H_{26}O_2$:

Հայտնի չե վոր վորոշ նյութեր հեշտ են այրվում, իսկ ուրիշները գծվար:

▲ Փորձ Սարիեի ծայրին ամրացրեք մի փոքրիկ կտոր ցելուլոզ, վորից պատրաստում են սանրեր և այլ առարկաներ. Միաժամանակ լամպի բոցի մեջ մտցրեք ցելուլոզը և նույն հաստության ստվարաթղթի կտոր, կամ ժարի և իսկույն հանեք: Ցելուլոզն իսկույն բոցավառվում է, իսկ ստվարաթուղթը կամ մարխը չի այրվում:

Նման փորձ կատարեցե՛ք՝ վերցնելով ստվարաթղթի կտոր և մադենզիումի ժապավեն վորպեսզի մադենզիումը վառվի, այն ավելի շատ պետք է տաքացնել, քան ստվարաթուղթը: ▲

Ճոսֆորը կարելի չե այրել ատր ջուր պարունակող փորձանոթի միջոցով:

Այրվող յուրաքանչյուր նյութի համար մոտավորապես կարելի չե վորոշել այն ջերմաստիճանը, վորի մեջ նա վառվում է: Այդ ջերմաստիճանը կլինի նրա բացավառման ջերմաստիճանը. ֆոսֆորի բոցավառման ջերմաստիճանն է մոտ 50° , ծծմբինն ու փայտինը— 270° , ածխինը—մոտ 350° , ջրածինը—մոտ 600° , մադենզիումինը—մոտ 800° , յերկաթինը—ե՛լ ավելի բարձր:

Արդեն այրվող նյութը շարունակվում և այրվել, վորովհետև այդ ժամանակ անջատվող ջերմությունը բոցին մոտիկ մատերը տաքացնում է մինչև բոցավառվելու ջերմաստիճանը: Հարկավոր է տաքացնել միայն սեակցիան սկսելու համար:

Այրումը կարելի չե դադարեցնել կամ ողի հոսանքը դադարեցնելով, կամ այրվող նյութը բոցավառման ջերմաստիճանից ցածր պահեցնելով:

Յերբ մենք կրակի վրա ջուր ենք ածում, մենք վոշ միայն պահեցնում ենք այրվող նյութը, այլև արդելում ենք ողի հոսանքը դեպի այն:

Վոր իրոք այրվող նյութը կարելի չե հանգցնել միայն նրա ջերմաստիճանն իջեցնելով, այդ հեշտ կերպով կարելի չե ցույց տալ հետևյալ փորձով: Յերկաթյա տիղելը բիջ քանակությամբ սկիպիդար են ածում ու փորձում վառվող մարխով այն այրել: Սկիպիդարը չի վառվում: Յերբ տիղելը թեթև կերպով տաքացնում են և ապա նոր մոտեցնում վառվող մարխը—սկիպիդարը վառվում է:

Վորքան շատ են տաքացնում տիղելը, այնքան այրումն ավելի յեռանդուն է ընթանում: Յեթե տիղելը սառեցնենք, գնենք սառը ջրի մեջ, սկիպիդարի այրվելը կթուլանա և, վերջապես, բոլորովին կդադարի:

Հեշտ այրվող նյութերը կոչվում են հրավառնա: Կրակից հեշտ են այրվում դադային և շուռ ցնդող նյութերը, նույնիսկ յեթե նրանք բոցավառման բարձր ջերմաստիճան ունեն: Դրա պատճառն այն է, վոր դադն արագությամբ և

տաքանում մինչև բոցավառման ջերմաստիճանը, քան հեղուկ և կարծր նյութերը: Այդ պատճառով ել հրավառնգ նյութերին են պատկանում մոչ միայն բոցավառման ցածր ջերմաստիճան ունեցող՝ այրվող նյութերը, այլև հեշտ ցնդող նյութերը, ինչպես սպիրտը, բենզինը, յեթերը:

Բենզինը շատ հաճախ դժբախտ զեպքերի շատճառ է լինում: Մարդիկ, վորոնք չզգտեն, թե վորքան շուտ ցնդող ու հրավառնգ նյութ է բենզինը, հաճախ բենզինով վորևե բան են մաքրում կամ կրակին մոտ բենզինը մի ամանից մի ուրիշ աման են անում: Յեթև նույնիսկ կրակը հեռու յե, արագ տարածվող բենզինի գոլորշիները հեշտությամբ հասնում են կրակին ու վառվում: Բենզինի գոլորշիները հեշտությամբ կարող են բոցավառվել մոչ միայն մոմից կամ լամպից, այլև վառվող վառարանից, սենյակի մյուս ծայրին զցած լուցկուց: Հսկայական բոց է ստացվում, վոր բնդդրվում է աշխատողին. նրա վրա հազուստը վառվում է:

Մարդու վրա վառվող հազուստը հանգչնելու միակ միջոցն է նրան ծածկել վերմակով, մուշտակով, գորգով և այլն և պինդ փաթաթել՝ ողի հոտանքը զեպի այրվող հազուստն արգելելու համար (նկ. 61):



Նկ. 61 Մարդու վրա վառվող հազուստը հանգչնելու:

Շատ վտանգավոր է, յերբ մարդը, վորի վրա վառվում է հազուստը, սկսում է սենյակի մեջ վազվզել. զբա շնորհիվ թարմ սղբ միայն ու ժեղայնում է վառվելը:

Բենզինն ու նավթը ջրով հանգչնել չի կարելի: Նրանք ջրում նախապես լողալով ջրի յերեսին՝ շարունակվում են այրվել:

2. Սյրման օեակցիայի հեանակուրջուեը. Մարդն սկսել է ոգտվել կրակից՝ անհիշելի, նախապատմական ժամանակներից: Առաջին անգամ մարդը կրակին պատահել է հալանորեն պատա-

հական կերպով: Կրակը կարող առաջանալ կայծակից, վառված չոր փայտից: Մարդն սկզբում անկասկած զարմուտած եր կրակով և նրա մեջ միայն աստվածային ուժ եր տեսնում, իսկ հետո սովորեց ոգտարվել կրակից և պահել՝ խարույկի մեջ չոր ճուղեր գցելով: Ժամանակի ընթացքում նա սովորեց նաև կրակ ձեռք բերել, և նախամարդու կյանքում այդ մեծ նվաճում եր: Փայտի չոր կտորները մեկը մյուսին շփելով նա կրակ ձեռք բերեց՝ խարույկ վառելու համար, վորի մոտ տաքանում եր մարդը, կերակուր եր յեփում և վորով իր թըշ նամիններին—վայրի զաղաններին վախեցնում եր (նկ. 62):



Նկ. 62. Շփման միջոցով կրակ ստանալը:

Մարդու հետևյալ նվաճումը կայծակաքարի և կուլչեղանի կտորների միջոցով կրակ վառելը յեղավ:

Կարծր կայծաքարով յերկաթի կուլչեղանին՝ FeS_2 հարվածելով, առաջացած ասքության շնորհիվ կուլչեղանից կայծեր են թուչում այս ու այն կողմ, վորոնցով կարելի յե վառել չոր խոտ և շուտ բոցավառվող այլ նյութեր:

Ծծմբական կուլչեղանն ուրիշ կերպ կոչվում է պլեխ: Այդ անունն առաջացել է հունարեն «պլեք» բառից, վոր նշանակում է կրակ: Այս հանգամանքը ցույց է տալիս, վոր կուլչեղանը գործածվել է նախապատմական ժամանակներում և, ըստ յերևույթին, հայտնի յե յեղել նաև հին հույների:



Հետագայում պլեխը փոխարինվեց յերկաթի կտորով (հրահանով) (նկ. 63): Կրակ ստանալու այդ յեղատեղությամբ կրակ են ստանում: նակն ընդհանուր գործադրության շրահանից ցատում են յերկաթի մեջ եր ամեն սեղ, զեռ սրանից մոտ շատ մանր մասնիկներ, վորոնք 150 տարի առաջ: Այն ժամանակ զեռ շիկանում են հարվածից և կայ-

վոչ լուցկի կար, մոչ գաղ, մոչ նավթի ծեր են տալիս:

Տուփիկի մեջ գտնվում է զալամպ, մոչ ել ստեարինի մոմեր: Ընարվը վորը կայծերից այրվում է: պլե մոմեր կային միայն:

Շատ հազարամյակների ընթացքում կրակը և վառելա-
նյութը միայն տնային առարկա կարիքների համար ելին սղտա-
զործում: Միայն վերջին հարյուրամյակում վառելանյութն այն-
լի լայն նշանակություն ստացավ:

Վառելանյութն այժմ մեզ անհրաժեշտ է վուչ միայն բնա-
կարան տաքացնելու և կերակուր պատրաստելու համար, ինչ-
պես առաջներումն էր, այլ նա խոշորագույն նշանակություն
ունի և արդյունարերություն համար, վորպես շարժիչ ուժ՝ ֆաբ-
րիկաների ու գործարանների, յերկաթուղիների, շոգենայի, ալ-
տոմոբիլների, անրալանների, գյուղատնտեսական մեքենաների
ու արևատորների համար: Վառելանյութն անհրաժեշտ է նաև
կլիկտրոնների, լուսատու գազ, կոքս, քարածխային խեժեր
ստանալու համար, ինչպես և հանքերից մետաղներ ձուլելու
համար:

Չուտ ըմբիական արտադրությունների համար վառելա-
նյութն անհրաժեշտ է մի շարք պրոցեսներ կատարելու համար.
տաքացնելու, զսլորչիացնելու, թորելու չորացնելու, շիկացնելու
համար և այլն:

Յեթե վառելանյութն անհրաժեշտ է բոլոր յերկրների հա-
մար, ապա մեր յերկրի համար, սոցիալիզմ կառուցող յերկրի
համար, նա ավելի կարևոր նշանակություն է ստանում: Մեզ
անհրաժեշտ են հսկայական քանակությամբ նյութեր, անասն-
ման քանակությամբ եներգիա: Այս եներգիան մեզ տալիս է զբլ-
խալորապես վառելանյութի այրումը:

Արտադրության համար անհրաժեշտ գլխավոր վառելանյութերն են՝ քա-
րածուխը, տորֆը և նաֆթը:

Քարածուխը մեր արդյունարերության եներգեակի կարևոր բաղան է
հանդիսանում: Նրա պաշարը ըՄՆՄ ուժ հսկայական է: Մեր դարաշրջանում
նոր քարածուխ չի տառաջանում և յիզած պաշար չի լրացվում: Այդ պատճա-
ռով էլ այնտեղ, ուր այդ հնարավոր է, քարածուխը փոխարինում են տորֆով,
վոր առաջանում է ճահճոտ վարերում:


Ներքին այրման շարժիչների, արևատորների, ավտոմոբիլների, անրո-
տյանների համար վառելանյութ տալիս է նավթը: ըՄՆՄ նավթի պաշարն այլ
յերկրների հետ համեմատած հսկայական է. բայց և այնպես նա տատնաբար
սպառվում է: Այդ պատճառով էլ ձեռք են առնում բոլոր մրջյոցները, վոր թան-
գարծեք այդ վառելանյութը չծախսվի այնտեղ, ուր նա կարող է քարածուխով
ու տորֆով փոխարինվել:

Փայտը, վորպես վառելանյութ, արտադրության համար ավելի նվազ
արժեք ունի:

Վառելանյութը կարելի է փոխարինել բարձր սեղից բավվող ջրի ուժով
(«սպիտակ ածխով») և համու ուժով: Մակայն հաշիվները ցույց են տալիս, վոր
եներգիայի այդ աղբյուրները, նույնիսկ նրանց լրիվ ոգտագործման դեպում,
կարող են միայն մասամբ փոխարինել գործածվող վառելանյութը: Մասնավո-
րապես մեր Միութայն ջրային ուժերը կարճում են ընդհանուր եներգիայի
պաշարի միայն 40%: Եներգիայի մյուս ջանակությունը մենք ստանում ենք
վառելանյութից, և վառելանյութի խնդիրն ու նրա ուղղանալ ոգտագործումը
սոցիալիստական անտեսություն հիմնական խնդիրն է կազմում:

3. Քարածխի լեվ փայտի չոր թորումը. Շատ բարդ նյու-
թեր, վոր իրենց բաղադրության մեջ պարունակում են ածխա-
ծին և ջրածին, այսպես կոչվող որգամակամ նյութեր, ողի բա-
ցակայությունը շատ թեք է ընդ շատ չափով տաքացնելիս քայ-
քայվում են ավելի պարզ նյութերի — գազային, հեղուկ և
պինդ:

▲ Փորձ. Փորձանոթի 2/3 մասը լցրեք չոր փայտի կտորներով: Փոր-
ձանոթը բերանը ծածկեցեք խցանով, վորի մրջյով անց է կացրած ապակե կարճ
խողովակ, վորի մի ծայրը բավական չափով անցնի փորձանոթի մեջ, ինչպես
ցույց է տրված 64-րդ նկարում: Փորձանոթը
թեք դրեքով, ինչպես նշված է նկարում, ամ-
բայրեք պատվանդանի վրա և ապա տաքացրեք
սպիրտայրոցի բոցով՝ փորձանոթի հատակից
սկսած. Փորձանոթից դուրս յեկող գազն այ-
րեցեք, շարունակեցեք տաքացնել այնքան,
մինչև վոր դադարի գազի անջատումը:



Չլուրջությամբ բաց անելով փորձանոթը,
նրա մեջ հավաքված հեղուկը դատարկեցեք մի
ուրիշ փորձանոթի մեջ: Թափեցեք առաջին փոր-
ձանոթում ստացած ածուխը: Ուշադրությու-
ն դարձրեք նրա խտության և պինդ հատակի վրա գցելով
հնչուկության վրա. դրանք լավ ածխացրած ածխի հատակություններն են:

Նկ. 64. Փայտի չոր թորումը:

Հատագրեցեք փայտը տաքացնելու ժամանակ առաջացած հեղուկը:
Այդ հեղուկի մեջ կարելի է նկատել բնորոշ հոտ ունեցող գորշագույն ձուլի-
կաթիլներ: Հեղուկը փորձեցեք լակմուսով: Դուք կհամոզվեք, վոր հեղուկը զուտ
չուր չէ, այլ թթու պարունակող լուծույթ, վորի մեջ լակմուսը կտրվում է:▲

Փայտի չոր թորման ժամանակ առաջացող ջրային շերտը
մոտիկից ուսումնասիրելը ցույց է տալիս, վոր այդ հեղուկը
պարունակում է քաղցրաբու՝ քիչ քանակությամբ այսպես կոչ-

ված փայտի սպիտակ և մի շարք այլ նյութեր: Ձյութը նույնպես ներկայացնում է որդանական զանազան նյութերի խառնուրդ:

Առանց սղի հասանքի, որդանական նյութերի քայքայելը կոչվում է չոր բորում:

Փայտի չոր բորման պրոզուկտները մեծ արժեք են ներկայացնում: Առաջներում փայտ, ածուխ ստանալու համար, վոր գործադրվում է մետաղարդյունաբերության մեջ և աուրյա կյանքում, փայտը վառում ելին մի փոսի մեջ և վերևը հողով ծածկում, վորպեսզի սղի հասանքը թուլանա, իսկ հեղուկների ու գաղաշին նյութերի համար հող չեյին տանում: Այժմ փայտի չոր թորումը և ստացած պրոզուկտների վերամշակումն անտասա-քիմիական արդյունաբերության մի հսկայական բնագավառ է կազմում և մեր Միության անտառով հարուստ մասերի աղնատեսության համար խոշոր նշանակություն ունի:

Քիմիական արդյունաբերության համար ել ավելի խոշոր նշանակություն ունի վառելանյութի մի այլ տեսակի—քարածխի չոր թորումը:

Քարածխի չոր բորումը նույնպես կարելի չե կատարել փորձանոթի մեջ, բայց այս դեպքում ավելի ուժեղ կերպով պետք է աքացնել: Այստեղ նույնպես ստացվում են այրվող գազեր—լուսագազ, հեղուկ նյութեր և մուռ և կարծր ածուխ, վոր կոչվում է կոֆու:

Կոքսը, ինչպես և ածուխը, բաղկացած է ածխածնից և խառնուրդներից, վորոնք այրման ժամանակ մոխիր են տալիս: Քարածխի չոր թորումը տեղի չե ունենում հսկայական չափերով գործարաններում, լուսագազ և կոքս պատրաստելու համար:

Լուսագազը գործ են ածում ջախոյան և լուսավորության համար:

Հանքաքարից մետաղներ ձուլելու համար հսկայական քանակությամբ կոքս է պահանջվում: Այդ պատճառով ել գոյություն ունեն գործարաններ, վորոնք բացառապես կոքս են պատրաստում: Այդ գործարաններում գազը ծախսվում է վառարանները աքացնելու համար վորտեղ կատարվում է չոր թորումն այնպես, վոր կողմնակի վառելանյութ չի պահանջվում: Հեղուկ պրոզուկտները հավաքվում և ուղարկվում են քիմիական գործարանները՝ վերամշակելու համար:

Հեղուկ նյութերը բաղկացած են ջրային մասից և սե ձյութից բայց լակմուսի թուղթն այդ հեղուկից չի կարժրում, այլ կպտում և Ուրեմն այս-

տեղ ստացվող պրոզուկտներն այլ են, քան փայտի չոր թորման ժամանակ: Վատ հոտ ունեցող քարածխային խեժը ներկայացնում է մեծ քանակությամբ որդանական նյութերի մի խառնուրդ: Այդ խեժի թորման ժամանակ մի շարք արժեքավոր նյութեր են ստացվում, ինչպես, որինտի՝ նալթալին, կարբոյան թթու և այն: Այդ պրոզուկտներից քիմիական զանազան բարդ սեակցիաների միջոցով ստացվում են հսկայական քանակությամբ բազմապիսի արժեքավոր նյութեր՝ բազմապիսի յերանդներով ներկող նյութեր, դեղորայք, պոլիուցիկի թունավոր նյութեր:


Քարածխի չոր թորման ժամանակ ստացված ջրային հեղուկն իր մեջ պարունակում է ամոնիակ՝ NH₃՝ վոր չեյանյութ է ծառայում արհեստական կերպով ազոտական պարասանյութի արտադրության համար:

Ք. Բաց. Այրումը կարող է տեղի ունենալ թե բոցով և թե առանց բոցի: Առանց բոցի չեն այրվում այն նյութերը, վորոնք այրման ժամանակ չեն փոխարկվում գազի, ինչպես ածուխը, վոր միայն շիկանում է ու առկայծում, և ինչպես յերկաթը, վորը թթվածնի մեջ այրելիս առկա է միայն կայծեր—այս ու այն կողմ ցրվող յերկաթօքսիդի շիկացած մասնիկներ: Իսկ յերբ նյութն այրվում է բոցով, այդ նշանակում է, վոր այդ նյութը կամ գազային միճակում է, ինչպես ջրածինը, լուսատու գազը, ածխածին օքսիդը, կամ թե այրման ժամանակ փոխարկվում է գազերի:

Սպիրտայրոցի բոցը զննելիս մենք նրա մեջ յերևք մաս ենք տեսնում՝ ներքևի մաս՝ A նուրբ կաղաղված գույնի, միջին մասը՝ B, պարզ լուսավորող յեղին գույնի բոցով, և վերևի մասը՝ B, ավելի բաց գույնի բոցով: Բոցը զննելիս լավ է լինում, յերբ լավայի պատրույզը շատ գուրս հանում, յերբ (նկ 65): Բոցը պետք է ունենա միջին մեծություն:



Նկ. 65 Սպիրտայրոցի բոցի բոցի կազմությունը:



Նկ. 66 Փայտիկր սպիրտայրոցի բոցի մեջ առաջացնելը:

Վորպեսզի վճռենք այն հարցը, թե ինչ է կատարվում բոցի զանազան մասերում, թե ինչ են այդ մասերը, հետևյալ փորձերը կատարենք:

▲ Փորձ. Բոցի մեջ մարի մացրեք և պահեցեք հորեզոնական ուղղությամբ, ինչպես ցույց է արված 66-րդ նկարում: Հենց վոր մարին սկսի սեկանալ իսկույն հանեք յթողնելով, վոր նա վառվի Մարիը յերկու տեղ ածխատու է—բոցի յեղրերի մաս: ▲

Փորձը ցույց է տալիս, վրբ բոցի ամենաառաջ մասն միջին B մասն է: Իսկ թիչ կա սպիրտայրոցի բոցի ներքևի A մասում: Այդ հարցը վճռելու համար հետևյալ փորձը կատարենք:

▲ Փորձ. 2. Գինգետով կամ ունելով վերջերջ ապակե խողովակէ մի կտոր (մաս 10 սմ յերկարությամբ) և լավ տաքացնելով սպիրտայրոցի բոցի վրա, պահեք թիչը դիրքով այնպես, վրբ նրա ծայրը լինի A բոցի միջին մասում (նկ. 67): Խողովակի մյուս ծայրին ստեղծեք վառվող լուցիկին: Խողովակի ծայրին առաջ է գալիս փոքրիկ բոց: Այդ սպիրտի գոլորշիներն են վառվում, վրբ գտնվում են բոցի միջին մասում և դուրս են գալիս խողովակի միջով: Խողովակը պետք է տաքացնել, վրայից գոլորշիները նրա մեջ չխտանան:

Յեթե խողովակի ծայրը բարձրացնենք դեպի բոցի B մասը, խողովակի մյուս ծայրի բոցը կհանդիպի: Ուրեմն այստեղ սպիրտի գոլորշիներ չկան:

Կատարած փորձերը ցույց են տալիս, վրբ այբուձը տեղի չի ունենում բոցի միայն վերին և արտաքին մասում, իսկ բոցի ներքին մասում գտնվում են սպիրտի գոլորշիները, վրբոնք այդպեղից ցնդում են: Իսկ բոցի արտաքին հաղիվ տեսանելի B մասում արդեն չեն իջնում են միայն այբուձից առաջացող շիկացած պրոդուկտները:



Նկ. 67. Սպիրտայրոցի բոցից սպիրտի գոլորշիներ դուրս բերելը:

Ճիշտ այնպես, ինչպես սպիրտայրոցի բոցի մեջ սպիրտի գոլորշիներ են լինում, այսպես էլ ծծմբի, ֆոսֆորի, մագնեզիումի բոցերի մեջ կան այդ նյութերի գոլորշիներ, վրբոնք և բոց են առաջացնում:

Մարխի բոցը նույն կազմությունն ունի, ինչ կազմությունն վրբ մյուս բոցերն ունեն: Յեթե մարխի բոցը փչենք, նրանից միառժամանակ դնորոշ հոտով ծուխ դուրս կգա: Այդ, իհարկե, փայտի գոլորշիները չեն, այլ փայտի չոր թորման՝ մեղ ծանոթ պրոդուկտները, նույն գազերն ու գոլորշիները, վրբ ստացվում են փայտն առանց ողի հոսանքի տաքացնելիս: Այդ գազերն ու գոլորշիները հենց կազմում են բոցի ներքին մասը:

Նույն ձևով մոմի բոցի մեջ էլ գազեր ու գոլորշիներ են գտնվում. դրանք ստեղծելիս չոր թորման պրոդուկտներն են:

▲ Փորձ. 3 Փորձեր կատարեցեք մոմի վրա տաքացրած ապակե խողովակի սպիրտայրոցի նրա բոցի միջին մասից գազեր դուրս բերելով (ինչպես այդ արիք նախորդ փորձի ժամանակ), (նկ. 68): Ուշադրություն դարձրեք այդ գազերի սուր հոտի վրա, վրբ նման չի մոմի նյութի հոտին: ▲

Գիտելով մոմի բոցը և այն համեմատելով սպիրտայրոցի բոցի հետ՝ մենք ելյական մի տարբերություն ենք նկատում—մոմի բոցի լուսավոր լինելն է այդ. իսկ թիչից է այդ կախված:

▲ Փորձ. 4. Մոմի բոցի վերին մասը մեջ վրբեք սուր մարմին մացրեք—բաժակ, դանակ, դավաթ: Գուցե կնկատեք, վրբ ամանի վրա մուր է առաջանում, այսինքն ածխի մասնիկներ: ▲

▲ Մոմի բոցը կարելի չի դարձնել և վաշ լուսատու: Գրա համար զոչոչ խողովակի ողնությամբ (բերանը դնելուց առաջ խողովակն ախտահանեցեք, այսինքն ծայրը տաքացրեք սպիրտայրոցի բոցի վրա և ապա ստեղծեք), բոցի մեջ ողի հոսանք փչեցեք (նկ. 69): Ստացվում է համարյա անլուսատու բոց: Այդ բոցի մեջ սուր մարմին մացրեք: Նրա վրա մուր չի նստում: ▲



Նկ. 68. Չոր թորման պրոդուկտների մոմի բոցից դուրս բերելը:



Նկ. 69. Մոմի բոցի մեջ ող փչելը:

Մեք կատարած դիտողություններն ստիպում են յենթադրել, վրբ բոցի մեջ ածխածնի մասնիկների առաջացումն է հենց մոմի բոցի լուսատու լինելու պատճառը: Այդ յենթադրությունը հաստատվում է նրանով, վրբ նյութեր կան, վրբոնք վաշ միայն լուսատու բոցով են վառվում: այլ այդ ժամանակ նաև ծխում են մուր անջատելով, ինչպես որինակ՝ նավթը: Այստեղ ածխի մասնիկները, դեռ չայրված, մասամբ բոցից անջատվում են, իսկ մոմի բոցի մեջ առաջացած ածխի մասնիկները բոցի արտաքին մասում այրվում են, այդ պատճառով էլ մոմը մուր չի տալիս:

Ողի ուժեղ հոսանքի ժամանակ (լամպերի մեջ) նավթը նույնպես այրվում է առանց ծուխ տալու: Ողի ուժեղ հոսանք է ստացվում ապակե շնորհիվ, վրբ մեղ ձգողություն է առաջանում, ինչպես խողովակի մեջ (նկ. 70 ողի մուգը ցույց է արված սղաքներով):

«Գրիմուսի» մեջ նավթի գոլորշիների բարակ հոսանքը լավ խտնվում է ողի հետ՝ և բոցը դարձյալ ծուխ չի տալիս:


Յեթե հիշենք, թե վրբ նյութերն են այրվում պայծառ լուսատու բոցով, բանից դուրս կգա, վրբ դրանք այնպիսի նյութատու բոցով,

թեք են, ինչպես՝ մագնեզիումը, ֆոսֆորը, կալցիումը, վարսնց
այրման պրոպուլսաները կարծր նյութեր են (MgO, P_2O_5, CaO):
Իսկ այն նյութերը, վարսնց այրման պրոպուլսաները գաղափին
նյութեր են, որոնք այրվում են թույլ, քիչ լուսատու բոցով,
ինչպես ջրածինը, ծծուկը:

Գրա պատճառն այն է, վոր շիկացրած պինդ նյութերն
ավելի պայծառ լույս են տալիս, քան շիկացած գազերը:

Այժմ արգեն մենք կարող ենք պարզ պատկերացնել մոմի
բոցի և այլ սրղանական նյութերի լուսատու լինելու պատճառը:
Այդ նյութերը հարուստ են ածխածնով, վորը բոցի մեջ կատար-
վող չոր թորման պրոցեսի ժամանակ անջատվում է աղաստ վի-
ճակում՝ վորպես մուր: Շիկացրած մրի մասնիկներն են, վոր

լույս են տալիս: Բոցի արտա-
քին մասում մուրը կարող է կամ
ամբողջությամբ այրվել, ինչ-
պես՝ որինակ մոմի բոցի մեջ,
կարող է և մասամբ անջատ-
վել աղաստ վիճակում, ինչպես՝
Նավթի (առանց ապակու այրվող),
սկիպիդաբի, յուղի, մասամբ ել
փայտի (սե ծուխ) և այլ նյութ-
երի բոցի մեջ: Ողի ուժեղա-
ցած հոսանքը կարող է այդ
դարձնել չժխացող և լույս չտվող
բոց: Վերջին գեպում, շնորհիվ
այն հանգամանքի, վոր չոր թոր-
ման պրոպուլսաները խառնվում
են ողի թթվածնի հետ, ածխա-
ծինը չի կարողանում անջատվել



Նկ. 70. Նավթի լամպեր:


աղաստ վիճակում, վորովհետև դեռ գուրս չեկամ՝ լրիվ չափով
խփույն այրվում է և առաջ բերում ածխաթթու գազ (որգանա-
կան նյութերի մեջ յեղած ջրածինը տալիս է ջրային գոլորշի):

Ավելի քիչ ածխածին պարունակող որգանական նյութերն
այրվում են քիչ լուսատու և չժխող բոցով, ինչպես սպիրտը.
(սպիրտը պարունակում է $52\%_0$ ածխածին, մինչդեռ ստեարինը—
 $76\%_0$, սկիպիդաբը— $88\%_0$):

1. Ի՞նչ կպատահի, յեթե անոթը ծծմբի գոլորշիներով լցնենք, գոլորշի-
ներն այրենք անոթի բերանին մոտ և ապա անոթի մեջ խողովակի միջով
թթվածնի հոսանք անցկացնենք:
2. Բոցավառման ցածր ջերմաստիճան ունեցող յերկու նյութերի անուն
ավեր:
3. Վնք նյութերն են կոչվում հրավառանգ:
4. Ինչու այրվող բենզինը և կերոսինը ջրով չի կարելի հանգցնել:
5. Մտաբերեցեք կրակ առաջացնելու նախնական ձեերը:
6. Ի՞նչ է շշոր թորումը:
7. Ի՞նչ է կոքոը և ի՞նչի համար են գործածում:
8. Ջերմաստիճանը ի՞նչպես է բախշվում բոցի մեջ:
9. Ի՞նչպես պետք է բարձրացնել բոցի ջերմաստիճանը:
10. Ի՞նչից է կախված որգանական նյութերի բոցի լուսատու լինելը:
11. Բերեք նյութերի որինակներ, վորոնք այրվում են որոնք քիչ լու-
սատու բոցով:
12. Ինչու ստեարինը դալի մեջ այրելիս ծխում է, իսկ ստեարինեմոմի
բոցը չի ծխում:

5. Մծխածին ուսիդ: գեներատորի գազ: Որգանական նյութ-
երի այրման ժամանակ, յերբ ողի հոսանքն անբավարար է լի-
նում, բոցի ածխաթթու գազից՝ CO_2 , առաջանում է նաև ած-
խածնի մի այլ սքսիդ—ածխածինուսիդը կամ շմուլազազը՝ CO :


Ածխածին սքսիդ է ստացվում նաև այն ժամանակ, յերբ
ուժեղ կերպով շիկացած ածխի վրայով ածխաթթու գազ են անց-
կացնում: Ածուխն ածխաթթու գազի մուկեղուլից խլում է մի
ատոմ թթվածին և ստացվում է յերկու մուկեղուլ ածխածին
սքսիդ:



Վորքան սոժուխն ուժեղ է շիկացած, այնքան էլ շատ ած-
խածին սքսիդ է ստացվում: Ածուխը թույլ շիկանալիս բոլորովին
շմուլ չի ստաջանում:

Ածխածին սքսիդ կարելի յե ստանալ այսպես.
Ածուխը տեղավորում են յերկաթյա A խողովակի մեջ (Նկ.
71) և խողովակը B կրակարանի վրա շիկացնում են: Շիկացրած
խողովակի միջով անց են կացնում ածխաթթու գազ, վոր ստաց-
վում է նկարի ձախ կողմի անոթի մեջ՝ մարմարի վրա աղաթթվի


միջոցով ներգործելով: Խողովակի մեջ՝ ածխածին գազն ածխի հետ սեռեցրած յե տալիս՝ առաջացնելով ածխածին սրսիզ: Ած-



Նկ. 71. Ածխածին սրսիզի ստացումը:

խածին գազի ավելցուկը մտնում է B խողովակի մեջ: Առաջացող ածխածին սրսիզը հավաքում են փորձանոթի մեջ՝ ջրի վրա: Փորձը կարելի յե կատարել միայն ող քաղցր պահապանի մեջ:

Ածխածին սրսիզը շատ ուժեղ բույն է: Ածխածին սրսիզի ամենաանհրաժեշտ խառնուրդն ողի հետ թունավորում է առաջացնում (շմու), փորին ուղեկցում է զլխացավ և աղմուկ ականջներում: Իսկ ըստ ծավալի 1% խառնուրդն ողը դարձնում է շատ թունավոր և այդ ողի նույնիսկ կարճատև ներշնչումը թունավորման լուրջ հետևանք է ունենում—գրասակցության կորուստ և վերջապես—մահ: Ածխածին սրսիզով լուրջ թունավորվելու ժամանակ անհրաժեշտ է թունավորվողին նախ և առաջ դուրս տանել մաքուր ողի մեջ: Յեթե այդ չտոնի, ապա պետք է մարմինը տրորել և մաքուր թթվածինով արհեստական շնչառություն առաջացնել:




Նկ. 72. Ինքնայեղ կարվածքը:

Այրվող ածխածին սրսիզի բոցը կարելի յե տեսնել վառարանը վառելու ժամանակ: Այդ կապակույն այն բոցերն են, վորտեք նկատելի յեն շիկացրած ածխի վրա, յերբ փայտն արղեն վառվել է և մտնում

են ածխի դեռ ամբողջովին չվառված մասեր: Այդ նույն բոցերը տեսանելի յեն ինքնայեղի մեջ, յերբ դեռ նրա մեջ շիկացած շատ ածուխ է լինում:


Ածխածին սրսիզի այրման գեպքում ստացվում է ածխածին գազ՝ CO₂:




Ինքը՝ ածխածին սրսիզն անգույն, անհոտ գազ է, ջրում թիչ է լուծվում և ողից թիչ թեթև է:

Իսկ ինչպես է առաջանում ածխածին սրսիզը հեղատայեղում (ինքնայեղում). ինքնայեղի կարվածքը ցույց է տրված 72-րդ նկարում: Նրա ներքի խողովակը լցված է շիկացած ածխով: Ներքեից ցանցի միջով մտնում է ողը: Ածխի այրման ժամանակ առաջանում է ածխածին գազ, վորը վերին շերտերի շիկացած ածխի հետ սեռեցրած յե տալիս և առաջ է բերում ածխածին սրսիզ: Ածխածին սրսիզը ինքնայեղի խողովակից անցնում է խահանցի ծիսնելույզը:


Յեթե ածխի այրումից առաջ, այսինքն՝ յերբ դեռ ածուխն զգալի չափով չի պակասել, ինքնայեղի խողովակը հանկեր, այդ գեպքում առաջացող ածխածին սրսիզը մասամբ այրվում է ի հաշիվ վերեից մտնող ողի, մասամբ էլ լցվում է սենյակը, և մարղիկ կարող են թունավորվել—«շմու ընկնել»: Իսկ յեթե ինքնայեղի մեջ ածուխ թիչ մնա, այդ գեպքում ներքի անողից մտնող



Նկ. 73.



Նկ. 74.



Նկ. 75.

Ածխածին սրսիզի և ածխածին գազի առաջացումը սենյակի վառարանում (կարվածքը):

թիվածնի քանակությունը բավական է, վորպեսզի առաջացող
ածխածին սրսիզն ամբողջութեամբ այրվի: Բաղի այդ, շմոյն ել
քիչ է առաջանում, վորովհետև անուխն ամբողջութեամբ բնորոշ
ված լինելով ոտով, ամբողջովին կայրվի և կտա անխաթթու
զազ: Ածխածին սրսիզ չի առաջանում նաև այն դեպքում, յեթե
մեծ քանակութեամբ անուխն պարունակող ինքնայնոր կախարի-
ով ծածկենք: Շնորհիվ այն բանին, վոր ողի հոսանքը պակա-
նում է, դրանով անխի ջերմաստիճանն իջնում է, և անխածին
սրսիզի առաջացումը դադարում է:

73-րդ, 74-րդ, 75-րդ նկարները ցույց են տալիս, թե սե-
նյակի վառարանում ինչ պայմաններում է առաջանում անխա-
ծին սրսիզ:

73-րդ նկարում վառարանի մեջ անուխ շատ կա: Խողո-
վակը բաց է: Ողը ներս է մտնում նրա շուրջը յեղած բոլոր
անցքերից: Ածխի այրման ժամանակ առաջանում է անխաթթու
զազ, վորն անխի կույտի վերին շերտերում շիկացած անխի հետ
սեղանակալի մեջ է մտնում և առաջացնում անխածին սրսիզ:
Ածխածին սրսիզը դուրս գալով անխի կույտի յերեսը, այնտեղ
այրվում է յեկող թիվածնի մեջ կայտառվուն բոցով: Ածխաթթու
զազը և ողի աղոտը միասին խողովակով դուրս են գալիս:

74-րդ նկարում խողովակը ծածկված է ժամանակից ա-
ռաջ, յերբ դեռ անուխ շատ կա և ուժեղ կերպով շիկացած է:
Ներքեից վառարանի մեջ պազ ող է մտնում, իսկ այրման տաք
սրսիզները և ողի աղոտը դեպի խողովակը յերջ չուեննալով՝
դուրս են գալիս վառարանից, դռն վրայի ճեղքից: Ինչպես և
առաջին դեպքում, առաջացած անխածին սրսիզն արդեն չի
այրվում, վորովհետև ողի բավարար հոսանք չկա, և անխաթթու
զազի ու աղոտի հետ միասին դուրս է դնում:

75-րդ նկարում խողովակը ծածկված է ժամանակին, յերբ
անուխն արդեն քիչ է մնացել: Անուխը վառարանի հատակին
փռված լինելով այնքան էլ չի շիկացած, ինչպես կույտի ձևով
յեղած ժամանակ: Ածխածին սրսիզ կամ չի առաջանում, կամ
առաջանում է չնչին չափով, և դրսից մուտք գործող սղր բա-
վական է, վոր նա լրիվ չափով աւրվի: Վառարանի ճեղքից
դուրս է գալիս վոչ թունավոր անխաթթու զազը: Հիմա արդեն

պարզ է, թե ինչու վառարանը չի կարելի փակել, քանի դեռ
անուխը շատ է և ուժեղ շիկացած է:

Ուսանելի յե այսպիսի մի փորձ կատարել: Յերբ վառա-
րանում քիչ անուխ մնա, հավաքեցեք, կույտ կազմեցեք, կույտի
վրա իսկույն այրվող անխածին սրսիզի կայտառվուն բոցեր կա-
ռաջանան: Յեթե նորից անուխը հավասար շերտով վառարանի
հատակին փռեք, անուխն ավելի մուգ գույն կտանա և անխի
վրայի բոցերն իսկույն կանհետանան: Շիկացած անխի հետ
անխաթթու զազի շիման պայմաններ արդեն չեն լինի և ան-
խածին սրսիզ այլևս չի առաջանա:

Այս օրինակից յերևում է, վոր վառարանը վառելու ըստ
յերևույթին շատ պարզ թվացող սլրոցեսը պարզ հասկանալու և
այդ սլրոցեսը զխտակցարար դեկավարելու համար անհրաժեշտ է
ծանոթանալ այդ սեղանակալի ժամանակ սաացվող նյութերի ա-
ռաջացման պայմաններին ու հատկութեաններին:

Ածխածին սրսիզի առաջացման պայմաններին ուսումնասի-
րութեան վրա մի շարք գիտնականներ են աշխատել:

Պետք է կանգ առնել նաև այն հարցի վրա, թե «Շմոյի հոս»
կարո՞ղ է լինել: Չէ վոր անխածին սրսիզն ինքը հոտ չունի:
Իսկ վիրտեզից և առաջացել այն կարծիքը, թե շմոյը հոտ ու-
նի: Բանն այն է, վոր անխածին սրսիզի առաջացման ամենա-
լավ պայմանը մեծ քանակութեամբ անուխը և նշտ բարձր ջեր-
մաստիճանն է: Իսկ այդ լինում է այն ժամանակ, յերբ վառարան
ամբողջապես անխացել է և մնացել են միայն մեկ-յեկու ծխա-
ցող մանր փայտիկներ:

Մենք ծխի բնորոշ հոտ ենք ասնում: Միաժամանակ ողի
մեջ է տարածվում և անխածին սրսիզը, այդպիսով, ծխի հոտն
առնելով, միաժամանակ մենք կարող ենք ճշմոյ ընկնել: Շու-
խը մեզ նախազգուշացնում է անխածին սրսիզով թունավորվելու
հնարավորութեան մասին:


Սակայն անխածին սրսիզ կարող է առաջանալ, այն էլ բա-
վական քանակութեամբ, նաև այն ժամանակ, յերբ կա միայն
մաքուր անուխ, փայտի կտորաանքը բոլորն այրվել են, և ծխի
հոտ չի գալիս: Այդպիսի դեպքում մարդ ճշմոյ է ընկնում՝
միանգամայն աննկատելի կերպով և կարող է թունավորվել ու
մեռնել:

Անհրամեշտ և հիշատակելի, վոր ամխածին քքսիդ և առաջանում նաև փայտի չոր թորման ժամանակ, հետևաբար և փայտի այրման ժամանակ, յերբ ողն այդ այրման համար քիչ և մատչելի: Այսպիսի պայմաններ կառեղծվեն նաև վաղ փակված վառարաններում, յերբ դեռ նրա մեջ լրիվ չայրված փայտի կտորներ կան, կամ հեշտայեռի մեջ, յերբ դեռ ամբողջ ամուխը կրակ չի գարձել:

Ածխածին քքսիդ կա լուսագազի մեջ: Այդ պատճառով ել պեռք և հետևել, վոր զազատար խողովակների ծորակները միշտ լավ փակված լինեն: Կուսատու զազից թունավորվելու շատ դեպքեր են հայտնի:

Ածխածին քքսիդի հատկությունների ուսումնասիրությունը ցույց և տալիս, վոր նրա այրման ժամանակ մեծ քանակությամբ ստաբիլում և անջատվում, վոր նրա բոցի ջերմաստիճանը շատ բարձր է—մոտ 1400°: Այդ պատճառով ել վառարանները վառելիս անհրամեշտ և ողի հոսանքը կանոնավորել այնպես, վոր ամխածին քքսիդը չցնդի խողովակի մեջ, վորովհետև այդ ուղղակի վնաս կլինի: Այնպես պետք է անել, վոր վառարանում առաջացած ամխածին քքսիդը վառարանի մեջ այրվի ու տաքությունը վառարանի պատերին տա: Այդ բանին առանձնապես կարևոր է հետևել զործարանային վառարանները վառելիս, վորտեղ հսկայական քանակությամբ վառելանյութ է վառվում և վորտեղ առանձնապես կարևոր է նրա տված տաքությունն ամբողջովին ոգտագործել:

Ածխածին քքսիդի հատկություններն իմանալը հնարավորություն է տալիս այդ սարսափելի թունավոր զազն ոգտագործել տեխնիկական նպատակների համար՝ վորպես




Նկ 76. Գազը զազազենեբատոր (կտրվածք):

պես վառելանյութ: Տեխնիկայում ամխածին քքսիդն ստացվում է նույն պայմաններում, ինչպես վոր նա հեշտայեռի մեջ է առաջանում, բայց ավելի մեծ մասշտաբով:

76-րդ նկարում պատկերված է ամխածին քքսիդ ստանալու վառարանը կամ այսպես կոչվող զազազենեբատորը (հասարակ): Յեթե զազազենեբատորի մեջ մեծ շերտով կոքս ածենք, վառենք ու ներքևից ող փչենք, կոքսը կվառվի և կառաջացնի ամխաթթու գազ: Յերբ կոքսը սաստիկ շիկանում է, վերին շերտերում, վորտեղ ողի ավելցուկ չկա, սկսում է ամխածին օքսիդ առաջանալ: Վերջին հաշիվով ստացվում է ամխածին քքսիդ, քիչ քանակությամբ ամխաթթու գազի և ազոտի խառնուրդ: Այդ խառնուրդը կոչվում է զենեբատորի գազ: Այդ գազը զազազենեբատորից խողովակով մղվում է վառարանի մեջ, վորտեղ և այրվում է: Կոքսն այրվելուն զուգընթաց՝ նորից վերևի ձագարի միջով գենեբատորի մեջ կոքս են ավելացնում: Զագարը ծածկված է յերկու կափարիչով, վորպեսզի թունավոր ամխածին քքսիդը չենքի մեջ շտաբածվի: Մկրում բաց են անում վերևի կափարիչը, և ձագարի մեջ կոքս են լցնում: Այդ վերևի կափարիչը փակվում է, իսկ ներքևի կոնանն կափարիչն իջնում է դեպի ցած: Այդ ժամանակ վառելանյութը թափվում է գենեբատորի մեջ, վորից հետո կոնանն կափարիչը նորից բարձրանում է վեր ու փակում անցքը:

Յեթե կոքսի փոխարեն քարածուխ վերցնենք, այդ դեպքում ամխածին քքսիդին և ազոտին խառնվում են նաև փոքր քանակությամբ քարածխի չոր թորման այրվող պրոդուկտները: Գենեբատորներ են կառուցում նաև այլ տեսակի վառելանյութերի համար:


Գենեբատորի գազը զործադրում են այնտեղ, ուր անհրամեշտ և ուժեղ և համաչափ տաքացում, որինակ՝ ապակի «չեփելու» և պողպատ հալելու համար:



Նկ. 77. Փորձ, վոր ցույց և տալիս ցնցուղի զործողությունը նավթի համար:

Նկուկ վառելանյութ. նավթը և նավթային մացորդները (ժազութը) վոր ստացվում է նավթի թորման ժամանակ, այրում են այսպես կոչված

ՖորսուՅներ (բացահրչներ) ոգնությամբ, վորոնց գործողությունը կարելի չի համեմատել վարավորանոցներում կիրառվող սրակիչի փորձողության հետ: ՖորսուՅնի աշխատանքը կարելի չի ցույց տալ հետևյալ ձևով (Նկ. 77): Փորձանոթն ամբողջությամբ լցնում են նավթով, նրա մեջ մտցնում են




ՓՈՐՁՈՅՆ-ՎԱՐՍՅ

Նկ 78. ՖորսուՅն (առաջին մասի կտրվածքը):

Համանման յեղանակով է գործում և գործարանային ֆորսուՅնը (Նկ. 78): Նրա մեջ մի խողովակով նավթ կամ մագնեթ է գալիս, մյուս խողովակով խտացրած ոդ կամ գոլորչի, վորը և փոշիացնում և նավթը (բացի 78-րդ նկարում ցույց տված ֆորսուՅնից, կան և այլ կազմության ֆորսուՅներ):

Հեղուկ վառելանյութերի գործադրումը հսկայական հարմարություններ է ներկայացնում: Կանոնավորելով նավթի և ոդի մուտքը, հեշտությամբ կարելի չի կարգավորել վառելանյութի լրիվ այրումը և ամենաբարձր ջերմաստիճանը, իսկ բոցը տաքացվող մակերեսին ուղղելով՝ կարելի չի հասնել տաքության փոխադրման ամենալավ ձևին:

